

Լուսաւոր

1984

Գ

Հտ 196

ԽԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Մ...ԻԴ

1984

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

«Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա» (Ա Կորնթ. ԺԲ 26):

«Եթե Եկեղեցու մի անդամը վշտի մեջ է, վշտակից են լինում նրա հետ մյուս անդամները»:

Պողոս առաքյալը այս խոսքերով ուզում է հիշեցնել մեզ և ընդգծել միասնությունը, եղբայրությունը Եկեղեցու անդամների միջև՝ լինեն նրանք հոգևորական կամ աշխարհական, որոնք մի հոգևոր եղբայրություն են կազմում: Նա ասում է՝ եթե այդ անդամներից մեկը վշտի կամ ցավի մեջ է, ապա նաև մյուս անդամները վշտակից են լինում նրան: Պողոս առաքյալը առավել պարզելու համար իր մտածումը՝ մարդկային հավաքականությունները, քրիստոնեական համայնքները նմանեցնում է մարդու մարմնին: Ինչպես մի մարդու մարմնի մեկ անդամը երբ հիվանդ վիճակում է, ապա մարմնի նաև մյուս անդամները հիվանդ կացության մեջ են գտնվում, այդպես էլ Եկեղեցու կյանքում, համայնական կյանքում սերտ միասնություն կա անհատի և համայնքի միջև:

Այս խոսքերով ահա Մենք ուզում ենք այսօր Մեր սիրտը բաց անել ձեր առաջ՝ հայտնելու համար Մեր վիշտը, մեր բոլորիս վիշտը, որովհետև մեր Եկեղեցու, մեր միաբանության ամենակարկառուն անդամներից մեկը՝ Սերովբե արքեպ. Մանուկյանը, անակնկալ և վաղաժամ կերպով ի Տեր հանգյավ, իր հո-

գին ավանդեց սրանից մի քանի օրեր առաջ, իր պաշտոնատեղիում՝ Փարիզում:

Ինչպես գիտեք, նա երեսուն տարիներից ի վեր հոգևոր առաջնորդն էր Ֆրանսիայի հայերի և Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրների՝ Իտալիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Հոլանդիայի: Նա Մեր ամենամոտիկ գործակիցներից մեկն էր հենց առաջին իսկ օրվանից, երբ Մենք նրան ճանաչեցինք այստեղ՝ Ս. Էջմիածնի կամարների ներքև: Նա մեծ վաստակ ունեցող Մեր եղբայրներից էր, հոգով-սրտով կապված Մայր Աթոռիս հետ, Հայաստանի հետ, Հայաստանի ժողովրդի հետ, մտավորականների հետ, որոնց հետ ինքը սիրում էր հարաբերության մեջ լինել և մտքերի փոխանակություն կատարել: Նա ամեն տարի կարոտով, անսահման կարոտով, տարին երկու անգամ մոտավորապես, այցելում էր մայր հայրենիք: Հենց դժբախտ օրից մի քանի օր առաջ Մենք նրա հետ հեռախոսով կապվեցինք, խոսեցինք. առողջ էր, իրեն լավ էր զգում, նույնիսկ հայտնեց Մեզ, թե արդեն կարոտել է Հայաստանը, Ս. Էջմիածինը և գարունը բացվելուն պես կրկին այցի է գալու Հայաստան: Եվ սակայն այդ հնարավոր չեղավ: Նա իր աչքերը փակեց հավետ՝ սուգի մեջ թողնելով մեզ բոլորիս և համայն Հայաստանյայց Եկեղեցին:

Վշտակցության բաղում հեռագրեր ստացանք ոչ միայն արտասահմանի հայ եկեղեցական կենտրոններից, այլ նաև մեր քույր Եկեղեցիներից՝ Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցուց, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուց, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից, Փարիզի կարդինալ արքեպիսկոպոսի կողմից և ուրիշներից:

Թաղումը տեղի ունեցավ Փարիզում երեկ, և Մեր հոգևոր եղբայրներից շատերը գնացին իրենց հարգանքի տուրքը մատուցելու Սերովբե արքեպիսկոպոսի դագաղի առաջ: Գնաց Երուսաղեմի հայոց Պատրիարքը: Գնացին Միացյալ Նահանգների հայոց հոգևոր առաջնորդը և ուրիշներ: Մենք Մայր Աթոռից, մեր բոլորի անունից, ուղարկեցինք Մայր Աթոռիս դիվանապետ Ներսես եպս. Պոլապալյանին, որպեսզի Մեզ ներկայացնի այնտեղ և Մեր սրտի խոսքը կարդա թաղման արարողության առիթով:

Այդ սրտի խոսքը ցանկանում ենք ձեզ կարդալ, ուր ամփոփված են Մեր մտածումները, զգացումները, Մեր սերն ու գնահատանքը Սերովբե արքեպիսկոպոսի նկատմամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐՏԻ ԽՈՍՔԸ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹԱՂՄԱՆ ԱՌԹԻՎ (18 փետրվար 1984 թ.)

Սուգի մեջ է Հայաստանյայց Եկեղեցին, սուգի մեջ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այսօր վշտահար սրտով հողին ենք հանձնում մարմինը Մեր սիրեցյալ եղբոր՝ Տ. Սերովբե արքեպիսկոպոսի, որ անժամանակ ի Տեր հանգյավ իր նվիրական առաքելության ճանապարհին:

Խոնարհվում ենք Աստուծո կամքի առաջ, բայց և ծանրորեն տխուր է Մեր հոգին, որովհետև մեր Մայր Եկեղեցին կորցնում է իր շնորհաշատ մեկ սպասավորին, որ երեսուն տարիներից ի վեր օրինակելի հոգևոր նախանձախնդրությամբ, իմացական արթնությամբ ու հետևողական տոկուն կորովով, նաև երախտագիտությամբ ու հավատարմությամբ հայապաշտպան ֆրանսիական հայրենիքի հանդեպ, ղեկավարում էր Ֆրանսիայի հայոց թեմն ու Արևմտյան Եվրոպայի եկեղեցական համայնքները, իբրև ներշնչարան ու առաջնորդող ոգի ունենալով Քրիստոսի սուրբ Ավետարանը և մեծ Գիրքը հայոց հերոսական պատմության:

Մեծ Եղեռնի որբերից, Վասպուրական աշխարհի տեսիլքը իր սրտում ծրարած, նա պատանի տարիքում հայ Երուսաղեմում ուխտ կատարեց ծառայելու մեր նահատակված Եկեղեցուն ու ժողովրդին և մինչև իր կյանքի վերջին օրը աներեր հաստատ մնաց իր ուխտի վրա անշեղ նվիրումով: Սերովբե վարդապետ, ժրաջան միաբան Սրբոց Հակոբյանց միաբանության, կրթական տեսուչ, ապա հոգևոր հովիվ, ապա եպիսկոպոս և հայրապետական պատվիրակ, նա միշտ, ամեն տեղ, ավելի քան կես դար իր պարտքը յուրովսանն կատարեց, հավատարիմ մնալով իր հոգևոր կոչմանը, պատասխանատվության խոր գիտակցությամբ, իբրև հովիվ քաջ ու բարի, գնահատված, սիրված բոլորից:

Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան հարապատ գործակիցն էր նաև Մայր Աթոռիս, իբրև անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, որ Սուրբ Էջմիածին հաճախակի այցելություններով իր կարևոր մասնակցությունն էր բերում

մեր աշխատանքներին, իր օրինապահ կեցվածքով ու անաչառ մտորումներով: Մենք նրան գնահատում, հարգում և սիրում էինք իբրև հարազատ եղբոր, իբրև հավատավոր կղերականի, իբրև մտքով պայծառ մտավորականի, իբրև անպիշող պաշտպանի մեր Եկեղեցվո իրավանց ու ավանդությանց:

Սերովբե արքեպիսկոպոս, որ իր սրտի խորքում տևապես վառ էր պահպանել իր կորցրած Վասպուրական աշխարհի շունչը, իր հայրենատենչ հոգու ծարավը հագեցնում էր ամեն անգամ, երբ այցի էր գալիս Հայաստան, հրճվում ու մխիթարվում էր ի տես հայրենաշեն վերելքի ու մշակութային իրագործումների: Վերածնված հայրենիքի վեմի վրա ամուր կանգնած, Սերովբե սրբազանի համար հայոց ազգային դատի արդար լուծումը ոչ միայն երազանք էր, այլև հաստատ ստուգություն:

Եվ ահա այսպես, հանգուցյալը բաժանվում է մեզանից, բաժանվում է այս անցավոր աշխարհից ու անցնում մյուս ափը կյանքի, ափը հավերժական կյանքի:

Միածին Որդու Իշման Սուրբ Տաճարից և Մեր սրտից օրհնություն և լույս և հավիտենական հանգիստ Սերովբե սրբազան Մեր եղբոր քաղցր հոգվույն:

Եվ Մայր հայրենիքից մի խաչքար ու մի բուռ հող իր գերեզմանին:

«Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափեցաւ: Եւ Բան Տեառն մնայ յաւիտեան» (Ա Պետրոս Ա 24): Ամեն:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՇՅԱՆԻՆ

Փարիզ

Խոր վշտով ստացանք Ձեր հեռագիրը Սերովբե արքեպիսկոպոսի վաղաժամ մահը գուժող: Մեր Մայր Եկեղեցին և Սուրբ Էջմիածինը ծանր կորուստ կկրեն: Բոլորս սուգի մեջ կաղոթենք Մեր սիրեցյալ եղբոր արդար հոգվույն համար: Օրհնություն և լույս իր մեծ վաստակին և բարի հիշատակին: Ընդունեցեք Մեր սրտագին ցավակցությունները:

Թաղման արարողության պիտի մասնակցի Մայր Աթոռիս դիվանապետ Ներսես եպիսկոպոս Պողապալյանը իբրև Մեր ներկայացուցիչը, որ պիտի ընթերցե Մեր խոսքը:

Թող Տերը անսասան պահե մեր Եկեղեցին և Ձեզ մխիթարե Սուրբ Հոգվով:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
9 փետրվարի 1984 թ.



Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Էջմիածին, Երևան

Խորապես վշտացանք իմանալով սիրելի Սերովբե Մանուկյան սրբազանի հանկարծահաս մահվան տխուր լուրը: Կաղոթենք Տիրոջը իր հոգվո հավիտենական հանգիստին համար: Մեր ցավակցությունները հաղորդած ենք արդեն Փարիզի եկեղեցական իշխանություններուն: Կբաժնենք Ձեր վիշտը և սուգը, որոնք նաև ամբողջ Հայ Եկեղեցիինն են: Իր հիշատակը կենդանի պիտի մնա բոլորիս համար: Կհայցենք ամենակարող Աստուծմե, որ Ձերդ Ս. Օծության մարգևե երկար և քաջառողջ կյանք, որպեսզի կարենաք շարունակել Ձեր հոգևոր և ազգային առաքելությունը Հայ Եկեղեցիին և ժողովուրդին համար:

Հոգեհանգստյան արարողությունը տեղի կունենա կիրակի օրը, փետրվարի 19-ին Անթիլիասի Մայր տաճարին մեջ:

Եղբայրական սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Հալեպ,
15 փետրվարի 1984 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Իմացանք Մանուկյան սրբազանի մահվան լուրը: Հայտնելով իմ խորին ցավակցությունները՝ վստահեցնում եմ Ձեզ, որ կմնամ աղոթող Ձեզնից բաժանված Ձեր սիրելի եղբոր և Ֆրանսիայի Ձեր ողջ համայնքի համար:

Հարգալից սիրով՝

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍ

Վատիկան,
10 փետրվարի 1984 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Էջմիածին, Հայաստան

Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Լյուստիժեն խորապես վշտացած Փարիզի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի մահվամբ՝ վստահեցնում է Նորին Սրբություն Վազգեն Առաջինին, որ կմնա աղոթող Արևմտյան Եվրոպայի իր սիրելի գործակցի համար:

Թող մեր հասարակաց Փրկիչը հանգուցյալ Սերովբե Մանուկյանին շնորհի խոստացված խաղաղությունը:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵ

Փարիզ,
10 փետրվարի 1984 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին

Ձերդ Սրբություն, ընդունեցեք Մեր անկեղծ վշտակցությունը Հայ Առաքելական Եկեղեցու ավագագույն հոգևոր պետերից մեկի՝ Արևմտյան Եվրոպայի արքեպիսկոպոս Սերովբե Մանուկյանի մահվան առթիվ: Մենք անձամբ ճանաչում էինք նրան և խոր հարգանք տածում նրա հանդեպ, գնահատում էինք նրա բարեկամական վերաբերմունքը Ռուս Պրավուլավ Եկեղեցու նկատմամբ: Թող Աստված նրա հոգին բնակեցնի բարեպաշտների օթևանում:

ՖԻԼԱՐԵՏ
ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ,
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԷԿԶԱՐԽ

Մոսկվա,
10 փետրվարի 1984 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Սովետական Հայաստան

Խորին վշտով տեղեկացա Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի կորստի մասին: Նրա մահով Հայ Եկեղեցին կորցնում է իր անվանի բարձրաստիճան և օրինակելի հոգևորականներից մեկին: Որպես Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, նա նվիրումով և արժանավորությամբ ծառայեց Մայր Աթոռին և հայ ժողովրդին: Նրա սերն ու նվիրումը Ս. Էջմիածնի հանդեպ՝ անբասիր էին:

Տիկին Մանուկյանը միանում է՝ ինձ՝ հղելու մեր սրտագին ցավակցությունները Ձեզ և Սուրբ Էջմիածնին՝ Հայ Եկեղեցու կրած այս մեծ կորստի համար: Թող նրա հոգին հանգչի խաղաղության մեջ:

Հարգանոք, Ձեր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տեյլոր (ԱՄՆ),
10 փետրվարի 1984 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Հայաստան, ՍՍՀՄ

Բոլորս տխրեցինք և խորապես վշտացանք Նորին Գերաշնորհություն Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի անակնկալ մահվամբ: Նրա կորուստը երկար ժամանակ պիտի զգացվի հատկապես Ֆրանսիայի հայկական համայնքում, և նրա հիշատակը միշտ պիտի մնա անթառամ:

Մեր հիմնարկության վարչական մարմնի, անձամբ իմ և հայկական գործերի բաժնի անունից Ձերդ Սրբությանը ներկայացնում եմ սրտագին ցավակցություններ:

Հարգանոք՝

ՌՈԲԵՐՏՈ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

Լիսաբոն,
15 փետրվարի 1984 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Ի ՊԱՏԱՍԽԱՆ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԻ

Խորապես զգացվեցինք ստանալով Ձեր ցավակցական հեռագիրը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոսի անժամանակ մահվան առթիվ:

Իրոք, հանգուցյալը մեր Եկեղեցու արժանավորագույն և վաստակաշատ սպասավորներից մեկն էր, որը հանգչավ ի Տեր իր պարտքը կատարած Աստուծո և մեր հավատացյալ ժողովրդի հանդեպ:

Բարի եղեք ընդունել մեր շնորհակալությունը և ջերմ մաղթանքը Ձեր քաջառողջության համար:

Աղոթող ենք, որ Ձեր հոգևոր բարձր առաքելությունը լինի միշտ պտղառատ և աստվածահաճո:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
17 փետրվարի 1984 թ.

ՀԱՆԳԻՍ

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

1984 թվականի փետրվարի 7-ին Փարիզում, կյանքի 76-րդ տարում, հանկարծամահ եղավ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ծնվել է 1908 թվականին պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Ծվընտան գյուղում, երկրագործ գյուղացու ընտանիքում:

1915 թվականի հայկական ցեղասպանության արյունոտ օրերին, Վասպուրականից հայկական մեծ գաղթականության խմբերի հետ, Սալմաստի վրայով հասնում է Պարսկաստան: Բաժանելով իր բազմահազար հայրենակիցների տխուր ճակատագիրը և կորցնելով իր բոլոր հարազատներին՝ նա ընկնում է Նահրը-Օմարի (Իրաք) հայկական որբանոց, իսկ այնտեղից էլ՝ Երուսաղեմի Արարատյան որբանոց:

1924 թվականին ընդունվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարան: Ուսումնածարավ պատանու առաջ բացվում են ուսման և գիտության դռները: Ուսումնառության տարիներին իմացապես և բարոյապես կազմավորվելով ու դաստիարակվելով երանաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի և երանաշնորհ Տ. Բաբկեն արքեպիսկոպոս Կյուլեսերյանի շնչի տակ և հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի դասարանական ու լսարանական բաժինները՝ 1930 թվականին Երուսաղեմի հայոց վանքի Մայր տաճարում ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ պատրիարքարանի լուսարարապետ և պատրիարքական տեղապահ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի ձեռամբ:

1931 թվականին, վանական իշխանության կողմից, որպես Կյուլպենկյան սան, ուղարկվում է Լոնդոն՝ տեղի համալսարանում հետևելու աստվածաբանական և սուրբգրականմեկնողական դասընթացներին:

1933 թվականին կայուն և խոր գիտելիքներով զինված՝ վերադառնում է Երուսաղեմ և տեղի Ժառանգավորաց ու Ս. Թարգմանչաց վարժարաններում լծվում կրթական-դաստիարակչական աշխատանքների:

1935—1936 ուսումնական տարում դասավանդում է Անթիլիասի Դպրեվանքում:

1936 թվականին Սերովբե սրբազանը նշանակվում է Ս. Թարգմանչաց վարժարանի տեսուչ, իսկ 1946 թվականից վարում է նաև Ժառանգավորաց վարժարանի տեսչի պաշտոնը մինչև 1950 թվականը, երբ Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական կոնդակով նրան հաստատում է իբրև նվիրակ Երուսաղեմի աղետյալների համար սփյուռքում հանգանակություն կատարելու: Այդ առթիվ նա լինում է Եվրոպայում, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում և հաջողությամբ կատարում իր առաքելությունը:

1953 թվականին ընտրվում է Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ և նույն տարում Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից նշանակվում հայրապետական լիազոր-պատվիրակ Արևմտյան Եվրոպայի, պաշտոն, որը մեծ ձեռնհասությամբ վարում է մինչև իր կյանքի վերջը:

1955 թվականի հոկտեմբերի 6-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվում Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ձեռամբ:

Որպես Ֆրանսիայի հայոց առաջնորդ Սերովբե արքեպիսկոպոսը օրինակելի բծախնդրությամբ և մեծ նվիրումով ավելի քան 30 տարի ղեկավարել է Ֆրանսահայ թեմը և Իտալիայի, Շվեյցարիայի, Հոլանդիայի ու Բելգիայի հայկական համայնքները՝ արժանանալով իր հայրենասեր և եկեղեցասեր հոտի անվերապահ հարգանքին ու գնահատանքին: Նա եղել է նախաձեռնողը Ֆրանսիայում հայկական նոր եկեղեցիների, կրթական հաստատությունների, ինչպես նաև հայ մշակույթի տան կառուցման:

Ֆրանսիական կառավարությունը, բարձր գնահատելով ֆրանսահայ թեմում նրա երկարամյա հավատարիմ ծառայությունը իր հավատացյալ հոտին և ֆրանսիական հայրենիքին, 1983 թվականին նրան պարգևատրում է «Պատվո լեգեոնի ասպետի» ազգային բարձրագույն շքանշանով:

Սերովբե արքեպիսկոպոսը երկար տարիներ անդամ է եղել Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ որպես այդպիսին մեծապես օգտակար լինելով Հայոց Հայրապետի եկեղեցական, մշակութային և հայրենասիրական բոլոր ձեռնարկումներին: Նա մասնակցել է նաև էկումենիկ համագումարների և միջեկեղեցական մի շարք կարևոր ժողովների ու խորհրդակցությունների, որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ: Հայոց Հայրապետը, ըստ արժանվույն գնահատելով հոգելույս սրբազանի մտավոր ու հոգևոր բարեմասնությունները, արտասահման կատարած իր հովվապետական ուղևորությունների և պաշտոնական այցելությունների ընթացքում հաճախ նրան նշանակել է իր շքախմբի անդամ:

Իր հոգևոր գործունեությանը զուգընթաց, Սերովբե արքեպիսկոպոսը զբաղվել է նաև մտավոր աշխատանքով: Երուսաղեմի Սուրբ Աթոռում պաշտոնավարելու տարինե-

ին եղել է Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի խմբագրական մարմնի անդամ և հիշյալ հանդեսում ստորագրել կրոնաշունչ և հայաշունչ մի շարք արժեքավոր հոդվածներ: Նրա գրչին են պատկանում «Պատմություն Սրբոց Թարգմանչաց վարժարանի» (1948 թ.), «Պատկերագիրք հայ Երուսաղեմի» (1950 թ.) հայերեն և անգլերեն լեզուներով, «Պատմություն Երուսաղեմի հայոց պատրիարքության» գրքերը և այլ աշխատություններ:

Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը իր բազմակողմանի վարգացումով, հայ եկեղեցական և մշակութային արժեքների նկատմամբ իր մեծ նվիրումով, իր ժողովրդասիրությամբ պատվավոր տեղ է գրավում հայ բարձրաստիճան հոգևորականության շարքերում:

Իր ողջ գործունեության ընթացքում նա մնաց հավատարիմ կավակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մայր հայրենիքի: Նա իր ամբողջ էությամբ հոգեպես կապված էր հայրենի իրականությանը և իր հաճախակի այցելություններով հրճվանքով հաստատում էր մայր երկրի հարաճուն վերելքն ու ժողովրդի ձեռք բերած նորանոր նվաճումները գիտության, շինարարության և մշակութային ասպարեզներում:

Նա մշտապես կանգնած էր Ս. Էջմիածնի և մայր հայրենիքի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում:

Սերովբե արքեպիսկոպոսի մահով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կորցնում է իր հավատավոր, հայրենասեր, մեր եկեղեցական դարավոր ավանդությանց նախանձախնդիր, շնորհաշատ սպասավորներից մեկին:

Հարգա՜նք նրա պայծառ հիշատակին:



Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄՆ ՈՒ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի փետրվարի 18-ին, շաբաթ օրը, առավոտյան, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում տեղի է ունեցել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, Փարիզի հայոց առաջնորդ, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ հոգելույս Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի վերջին օծումն ու թաղման կարգը՝ ի ներկայության հայ և օտար բարձրաստիճան պաշտոնական անձնավորությանց և հավատացյալ ժողովրդի:

Վերջին օծման արարողությանը ներկա են եղել հանգուցյալ սրբազանի մահվան առթիվ հատկապես Փարիզ ժամանած Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ՝ Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիպիրյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Մարսելի փոխանորդ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը, Լիոնի փոխանորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը, Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյանը, ինչպես նաև Եվրոպայի կանական քաղաքներից եկած բազմաթիվ հոգևոր հովիվներ՝ հոգեշնորհ վարդապետներ և քահանա հայրեր:

Այս տխուր առիթով, որպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը, Սուրբ Էջմիածնից Փարիզ էր ուղևորվել և վերջին օծման արարողությանը ներկա էր եղել նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը:

Հոգելույս Տ. Սերովբե արքեպիսկոպոսի վերջին օծման կարգին ներկա գտնվող քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներից են եղել՝ Փարիզի և Մարսելի արքեպիսկոպոսներ կարդինալ Ժան Մարի Լյուստիժեի և կարդինալ Ռոժե Էչեգարայի ներկայացուցիչ Տ. Պեվրիլ եպիսկոպոսը, Հույն Օրթոդոքս Եկեղեցու միտրոպոլիտ Մելետիոսի ներկայացուցիչ Տ. Ժերեմի եպիսկոպոսը, Մոսկվայի Ռուս Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, Ֆրանսիայի հայ կաթողիկե համայնքի էկզարխ Տ. Գրիգոր եպիսկոպոս Կապրոյանը, Ֆրանսիայի Ռումին Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Տ. Ադրիան Հրիչու եպիսկոպոսը, Հույն Օրթոդոքս Եկեղեցու Անտիոքի Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Գրեգուար Սալիբի եպիսկոպոսը, Ֆրանսիայի ավետարանական Եկեղեցու միության ներկայացուցիչ Ժակ Ռիգոն, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքության հոգևոր իշխանության ներքո գտնվող Ֆրանսիայի Ռուս Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Տ. Ժորժ արքեպիսկոպոսը, Հույն Կաթոլիկ՝ Մելքիթ Եկեղեցու առաջնորդ Տ. Նասրալլահը, Վրացական Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ հայր Մելիան, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից՝ հայր Ռափայել Անտոնյանը և այլ եկեղեցական ու կրոնական իշխանությանց ներկայացուցիչներ:

Վերջին օծման արարողությանը ներկա են եղել նույնպես Ֆրանսիայի պետական և քաղաքային իշխանությանց բարձրաստիճան ներկայացուցիչներ, այդ թվում՝ ֆրանսիական

կառավարության կողմից՝ Հանրային ապահովության միսիստր Ժոզեֆ Ֆրանչեսկին, Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի ներկայացուցիչ Ժան Տիբերին, Արտաքին գործերի նախկին մինիստր Մորիս Կուվ դը Մյուրվիլը, գեներալ Բենուվիլը, Ազգային Ժողովի նախագահի, 17-րդ թաղամասի թաղապետության, Արտաքին մինիստրության կրոնական տեսչության վանական ներկայացուցիչներ, ինչպես նաև Իսի լե Մուլինոյի, Առնուվիլ լե Գոնեսի, Շավիլի քաղաքագլուխները և այլ բազմաթիվ անձնավորություններ:

Ազգային շրջանակներից ներկա են եղել կրոնական ընկերակցություններ, հոգաբարձություններ Փարիզից և այլ քաղաքներից, հայ պատվիրակություններ արտասահմանից (Բելգիա, Շվեյցարիա, Հոլանդիա), ազգային տարբեր միությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն:

Ժամը 10-ին Տ. Սերովբե արքեպիսկոպոսի հիշատակին սուրբ պատարագ է մատուցել Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Ի ժամ պատարագի կատարվել է հանգուցյալի վերջին օծումն ու թաղման կարգը:

Այնուհետև Տ. Գյուտ եպիսկոպոսը, խոսք առնելով, առանձին-առանձին հիշատակել է այս առթիվ Փարիզ ժամանած հայ բարձրաստիճան հոգևորականների անունները, ընթերցել է Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսից ստացված ցավակցական հեռագիրը և Փարիզի Հայ Առաքելական Եկեղեցու Կրոնական Ընկերակցության ու ողջ հայ հոգևորական դասի անունից խորապգաց շնորհակալություն է հայտնել հոգևորական և աշխարհական այն բոլոր օտար պաշտոնական անձնավորությանց, որոնք եկել էին բաժանելու Հայ Եկեղեցու սուգը: Ապա նա ֆրանսերեն լեզվով համառոտակի ներկայացրել է հանգուցյալ Սերովբե սրբազանի անցած եկեղեցական, հասարակական, կրթական և մշակութային կյանքի բեղմնավոր ուղին:

Տ. Գյուտ եպիսկոպոսի ելույթից հետո Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պողապյանը ընթերցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրտի խոսքը Տ. Սերովբե արքեպիսկոպոսի մահվան առթիվ (Հայոց Հայրապետի խոսքը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 5):

Այնուհետև խորանի վրա դրված բաց դագաղի առաջ դամբանական մի հուզիչ ճառ է արտասանել Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոսը:

Իր խոսքի սկզբում Ամենապատիվ Սրբազան Հայրը նշելուց հետո, թե Տ. Սերովբե արքեպիսկոպոսի մահը սգում է ֆրանսահայ գաղութը, սգում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությունը, սգում է ողջ Հայաստանյայց Եկեղեցին, վեր է հանել հոգելույս Սրբազանի նկարագրի մի շարք հատկանշական գծերը՝ ավելացնելով. «...Ան եղավ մեր Եկեղեցվո և ժողովուրդին գերագույն շահերու հասկացողության մարդը: Իր քաղցր հոգին, քրիստոնեական հրահանգներով մարզված, վերծ մնաց միշտ խոտոր ու մոլար շարժումներե: Պարզ, անպատրվակ և անկեղծ էր աղբյուրներու վալալ ջուրին պես: Իրեն հատուկ այս զգացումներուն շնորհիվ էր, որ ան կրցավ երեսուն տարիներ վայելել ֆրանսահայ ազգութին սերն ու համակրանքը: Նվիրվիլ ո՛չ փառքին, որ կխաբե անմիտը, ո՛չ իշխանության, որ կշլմորե անձնապաշտը, այլ նվիրվիլ այն զգացումներով, որոնցմով ծնողքը իր զավակներուն, վարդապետը իր աշակերտներուն և կրոնավորը իր ժողովուրդին վրա կբաշխվի»:

Իր սրտառուչ դամբանականը Տ. Եղիշե Պատրիարքը վերջացրել է իր հանգուցյալ հոգևոր եղբորն ուղղված հետևյալ խոսքերով. «Կհավատամ, թե երբ կգոցեիր նայվածքդ կյանքի լույսին, զգացիր, թե հովեն քշված խլյակ մը չես եղած և կրնաս ճակատաբաց կենալ հավիտենականին առջև, որովհետև քու կյանքդ անոր քեզի շնորհած քանքարներուն շահավորումը եղավ»:

Սույն հանդիսավոր արարողությունն ավարտվել է ժամը 12.30-ին, և Մայր եկեղեցում հավաքված բազմությունը փակ դագաղի ետևից ուղևորվել է դեպի Պեր-Լաշեզի գերեզմանատուն: Այստեղ տեղի ունեցած թաղման կարգից, հողի օրհնությունից և աղոթքներից հետո ներկա հավատացյալները իրենց վերջին հարգանքն են մատուցել իրենց սիրելի առաջնորդին, որի աճյունը ամփոփվել է Արևմտյան Եվրոպայի հայ առաջնորդներին հատկացված դամբարանում:

Հետևյալ օրը, կիրակի, փետրվարի 19-ին, Ֆրանսիայի բոլոր հայկական եկեղեցիներում մատուցվել է սուրբ պատարագ՝ ի հիշատակ հոգելույս Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԲԵՑՐՈՒԹՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ «ԱՐԱՐԱՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ (21 մարտ 1984 թ.)

Ա

Գոհություն բարին Աստուծույն, որ Մեկ ժամանակ շնորհեց, որպեսզի Մեր գահակալության անցնող տարիներին հաջողեցնենք կյանքի կոչել հոգևոր և նյութական շինարարության բազում ծրագրեր, ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մեր թեմերի ու եկեղեցիների, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Այսպիսով՝ աստվածակառույց Սուրբ Էջմիածինը գտնվում է այսօր իր եկեղեցական ու ազգային պատմական առաքելության ուղիղ ճանապարհի վրա:

Մեր նոր ծրագրերին մաս են կազմում՝ հրատարակումը Աստվածաշնչի աշխարհաբար արևելահայերեն թարգմանության, «Էջմիածնի գանձեր» և «Արարատ» ալբոմների, կառուցումը Արարատյան թեմի առաջնորդարանի շենքի, ընդլայնումը երկու հարկի վրա Հոգևոր ճեմարանի շենքի՝ հինգ դասարանային սենյակներով, հրատարակումը Սբ. Պատարագի նոր երաժշտության, վերակառուցումը Սբ. Գայանե վանքի երկու վանական շենքերի և հիմնական վերանորոգումը Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու:

Բ

Մեր երականքն է և իղձը ահա ավելի քան քառորդ դարից ի վեր վերականգնումը մեր Մայր Եկեղեցու կանոնական միության և ի սփյուռս աշխարհի բնակվող հայ հավատացյալ մեր ժողովրդի հոգևոր միասնության: Ծանոթ են ձեզ և մեր ժողովրդին այդ ուղղությամբ Մեր հարատև ճիգերն ու կոչերը Կիլիկյան Աթոռի գահակալներին: Թեև հիմնական հարցերը չեն լուծվել և կացությունը մնում է նույնը, ինչպես քսանհինգ տարիներ առաջ, սակայն ստեղծված տագնապալի վիճակը վերջին երկու-երեք տարիների ընթացքում հետըզհետե մեղմ ձևերով է արտահայտվում, և հետևաբար հոգեբանորեն գոնե առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում մեր եկեղեցական կյանքը օրինականության և համերաշխ գործակցության հունի մեջ դնելու: Հույս ունենք, որ Տանն Կիլիկիո այժմյան գահակալ Մեր եղբայրը պիտի օգնի Մեզ բանիվ և գործով, մանավանդ գործով, վերականգնելու մեր Աթոռների միջև այն օրինական համերաշխ գործակցության իրավիճակը, որ կար մինչ 1956—57 թվականներին: Տագնապը ծնունդ առավ խախտումովը այդ օրինական իրավիճակի: Տագնապը պիտի վերջ գտնի ստուգապես այդ օրինական իրավիճակի վերականգնումով: Մենք մնում ենք լավատես:

Գ

Մենք խորապես մտահոգված ենք մեր օրերի աշխարհի խռովահույզ վիճակով և մշտական երկյուղ ենք կրում՝ կանգնելու համաշխարհային մի նոր պատերազմի վտանգի առաջ: Բնական է, որ տարբեր ազգեր, տարբեր պետություններ, տարբեր գաղափարախոսությանց շրջանակներ, խաղաղության և պատերազմի հարցերի առնչությամբ տարբեր դիրքորոշումներ որդեգրեն, տարբեր շահերով առաջնորդվեն: Մեզ մտահոգողը մեր վերաշինված հայրենիքի և մեր հայրենաբնակ երեք միլիոն հայության անվտանգության ու գոյատևման հարցն է: Բոլոր այլևայլ հարցերը Մեզ համար երկրորդական են: Այս պետք է լինի արդի հայ ազգային քաղաքական մտածողության հիմքը: Այլապես պիտի նշանակեր անտեսել մեր ազգի վերջին հարյուրամյակի պատմական փորձը և մեծ Եղեռնի ողբերգությունը, պիտի նշանակեր անտեսել մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը և մեր ժողովրդի սեփական ուժերի տարողությունը: Անտեսել այս իրողությունները՝ պիտի նշանակեր կուրկ լինել քաղաքական ողջամիտ մտածողությունից: Լոկ զգացական վեղումները կամ գաղափարախոսական նախասիրությունները ոչ մեկ քաղաքական հարց չեն կարող լուծել: Կարող են սակայն վտանգել մեր այսօրվա ունեցածը: Հայ սփյուռքը, այո, կատարելիք դեր ունի և պետք է ունենա իբրև օժանդակ հավաքական ուժ, մայր երկրի գերագույն շահերի գիտակցությամբ: Այո, արդար է հայ դատի հետապընդումը և հայոց ազգային երականքների կենսագործումը, բայց չմոռանանք երբեք, որ հայ դատ ասելով պետք է հասկանանք նաև մեր այսօրվա ունեցածը ամբողջ ու անվտանգ պահելու հրամայականը: Հայ դատ հետապնդել առանց մեր այսօրվա ունեցածը անվտանգ պահպանելու մտահոգության՝ պիտի նշանակեր վոհ գնալ աղետալի պատրանքների:

Դ

Հոգևոր սպասավորներ պատրաստելու անհրաժեշտությունը Մեր մշտական մտահոգության առարկան է եղել Մեր գահակալության առաջին իսկ օրերից սկսած: Վերջին քսան և ավելի տարիների ընթացքում մեր Հոգևոր ճեմարանը շուրջ հարյուր հոգևորականներ է պատրաստել, որոնք այսօր պաշ-

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

տոնավարում են մեր ներքին թեմերում և մասամբ էլ արտասահմանի թեմերից ներս: Այս արդյունքը բավարար չէ անշուշտ ո՛չ քանակական և ո՛չ էլ որակի իմաստով: Շեշտում ենք հատկապես որակը:

Զորացնելու համար մեր Մայր Եկեղեցին և ամրապես դնելու այն իր առաքելության ուղիղ ճանապարհի վրա, կենսականորեն անհրաժեշտ է պատրաստել իրավ հավատք և բարոյական նկարագիր ու կրոնական և ազգային տեսիլք ունեցող հոգևորականներ, որոնք նվիրումով ծառայեն մեր ժողովրդին անշահախնդիր կերպով՝ միշտ հավատարիմ իրենց ուխտին: Բոլորս պարտավոր ենք արթուն կերպով հսկել դարմանելու համար մեր տկարությունները:

Մեր եկեղեցական կյանքի թերի կողմերից մեկն է նաև որոշ թեմերի ներքին անկազմակերպ վիճակը, իբրև հետևանք թեմական օրինավոր կանոնադրությունների չգոյության, կանոնադրություններ, որոնք կազմված լինեն եկեղեցական կանոնների և ժողովրդավարական սկզբունքների հիման վրա: Մեր թեմերից ոմանք իրոք օժտված են լավ մշակված կանոնադրություններով, ինչպես օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի, Եգիպտոսի, Ավստրալիայի և Անգլիայի թեմերը, սակայն ունենք և այլ թեմեր, որոնք կարոտ են նման կանոնադրությանց մշակման և գործադրման: Այս ճանապարհի վրա հանդիպում ենք լուրջ դժվարությունների: Հայ Եկեղեցում նվիրագործված ժողովրդավարական սկզբունքը պահանջում է, որ վարչականորեն Եկեղեցին ղեկավարվի ժողովրդի մեծամասնության քվեներով ընտրված վարչության կողմից, հոգևոր առաջնորդի հետ սերտ գործակցությամբ: Սփյուռքի հայապահպանման նվիրական գործը դնել ամուր հիմքերի վրա՝ նշանակում է նախ և առաջ ամուր հիմքերի վրա խարսխել արտասահմանի Հայ Եկեղեցին իր ներքին կանոնական և ժողովրդավարական վարչական կազմակերպությամբ: Զբաղեցնել այս ճշմարտությունները, անկազմակերպ պահել հայոց Մայր Եկեղեցին՝ նշանակում է տկարացնել ողնաշարը սփյուռքի հայության գոյատևման:

Ե

Գոհ ենք, որ Ձեր այս հարցումով առիթն ենք ընծայում Մեր սրտի խոսքը մի անգամ ևս հաղորդելու Ձեզ և ձեր թերթի միջոցով՝ համայն լիբանանահայության: Այլ առիթներով արտահայտվել ենք և հիմա էլ կրկնում ենք Մեր խոր համոզումը, թե Լիբանանը մի տեսակ շարունակությունն է մեր Մայր Հայրենիքի հայության՝ կրոնական, կրթական և մշակութային տեսակետից, Լիբանանյան հայրենիքի օրենքների հովանու ներքև: Մեր տևական աղոթքն է, որ Աստուծո ողորմությամբ Լիբանանը, իր բոլոր համայնքների համերաշխ ճիգերով, վերագտնի իր երբեմնի խաղաղ ու բարգավաճ կյանքը իբրև անկախ ու ինքնիշխան պետություն, քաղաքակրթական իր առաքելության անշեղ ճանապարհի վրա: Մաղթում ենք նաև, որ մեր Եկեղեցու կավակները իբրև օրինապահ ու հավատարիմ քաղաքացիները Լիբանանյան պետության, իրենց միակամ կեցվածքով ու եռանդուն գործունեությամբ՝ խաղաղարար և հաշտարար հավաքական գործոն ուժ հանդիսանան, հանուն Լիբանանյան հայրենիքի վերածննդի և փառքի:

Մեր օրհնությունը և հայրական սերը Լիբանանի համայն բնակչությանը, մահմեդական և քրիստոնյա համայնքներին:

Մեր օրհնությունը հայ համայնքին և նրա կրոնական, կրթական ու մշակութային հաստատություններին: Մենք վստահ ենք, թե սուրբգրական Լիբանանի հորիզոնի վրա շուտով պիտի ծագի առավոտը խաղաղության:

Զ

Ավանդական հասկացողությամբ, երբ երեք հայեր իրար են հանդիպում հյուրընկալ մի երկրում, նախ մի եկեղեցի են կառուցում, հետո մի դպրոց են հիմնում և ապա մի թերթ են հրատարակում:

Ահավասիկ բնորոշումը հայ մարդու հոգեբանության: Սքանչելի մի բարենիշ է այս մեր ազգի համար: Մնում է ակնկալել, որ թե՛ Եկեղեցին, թե՛ դըպրոցները և թե՛ հայ մամուլը արժանավոր կերպով ի կատար ածեն հայ մարդու սպասումները:

Եվ իրոք պետք է հաստատել, թե սփյուռքի տարածքի վրա հայ մամուլը լայն աշխատանք է ծավալում: Այսօր անհամար թերթեր և ամսագրեր են լույս տեսնում, որոնք իրենց որակով էլ բավարար բարձրության վրա են գտնվում: Մենք գնահատանքի և քաջալերանքի արժանի ենք համարում հայ մամուլի բոլոր աշխատողներին:

Ձեր «Արարատ» օրաթերթը մեկն է այն հրատարակություններից, որը երկար տարիներից ի վեր, Իրապաշտ հայրենասիրական կեցվածքով, սփյուռքահայ կանգվածներին է հասցնում իր խոսքն ու իր պատգամը՝ հավատարիմ մնալով ճշմարտության, հասարակական բարոյականին և իրավ հայրենասիրության: Այսպես է, որ մամուլը կարողանում է դառնալ անկաշառ տեղեկատու, դաստիարակիչ գործոն և ազգային հասարակական կյանքի ուղեցույց:

«Արարատ»-ին մաղթում ենք մշտանորոգ եռանդ, հարատևության ոգի և աննկուն լավատեսություն:

Սուրբ Էջմիածնից Մեր օրհնությունը թերթիդ բարեջան խմբագրությանը, աշխատակիցներին և հարգելի ընթերցողներին:





ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Ով ճշմարտապես կամենում է հայապատ մնալ Վարդանանց սուրբ հիշատակին, նրան անհրաժեշտորեն հարապատ կլինի արդի իրական Հայաստանը, արդի ապրող ու շնչող, աճող ու ծաղկող մեր մայր հայրենիքը...»:

(Հայոց Հայրապետի խոսքից Վարդանանց տոնակատարության առթիվ, 18 փետրվար 1982 թ.)

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրական ավանդություններից մեկն է այն, որ ամեն տարի, գարնանամուտին, մեծ հանդիսությամբ ոգեկոչվում է 451 թ. Ավարայրի հերոսամարտում վոհված հայ մարտիկների սուրբ հիշատակը:

Այս տարի նույնպես պատշաճ շուքով և հանդիսավորությամբ Մայր Աթոռում նշվեց պատմական այդ եղելության հիշատակը:

Մարտի 1-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Մայր տաճարում կատարվում է հանդիսավոր ժամերգություն, իսկ ժամը 11-ին մատուցվում է սուրբ պատարագ: Պատարագիչն է հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, որը հավարտ ս. պատարագի Իշման ս. Սեղանից արտասանում է Վարդանանց հերոսամարտին նվիրված ոգեշունչ մի քարոզ հետևյալ բնաբանով. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք» (Եղիշե):

Քարոզից անմիջապես հետո, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Այնուհետև ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Մայրավանքի պաշտոնեությունը, ողջ աշխատավորությունը, ինչպես նաև հավատացյալների մեծ բազմություն:

Հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Հանդիսությունն սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի կատարումով, որից հետո բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը.

«Մի գեղեցիկ ավանդություն է դարձել Մայր Աթոռում ամեն տարի տոնախմբել Վարդանանց հիշատակը: Ոմանք գուցե կարմանան, թե ինչ կարիք կա նշելու հեռավոր անցյալին վերաբերող պատերազմական մի դեպք, մի պարտություն, այն էլ այսօր, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ աշխարհն ամենից շատ կարիք ունի խաղաղության»: Շարունակելով իր խոսքը՝ Հայկազուն վարդապետը նշում է, թե ինչպես Հայկ նահապետից սկսած հայ ազատատենչ ժողովուրդը բազում ճակատամարտեր է մղել բարբարոս

թշնամիների դեմ՝ գերադասելով մահը, քան թե ստրկությունը: Բայց այդ բոլոր պատերազմներից հայ հոգու համար ամենից ավելի հարազատ և սուրբ է մնացել Ավարայրի ճակատամարտի հիշատակը, «Ավարայրը իր սղված օրից դարձել է գոյատևելու խորհուրդ ամեն մի հայի հոգու մեջ...»: Եվ այդ մեծ խորհուրդը դարեր շարունակ միշտ վառ պահեց հայ մարդու ազատասեր ոգին: Այդ ոգին է՛լ ավելի բոցավառվեց Սարդարապատի ճակատամարտում, որը «...արդարորեն կարող է կոչվել երկրորդ Ավարայր»: Իր բացման խոսքի վերջում հայր սուրբը ասում է. «Նշել Ավարայրի հերոսամարտը այսօր՝ նշանակում է հիշեցնել աշխարհին, թե տանջվին կա հայ ժողովուրդը, և թե մենք, որ անցել ենք երկար և տառապալի ուղի, լա՛վ գիտենք խաղաղության արժեքը և ըստ այնմ էլ մեր արևը և մեր հոգու գույները միացրել ենք սովետական ժողովուրդների պարգևած խաղաղության ծիածանին:

Նշել Վարդանանքը այսօր՝ նշանակում է խաղաղության և ազատության վեհ գաղափարները ջատագովել, ապրել և ստեղծագործել մեր սուրբ հողի վրա, նշանակում է հավերժացնել մեր անցյալը մեր ներկայով, բայց մանավանդ մեր ապագայով, մեր երազների իրականացումով»:

Բացման խոսքից հետո Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը հրավիրում է Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանին հանդես գալու օրվա խորհրդին նվիրված բանախոսությամբ:

Բանախոս հայր սուրբը իր բովանդակալից ելույթի մեջ վեր է հանում Վարդանանց հերոսամարտի մեծ խորհուրդը: Ոգեկոչելով մեր նախնյաց դյուցազն հերոսների՝ Հայկ նահապետի, Արամի և Արայի հերոսական պայքարի պատմությունները, նա նշում է. «Դյուցազները իրենց պատկանած ցեղի մեծագույն արժանիքների արտահայտիչներն են: Մեծագույն դյուցազնությունը բարիի պաշտամունքի մեջ է, որը կարող է բարձրանալ մինչև Գողգոթա, վոհվել, բայց և հարություն առնել»: Այնուհետև հայր սուրբը պատմական մի քանի տվյալներ է մեջ բերում 451 թվականից առաջ, Արշակունյաց թագավորության անկումից հետո, Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական դրության մասին և նշում, որ «Հայաստանում այդ ժամանակ քրիստոնեությունը հաղթանակած իր լույսն էր տարածում ամենուրեք», իսկ «Պարսկաստանը իր կրոնն էր պարտադրում հայոց՝ փոխան քրիստոնեության...»: Նման դժվարին կացության մեջ, ավելացնում է բանախոսը, հայ ժողովրդի համար միակ համազգային կազմակերպությունը մնում էր Հայ Եկեղեցին, որն իր պատասխան խոսքը պետք է ուղարկեր Հավկերտին:

Լուսաբանելով Հայ Եկեղեցու ծնունդը, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի և Տրդատի մաքառումները հեթանոսության դեմ, վեկուցող հայր սուրբը շեշտում է այն միտքը, որ 451 թ. հայ հոգում արդեն արմատացած քրիստոնեությունը պահպանելու համար «պետք էր կենաց և մահու պատերազմ»: Ավարայրի դաշտում տեղի ունեցած պատերազմում . «Հայերը, ճիշտ է... չհաղթեցին, բայց և չպարտվեցին. պարսիկը հայոց երկրից ետ տարավ իր ուղարկած չար ոգուն, իր Զրադաշտին, իսկ հայը մնաց քրիստոնյա և է՛լ ավելի հավատաց Քրիստոսի կենսաբեր լույսին, այն լույսին, որի մասին վկայել էր մեր Փրկիչը, թե՝ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ նաեւ բանիւ», այսինքն՝ հոգեկան հարստություններով, որ վորություն է, ոգեկան վորություն: Բաբելոնացիք, ասորեստանցիք, սկյութներն ու կիմմերները, հվոր՝ մարմնով, հողով ու հացով, կորան ու փոշի դարձան՝ իրենց իսկ վորություններով պաշարված: Ինչո՞ւ, որովհետև պակասում էր նրանց Բանը, ոգին, որովհետև ժողովուրդները գոյատևում են ոչ միայն հացիվ, այլ նաև՝ բանիվ»: Ճիշտ գնահատական տալով Վարդանանց պատերազմին, բանախոսը այն համարում է «համաշխարհային պատմության նշանավոր իրադարձություններից մեկը» և համեմատում «Կատալանության դաշտերի վրա սղված պայքարի հետ՝ ընդդեմ Ատտիլայի հորդաների, ի պաշտպանություն քրիստոնեության և քաղաքակրթության»:

«Ավարայրի ճակատամարտը,—շարունակում է բանախոսը,—ոչ թե սոսկ երկու բանակների կռիվ էր, այլ մի ամբողջ ժողովրդի գոյամարտն էր, որ շարունակվեց դարերի ընթացքում Վահրամ Պահլավունու ու Դավիթ Բեկի, Մուսա լեռան ու Սարդարապատի, Անդրանիկի ու ֆիդայինների հերոսամարտերում...»:

Բանախոսության վերջում Ասողիկ հայր սուրբը, Վարդանանց խորհուրդը կապելով ներկայի հետ, ցույց է տալիս, թե ինչպես համայն հայ ժողովուրդը խոր գիտակցությամբ և ամենայն հարգանքով գլուխ է խոնարհում նրանց սուրբ հիշատակի առաջ և հավերժացնում այդ բարի և անմոռաց հիշատակը ապագա սերունդների համար. «Այսօր վերածնված Հայաստանի քաղաքամայր Երևանի կենտրոնում վեր է հառնել քաջ Վարդանի հսկա արձանը՝ սուրը ձեռքին, ձին օդի մեջ... Ավարայրի դարերից է եկել նա՝ թրատելով չարն ու բռնությունը, ոգեղեն խորհուրդը եկել մարմին է առել այսօր և ոգեշնչում է հայ ժողովրդի վավակներին... Այ-

սօր հայ ժողովուրդը իր նոր հայրենիքում հրաշքներ է արարում՝ Վարդանանց խորհուրդը դարձրած կենդանի ու առաջնորդիչ ուժ, որովհետև այդ ոգին առողջ է ու բարոյական, տիեզերական ու համամարդկային»:

Բանախոսությունից հետո, հանդիսության գեղարվեստական մասում հոգևոր ճեմարանի ուսանողները հանդես են գալիս Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի, Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքի և Եղիվարդի «Կարմիր վորավար» պոեմի ընտրովի հատվածներից և «Լռեց...», «Պլպուլն Ավարայրի», «Ով Հայկազունք», «Մենք քաջ տոհմի զավակներ ենք», «Նորահրաշ» երգերից կազմված գրական-երաժշտական մի կոմպոզիցիայի կատարումով:

Հանդիսության վերջում Իր պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը հետևյալ խոսքերով.

«Այսօր ձեզ հետ միասին գոհունակությամբ Մայր տաճարում ներկա եղանք ս. պատարագի և մաղթանքի արարողությանը, լսեցինք ոգեշունչ քարոզը պատարագիչ Հայկազուն վարդապետի, իսկ այստեղ հոգևոր ճեմարանի սաները ներկայացրին մեզ խնամքով պատրաստված գեղարվեստական մի ծրագիր՝ արտասանություններով և երգերով: Ունկնդրեցինք նաև մեր միաբաններից Ասողիկ աբեղայի գեղեցկահյուս շարադրանքը Վարդանանց տոնի վերաբերյալ:

Ես ուրախ եմ, որ Մայր Աթոռում, ինչպես դարեր շարունակ, նաև այսօր կենդանի է այահվում հիշատակը Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց հերոսների: Մաղթենք, որ միշտ այսպես, խաղաղության պայմաններում, մեր հայրենի հողի վրա շարունակվի ոգեկոչվել հիշատակը մեր Եկեղեցու և մեր ազգի սրբերի ու հերոսների:

«Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի զՀայրապետութիւն և զՀանրապետութիւն ազգիս Հայոց»: Այս մաղթանքի մեջ ամփոփվում է ամբողջ իմաստը, խորհուրդը Վարդանանց հերոսամարտի, նաև խորհուրդը մեր ողջ պատմության ընթացքում տեղի ունեցած բոլոր հերոսամարտերի՝ Վարդանանց պատերազմից մինչև Սարդարապատ և հայրենական պատերազմ:

Իրոք, մի ազգի պատմությունն իրարից անջատ դեպքերի հաջորդականություն չէ, այլ իրար հետ շաղկապված, իրար իմաստավորող դեպքերի շարան: Մեր ազգային պատմության մեջ անջատ-անջատ վերցնել պատմական դեպքերը, առանց կապելու մեր ներկա իրականությանը, նշանակում է չհասկանալ պատմությունը, նշանակում է կորցնել մեր ճշմարիտ հիշողությունը: Պատմությունը մի ազգի հիշողությունն է ճիշտ այնպես, ինչպես մենք բոլորս մեր հիշողությունն ունենք: Հիշում ենք մեր անցյալը՝ մանկությունից մինչև այսօր: Պատկերացրեք մի պահ, որ մեզանից մեկը կորցներ իր հիշողությունը և չհիշեր իր անցյալը. դա մեծ դժբախտություն կլիներ: Նույնը կլիներ մի ժողովրդի համար, եթե իր անցյալը մոռանար և այսօր չապրեր նաև անցյալի հիշատակներով: Անցյալը հիշելով, անցյալը իմաստավորելով՝ ժողովուրդները կարող են իրենց ապագա կյանքի դռները բանալ: Սրանք պարզ ճշմարտություններ են, բայց կարծում եմ, որ այսպիսի տոնակատարության առիթով մանավանդ պետք է կրկնվեն այս ճշմարտությունները: Վերը մեր հիշած մաղթանքի մեջ իրոք որ մարմնավորված է, հատկապես Վարդանանց հերոսամարտից այս կողմ, մեր ժողովրդի կյանքի խորհուրդը ամբողջությամբ. հաստատ, անսասան և անվրդովելի պահպանել Հայ Եկեղեցու հավատքի վեմը և մեր հայրենիքը՝ մեր այսօրվա խորհրդային Հայաստանը: Առանց այս երկու ճշմարտությունների բացահայտման, մենք մեր կյանքի թելը կտրած կլինենք մեր անցյալից: Երբեմն ունենք փառաբանում են միայն անցյալի հերոսությունները՝ առանց առնչվելու մեր օրերի իրականությունների հետ. այդ դեպքում նրանց խոսքերը մնում են օդի մեջ կախված օճառի պղպջակների նման:

Մեր ժողովուրդը իսկապես մահվան անդունդի առջև կանգնած էր 1920 թ. նոյեմբերին: Մեր դարավոր թշնամին ժամը հասած նկատեց իր ծրագիրն իրագործելու և ամբողջությամբ բնաջինջ անելու Արևելյան Հայաստանը ևս: Այդ վտանգի պահին ժայթքեց հայ ժողովրդի հերոսական ոգին, Վարդանանց ոգին և ռուսական բանակի օգնությամբ հնարավոր եղավ փրկել մեր երկիրը վերջնական բնաջնջումից:

Այս վերջին վաթսուն տարիների ընթացքում, ահավասիկ, այս հանրապետության դրոշի ներքև հայ ժողովուրդը ձեռք բերեց իր երազանքների իրականացումը: Ձեռք բերեց ապատություն՝ վերաշինելու իր քայքայված հայրենի երկիրը, վերականգնելու իր շենները, իր քաղաքները, կառուցելու իր մայրաքաղաքը ճարտարապետական տեսակետից հարապատ ազգային ոճով: Աշխարհի վրա քիչ են այն մայրաքաղաքները, որոնք այնքան հարապատ ազգային դրոշմ ունենան, ազգային ոճով կառուցված լինեն, ինչպես մեր Երևանը: Եվ սա մեր ազգային ոգու ապատ թռիչքով և երազանքներով իրականացվեց շնորհիվ Թամանյանի և նրա հաջորդների տաղանդի:

Նույնը պետք է ասել մյուս բնագավառներում՝ գյուղատնտեսության մեջ, գիտության մեջ, դպրության, գիր-գրականության և արվեստի մեջ, ուր նույնպես հայաստանցի ժողովուրդը, երբեմն դժվարին պայմանների մեջ, այդ բոլոր վարգացումները քայլ առ քայլ իրականացրեց միշտ ազգային հարազատ ոճով ու ոգով: Եվ այս պատմական իրագործումների կողքին նաև մեր Եկեղեցին իր առաքելությունն է ծավալում նույն ներշնչանքներով, նույն երազանքներով:

Աղոթենք, որ Աստված հաստատ, անվտանգ, ապահով և խաղաղ պահպանե մեր ազգային հանրապետությունը և մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թող Աստված օրհնե մեր ժողովուրդը, մեր հերոսների հիշատակը և օրհնե նաև այսօրվա բանվոր, գյուղացի, մտավորական աշխատավորության հսկայական ճիգերը վերականգնելու և է՛լ ավելի պայծառացնելու Վարդանանց հավիտենական Հայաստանը»:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՆՈՐԱԳԱՎԹԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՋՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Սույն թվականի մարտի 16-ին, Մեծ պահոց ուրբաթ երեկոյան, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այցելում է Նորագավթի Ս. Գևորգ եկեղեցի: Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը որպես գավազանակիր:

Ս. Գևորգ եկեղեցու կանգերը ուրախ զողանջում են և ավետում Հայոց Հայրապետի ժամանումը:

Վեհափառ Հայրապետին դիմավորում են Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, թեմի քահանայից դասը, Արարատյան թեմի թեմական խորհրդի և Երևանի եկեղեցական խորհուրդների անդամները, ինչպես նաև հավատացյալների հոծ բազմություն:

Սկսվում է հանդիսավոր սուրբ ժամերգությունը: Խորհրդավոր լռություն է տիրում եկեղեցում: Հավատացյալների մրմնջացող շրթները սեր և խաղաղություն են խնդրում վասն մարդկության և աշխարհի:

«Ընկալ քաղցրութեամբ» աղոթքից առաջ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը ողջույնի խոսքով դիմում է Վեհափառ Հայրապետին: Սրբազան հայրը նախ հայտնում է այն մեծ ուրախությունը, որ ապրում է Արարատյան թեմի հոգևոր դասը Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության առթիվ: Այնուհետև, շարունակելով իր խոսքը Հայոց Հայրապետի շինարարական գործունեության մասին, Գարեգին սրբազանը նշում է, որ Նորին Սրբությունը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր շինարար ոգով ու նվիրվածությամբ գլխավորել է Հայաստանի եկեղեցիների և վանքերի վերաշինման ու վերանորոգման աշխատանքները՝ տալով իր հայրական օրհնություններն ու բարի մաղթանքները:

Իր խոսքի վերջում Գարեգին սրբազանը արևշատ և քաջառողջ կյանք է մաղթում Վեհափառ Հայրապետին, ցանկանալով, որ Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր պետի օրհնաբեր Աջը մշտապես հայ ժողովրդին տանի դեպի բարին ու խաղաղությունը:

Այնուհետև Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ իր օրհնությունները և հայրապետական պատգամները բաշխելու հավատացյալ ժողովրդին և հոգևոր դասին:

Վեհափառ Հայրապետը իր խոսքի սկզբում գոհություն է հայտնում Աստծուն այս գեղեցիկ հանդիպման համար, նաև այն բանի համար, որ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի, վերականգնվեց Ս. Գևորգ եկեղեցին:

Հայոց Հայրապետը իր քարոզի համար որպես բնաբան ընտրել էր Ս. Ներսես Շնորհալու «Սէր անուն Յիսուս, սիրով քո ճմլեա սիրտ իմ քարեղէն» տողերը:

Նորին Սրբությունը նախ խոսում է Մեծ պահոց շրջանի մասին և վեր հանում նրա քրիստոնեական խորհուրդը՝ նշելով, որ այդ շրջանում «...մեր մայր Եկեղեցին հրավիրում

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԺԱՄԵՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

է մեկ բոլորիս, լինենք հոգևորական թե աշխարհական, որ մի պահ մեր աչքերը փակենք արտաքին աշխարհի առաջ և մեր հայացքն ուղղենք դեպի մեր հոգու ներքին աշխարհը, թե ինչպե՞ս ենք ապրում, ի՞նչ մտածումներ, ի՞նչ զգացումներ և ի՞նչ ձեռաց գործեր են առաջնորդում մեկ մեր կյանքի ընթացքում»: Խորհրդածություններ անելով մարդու հոգեկան աշխարհի, նրա ապրումների և զգացումների շուրջ, Վեհափառ Հայրապետը ընդգծում է այն միտքը, որ Մեծ պահոց շրջանում հարկավոր է «սրբագրել ներքին աշխարհը, սիրտը թեթևացնել սխալմունքների և մեղքերի ծանրությունից, քանի որ սրտերը քարանում են, կարծրանում այդ սխալմունքների և տկարությունների հետևանքով»:

Քարոզի վերջում Վեհափառ Հայրապետը ոգևորությամբ է խոսում այսօրվա վերածընված Հայաստանի մասին և ամեն մի հայրենասեր հայի տալիս հետևյալ պատգամը. «...Մենք այսօր պետք է հպարտ լինենք մեր վերածնված մայր հայրենիքով»:

Հավարտ սուրբ արարողության «Ամեն հայի սրտից բխած» հայրապետական մաղթերգի հնչյունների ներքո հայրապետական թափորը դուրս է գալիս եկեղեցուց:

*
* *

Երկու շաբաթ անց, մարտի 30-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի հրավերով այցելում է նաև Երևանի Ս. Զորավոր Եկեղեցի՝ ներկա լինելու երեկոյան ժամերգությանը: Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Հայոց Հայրապետին Ս. Զորավոր եկեղեցու մուտքի առջև, վանգերի քաղցրահնչյուն ղողանջների ներքո, դիմավորում են Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհրդի անդամները, ինչպես նաև հավատացյալների բազմությունը:

Ժամերգության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղված բարիգալստյան հետևյալ ջերմ խոսքն է ասում Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը.

«Վեհափառ Տեր,

Պատշաճ է այս գեղեցիկ, հուզումնալի պահին, Ս. Զորավոր եկեղեցում տիրող նման հոգեվայել մթնոլորտում արտասանել սաղմոսերգուի խոսքերը՝ որպես հարազատ արտահայտություն մեր հոգեկան վիճակի. «Տեր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Հիրավի, առաջին զգացումը, որ ծնվում, ձևավորվում է իմ մեջ և ձգտում խոսքի վերածվելու, երախտագիտությունն է: Երախտագիտություն Զերդ Սրբության այցով մեկ պարգևված այն հավատքի, սիրո, ջերմության ու խնդության համար, որ սերմանվում և ծլարձակվում են մեր մեջ, պճնում և զարդարում են կամարներն այս սուրբ եկեղեցու, ներծծվում հնամենի այս քարերի մեջ, դառնում սնունդ և հագեցնում քաղցն ու պապակը այս քարերի մեջ ապրող մեր նախնյաց հոգիների: Եվ որքան երջանիկ ենք, որ այսօր մեր աղոթքները, միահյուսված Զերդ Սրբության օրհնությանը, գնում են դեպի մեր արմատները, հպվում նրանց սուրբ հոգիներին:

Այո, Վեհափառ Տեր, Զեր այցն այսօր Զեր հոգևոր զավակներին ոչ միայն գոտեպնդում և աներկյուղ է դարձնում նրանց իրենց հավատքում, այլև ամրացնում և անսասան դարձնում հիմքերը մեր դարավոր հավատքի քարակառույց վկաների:

«Տեր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Արդարև, այսօր մենք օրհներգելու բազում առիթներ ունենք: Մենք ունենք հզոր և փառավոր մի հայրենիք, հավատքի և հույսի օրհնաբաշխ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իր անձը իր ժողովրդի մեջ տեսնող, դարերն իր մեջ ամփոփած, դարերն իր մեջ ապրեցնող աստվածընտիր մի Հայրապետ:

Ապրեք երկար, Վեհափառ Տեր, մեր վերածընված հայրենիքում, Ս. Էջմիածնի օրհնության ներքո՝ բազմապատկելով Զեր եկեղեցաշեն և հայրենաշեն ազգանվեր գործունեությամբ փառքը մեր Եկեղեցու և մայր հայրենիքի ի վայելումն Զերդ Սրբության հովությանը հանձնված հոտի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Իր խոսքի վերջում Տ. Գարեգին եպիսկոպոսը հրավիրում է Նորին Սրբությանը տալու հայրապետական իր օրհնությունները և բարի մաղթանքները հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

«Գոհություն Աստուծո, որ ձեր առաջնորդական փոխանորդ Գարեգին եպիսկոպոսի հրավերով այսօր առիթն ունեցանք այս գեղեցիկ եկեղեցում միասին աղոթելու:

Այս եկեղեցին խոսում է Մեր սրտին, և եթե չենք սխալվում, այստեղ այցելել ենք 1951 թ., երբ Մայր Աթոռ հրավիրվելով՝ եպիսկոպոս ձեռնադրվեցինք և այս եկեղեցում մատուցեցինք եպիսկոպոսական մեր անդրանիկ սուրբ պատարագը:

Փառք Աստուծո, ահա դարձյալ կանգուն է այս աղոթքի տունը, բարեպարդված և լեցուն հավատացյալներով:

Այս առթիվ կկամենայինք Մեր գոհունակությունը և գնահատանքը հայտնել Գարեգին եպիսկոպոսին, հոգևոր դասին, եկեղեցա-վարչական մարմնին, նաև թեմական խորհրդի անդամներին, որոնք ջանք ու ճիգ չեն խնայում Արարատյան թեմում աստվածահաճո շինարար գործունեություն ծավալելու համար: Նաև ձեզ, սիրելի հավատացյալներ, որ միշտ այսպես հոծ բազմությամբ լցնում եք եկեղեցին:

«Լուսավդ քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք»,

«Քո լոյսով մենք բոլորս լուսավորվեցինք»:

Գեղեցիկ մի աղոթք է սա: Այս աղոթքի իմաստը բխում է ամեն մի հավատացյալի սրտից: Լույս ասելով՝ արևի լույսն ենք հասկանում, որը ամբողջ աշխարհն է լուսավորում և կյանք տալիս, առանց որի խոտի շյուղն անգամ չի կարող աճել: Ամբողջ բուսականությունը արդյունքն է այն սննդի, որ արևից է գալիս և ներգործում կյանքի աճման ու զարգացման վրա: Մարդ արարածն էլ նույն արևից է սնունդ առնում և առանց նրա չի կարող ապրել: Սա վերաբերում է բնությանը:

Բայց կա նաև ուրիշ մի աշխարհ, որ բնության մաս չի կազմում. դա մարդու ներքին աշխարհն է, մարդու հոգու աշխարհը, հոգու տիեզերքը: Ինչպե՞ս է լուսավորվում և սընվում այն, արևը այնտեղ չի թափանցում: Մեր ներքին աշխարհը կարիք ունի ուրի՛շ լույսի, որպեսզի զարգանան, աճեն և պայծառակերպվեն մեր հոգիները: Այդ լույսը ահա ինքը Քրիստոսն է: Մեր հայրերը աղոթել են այդ սաղմոսի բառերով մեր հոգիների լուսավորության, մեր հոգիների սննդի համար: Քրիստոսի հրաշալի պատգամները վերաբերում են այդ լույսին, որով սնվում են մեր հոգիները:

Դուք էլ սովորեցեք այս աղոթքը, որը կարճ է թեև, բայց շատ գեղեցիկ է հնչում, մանավանդ մեր գրաբար լեզվով: «Լուսավդ քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք»:

Այս առիթները աղոթքի, զղջումի թելադրիչներ են: Ինչպես բույսերը լույսի, ջրի, օդի կարիք ունեն, մարդն էլ կարիք ունի Քրիստոսի լույսին; այդ աղոթքին, մանավանդ Մեծ պահքի այս օրերին, որպեսզի մաքրվի իր թերություններից ու տկարություններից: Եկեղեցին թելադրում է մեզ, որ սրբագրենք մեզ, որպեսզի լինենք կատարյալ, անթերի ու թեթևացած հոգով կարողանանք լուսավորել մեր անձը անհատական, ընտանեկան, եկեղեցական, հասարակական կյանքում, որպեսզի դառնանք լուսո որդիներ և հարազատ լավակները մեր հայրենիքի և ս. Եկեղեցու:

Այս ուրախ առիթով Մենք հայրաբար բերում ենք ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից օրհնություններ և շնորհներ՝ զարդարելու ձեր կյանքը և ձեր հոգիները ի շինություն ձեր ընտանեկան օջախների և հայրենիքի: Ողջ լերուք ի Տեր: Ամեն»:

Ս. ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը հայրապետական թափորով դուրս է գալիս եկեղեցուց և հրաժեշտ տալիս Արարատյան թեմի քահանայից դասին ու հավատացյալ բազմությանը:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ



ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սույն թվականի փետրվարի 28-ին Արարատյան թեմի քահանայից դասը՝ գլխավորությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, ինչպես նաև Մայր Աթոռի քահանա հայրերը առաջնորդվում են Վեհարան՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետին Ղևոնդյանց տոնի առթիվ և ստանալու նրա հայրական օրհնություններն ու բարի մաղթանքները:

Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը իր խոսքն ուղղելով Հայոց Հայրապետին՝ ասում է. «Բացառիկ ուրախություն է ինձ համար, որպես առաջնորդական փոխանորդ Արարատյան հայրապետական թեմի, Ղևոնդյանց սուրբ տոնի առթիվ քահանայից դասն առաջնորդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին առ Ձերդ Սրբություն: Այս հանդիպման նպատակն է Ձեր պատգամներով առավել իմաստավորել Ղևոնդյանց քահանայից խորհուրդը մեր՝ հոգևորականներիս կյանքում:

Դարերի հեռավորությունից, այսօր, մեր մերձեցումը Ղևոնդյանց խորհրդին մեզ գոտեպնդում և մղում է նոր հանձնառությունների ու վոհողությունների, որոնք մեր ներկա կյանքի խաղաղ պայմաններում անշուշտ տարբերվում են թե՛ իրենց բնույթով և թե՛ բովանդակությամբ: Ես վստահ եմ, մեր այս այցելությունը Մայրավանք Ս. Էջմիածին, թեմիս քահանայից կողմից պիտի ընկալվի որպես հավատարմության և անձնվեր ծառայության ուխտի նորոգում Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ:

Վեհափառ Տեր, այս ուրախալի պահին ցանկանում եմ փոքր-ինչ վաղաժամ շնորհավորել Ձեզ Վարդանանց տոնի, ինչպես նաև Ձերդ Սրբության անվանակոչության առթիվ: Մեր մաղթանքն է և սրտաբուխ աղոթքը, որ ամենակարող Տերը պարգևի Ձեզ արևշատ կենաց օրեր, որպեսզի համայր ամս առաջնորդեք մեզ անշեղորեն դեպի բարին և դեպի խաղաղություն»:

Այնուհետև քահանայից դասի անունից խոսք է ասում Երևանի Ս. Սարգիս եկեղեցուց Տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը: Տեր հայրը իր խոսքի սկզբին նշում է, որ «Հազար հինգ հարյուր տարիներից ավելի է անցել այն հիշարժան օրերից, երբ մի բուռ հայ հոգևորականներ, բարձր գիտակցությամբ, անվարան գնացին դեպի նահատակություն հանուն հայրենիքի և Ս. Եկեղեցու փրկության: Ղևոնդյանք Վարդանանց ոգին էին, նրանք արդարության սուրը դրեցին Վարդանանց ձեռքին՝ աներեր այն շարժելու թշնամու դեմ»: Շարունակելով իր խոսքը Վարդանանց և Ղևոնդյանց անմահ ոգու մասին՝ Տեր Ռուբենը այն միտքն է հայտնում, որ այդ ոգին Ե դարից սկսած հայ ժողովրդի համար դժվարին և ճգնաժամային պահերին որպես փարոս լուսավորում էր հայ հոգիները և ջերմ հայրենասիրական զգացումներով հանուն իրենց արդար դատի նրանց մղում ընդդեմ ոխերիմ թշնամու: Վերջում տեր հայրը իր խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին՝ ասում է. «Նվիրական այս օրերին Հայաստան աշխարհի տարբեր մասերից եկել ենք այստեղ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, մի անգամ ևս նորոգելու մեր սրբական ուխտը, ստանալու Ձեր հայրական օրհնությունները և բարի մաղթանքները: Վեհափառ Տեր, Ձեր օրհնյալ Աջը դրեք նրանց գլուխներին»:

Տեր հոր խոսքից հետո իր օրհնությունն է տալիս Հայոց Հայրապետը: Նա հայրական ջերմ խոսքերով իր հերթին շնորհավորում է ներկաներին Ղևոնդյանց տոնի առթիվ, մաղթում նրանց նորանոր հաջողություններ իրենց հոգևոր առաքելության և հայրենանվեր գործունեության մեջ:

Վերջում, ի հիշատակ այս գեղեցիկ հանդիպման, Վեհափառ Հայրապետը քահանայից դասի հետ նկարվում է Վեհարանի շքամուտքի առջև:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր սկըսվում է «կկարգ Ապաշխարութեան և կԱրևագալի և Ճաշու ժամերգութեան», իսկ «Յերեկոյսն կԽաղաղականն»:

*
* *

Մարտի 11-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը:

«Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ է խոսում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 15-ին, հինգշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանի ընդունելության սրահում տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլսպայանը համառոտակի խոսում է Ֆրանսիայի հայոց թեմին տված իր այցելության մասին: Սրբազան հայրը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մեկնել էր Փարիզ՝ մասնակցելու Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ, հանգուցյալ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հուղարկավորությանը:

Այնուհետև Մայր Աթոռի միաբան Տ. Հովնան աբեղա Տերտերյանը ընթերցում է վերջերս Երուսաղեմում լույս տեսած Եղիշե Պատրիարքի (Եղիվարդ) «Հայրենականք և Տոհմականք» գրքից երկու բանաստեղծություն:

*
* *

Մարտի 18-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական պահոց (Անառակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ աբեղա Խարապյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (Ղուկաս ԺԵ 18) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 22-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի միաբանների, հոգևոր ճեմարանի ուսանողների ներկայությամբ տեղի է ունենում վերջերս հեռուստատեսության «Երևան» ստուդիայի կողմից նկարահանված «Մատենադարան» վավերագրական ֆիլմի Ա և Բ մասերի ցուցադրումը:

Ֆիլմի ցուցադրմանը ներկա էին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, փոխտնօրեն Բաբկեն Չուքասյանը, ինչպես նաև ֆիլմի ռեժիսոր Հովիկ Հախվերդյանը և սցենարի հեղինակ Կիմ Բակշին:

*
* *

Մարտի 24-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգոր քհն. Փանոսյանը:

Ս. պատարագից հետո հոգևոր ճեմարանի ուսանողները ուխտի են մեկնում Խորվիրապի վանք:

*
* *

Մարտի 29-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանի ընդունելությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը միաբանների ուշադրությանն է հանձնում 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած հույն աստվածաբաններեի կողմից գրված հինգ աշխատություններ Հայ Եկեղեցու պատմության, աստվածաբանության և այլ հարցերի վերաբերյալ:





ՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ

Սույն թվականի մարտի 14-ին, կարճատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց հայրենի մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Շիրազը:

Այս առթիվ Ամենայն Հայոց Հայրապետը հանգուցյալի ընտանիքին հղեց հետևյալ ցավակցական հեռագիրը՝

ՎՇՏԱՀԱՐ ԱՐԱ ՇԻՐԱԶԻՆ ԵՎ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Այսօր, երբ Հովհաննես Շիրազը մարմնապես հեռանում է այս անցավոր կյանքից, Մենք ևս բաժանում ենք Ձեր խոր վիշտը և աղոթում, որ բարեգութն Աստված քաղցրությամբ ընդունի նրա մարտնչող արդար հոգին հավիտենական խաղաղության աշխարհում:

Հետայսու նա առավել պիտի ապրի հավերժության բարձունքներում և սրտերում բոլոր հայերի ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մեծատաղանդ բանաստեղծ Շիրազը բաժանվում է այս կյանքից՝ թողնելով մեր ժողովրդին ու հետագա սերունդներին գանձարանը իր գրական պայծառ վաստակի, իբրև արարատված հուշարձան և մշտավառ փարոս հայոց ազգային երազանքների:

Սուրբ Էջմիածնից լույս և օրհնություն Շիրազի անմար հիշատակին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
16 մարտ 1984

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մարտի 25-ին, կիրակի.—Այսօր Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը:

Պատարագի արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հանգուցյալ Հովհաննես Շիրազի հարազատներն ու մերձավորները և հավատացյալների հոծ բազմություն:

Ի ժամ պատարագի «Եւ բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ» բնաբանով քարոզ է արտասանում Ամենայն Հայոց Հայրապետը: Իր քարոզում Նորին Սրբությունը հուզումով և ներշնչանքով ոգեկոչում է պայծառ հիշատակը հայրենի մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազի՝ վեր հանելով նրա գրական վաստակի առանձնահատուկ նշանակությունը հայ ժողովրդի համար հետևյալ խոսքերով.

«Սիրելի սգակիր ժողովուրդ, այս պահին, երբ քահանայք և ժողովուրդ հավաքվել ենք Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի կամարների ներքև՝ աղոթելու մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի հոգու համար, ես մտածում եմ՝ ի՞նչ բնաբանով սկսել իմ սրտի խոսքը, որ ամենահարազատ կերպով արտահայտի իմ գնահատանքը, իմ ապրումը նորոգ հանգուցյալ՝ երկրորդ ամենայն հայոց բանաստեղծի նկատմամբ:

Ներքին մի զգացում թելադրում է ինձ իբրև բնաբան, իբրև առաջնորդող խոսք ընտրել ավետարանական վկայությունը Հիսուսի

մասին, թե՝ Նրանով մարմին առավ Աստուծո խոսքը, որը բնակվեց մեր մեջ:

Ինչպես հայտնի է բոլորիդ, քրիստոնեական վարդապետության ամենաէական, ամենայուրահատուկ ուսմունքն այն է, որ Հիսուս աշխարհ եկավ ու մարմին առավ որպես խոսքը Աստուծո, և այդ խոսքը բնակվեց մարդկանց հոգիներում որպես «Ճանապարհ, ճշմարտություն և Կյանք»:

Այս պահին, այո, ես մտածում եմ, որ ինչպես Հիսուս հանդիսացավ մարմնավորումը Աստուծո խոսքի, այլ մակարդակի վրա, այլ իմաստավորմամբ, մեզ՝ հայերիս համար, Հովհաննես Շիրակ բանաստեղծը իր գրական վաստակով հանդիսացավ ամենապայծառ, ամենահարազատ, ամենահանդուգն մարմնավորումը հայ ժողովրդի խոսքի, հայ ժողովրդի ազգային խղճի փոթորկումների ու ազատ երազանքների:

Հովհաննես Շիրակը իր փայլատակող տաղանդով բանաստեղծորեն մարմին տվեց մեր ժողովրդի հոգու ձայնին, որ հավետ պիտի քաղցր ու հուժկու հնչի հայոց կյանքում թե՛ ի Հայաստան և թե՛ ի սփյուռս աշխարհի՝ որպես ոգեկան ուժականություն և պատգամ կենդանարար, հավերժ աննահանջ, հավերժ հպարտ ու հաղթական, ինչպես ինքը Արարատը մեր վեհափառ, մեծ վկան աշխարհի ու հայոց պատմության:

Եվ այս ճշմարտվեց մանավանդ անցյալ շաբաթ օրը, մարտի 17-ին, երբ հայրենի հողին էր հանձնվում հոգնաբեկ մարմինը Հովհաննես Շիրակի: Թաղում չէր այդ, այլ մի հաղթության վկայություն, որպիսին վաղուց չէր տեսել մեր մայրաքաղաքը: Մի ամբողջ ժողովուրդ իր բոլոր խավերով, անթիվ-անհամար, եկել էր հրաժեշտ տալու Շիրակի դագաղին, ի գլուխ մեր հայրենի կառավարության ամենահեղինակավոր ղեկավարների: Ժողովուրդը տխուր էր, բայց ոչ հուսահատ, լի էր վշտով, բայց ոչ պարտված, սգակիր էր, բայց ոչ որբացած: Բոլորը, բոլորս, զգում էինք և գիտակցում, թե Շիրակը հող դառնալով մեկ թողնում է՝ իր անկորնչելի գործով մարմին առած՝ խղճի խոսքը համայն մեր ազգության:

Եվ բոլորը տեսնում էին հրաշքը Երևանի պողոտաների վրա, ալեկոծվող ոգեշարժ թափորը հարյուր հազարների, փոթորկված ինչպես Վանա ծովը ալեծուփ:

Վերջերս ես մի քանի տող գրի առա մեր սուրբ լեռան՝ Արարատին նվիրված:

Այս պահին, իբրև գերագույն արտահայտություն իմ մեծարման, Հովհաննես Շիրակի արդեն ոգի դարձած ճակատին կետեղում եմ այս խոսքերը.

«Դո՛ւ՝ հրավեր հայրենյաց, դո՛ւ՝ կոչ արդարության, դո՛ւ՝ ստուգություն գալիք հաղթությանց»:

Այս խոսքերը ես ուղղել եմ Արարատին, սակայն մտածում եմ, որ նույն խոսքերը կարող եմ նվիրել նաև Հովհաննես Շիրակին, մեր գիտակցության առջև վաղուց ի վեր արդեն նա դարձել է մի ոգեղեն Արարատ:

Եվ այժմ հրավիրում ենք Ձեզ մասնակցելու հոգեհանգստյան արարողությանը և մեկ հետ աղոթելու մեր բոլորիս պաշտելի բանաստեղծ Շիրակի հոգու խաղաղության համար:

Թույլ տվեք նաև մեր խորագույն ցավակցությունները հայտնել հանգուցյալի սգակիր ընտանիքի անդամներին, նրա կողակցին, զավակներին և բոլոր մերձավորներին:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն Հովհաննես Շիրակի հոգուն:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն նրա անմեռ վաստակին»:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Հովհաննես Շիրակի հիշատակին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է Շիրակի սգակիր ընտանիքի անդամներին ու հարազատներին և անձամբ հայտնում նրանց իր ցավակցությունները:



ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)*

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հայ ճարտարապետության այս եզակի կոթողը 618 թ. կառուցել է տվել Կոմիտաս կաթողիկոսը, կարգադրելով քանդել ս. Հռիփսիմեի գերեզմանի վրա Սահակ Պարթևի օրոք 395 թ. կառուցված մատուռը՝ «զի կարի ցած ու մթին էր շինուածն»[43]:

Իր ողջ գոյության ընթացքում այն հիմնականում կանգուն և անփոփոխ է մնացել: Մասնակի վերանորոգումները կատարվել են ուշ միջնադարում, երբ ս. Էջմիածնի Մայր Աթոռը ծավալում էր իր վերաշինական գործունեությունը նախ Վաղարշապատում, ուր եկեղեցիները «աւերեալ և խախտեալ.....»[44] էին, ապա նաև ուրիշ վայրերում[45]:

1653 թ. Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը (որի գահակալության տարիները առանձնապես հայտնի են վերաշինական աշխատանքներում Վաղարշապատում և այլուր) ձեռնարկում է նաև ս. Հռիփսիմեի եկեղեցու նորոգումը: Առաքել Դավրիժեցին այսպես է նկարագրում. «Իբրև կատարեալ աւարտեցան ամենայն շինուածք տաճարին Գայիանեայ կուսին, ապա գնացին ի տաճար սրբուհի կուսին Հռիփսիմեայ և ձեռն ի գործ արկեալ սկսան կայն ևս նորոգել: Վասն զի **յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն գլուխ կաթուղիկէին և տանիքն բովանդակ, և երեսք որմոցն և յատակք նորին, իսկ ի ներսի կողմանէ բեմն, և սալարկ յատակն, և չորից** (ընդգծումը մերն է—Վ. Հ.) **խորանաց մէջն** այս ամենայն, զոր յիշեցի, աւերեալ և քայքայեալ էին. վասն որոյ բազում ջանիւ և յոքնակի աշխատութեամբ գուն գործեալ մինչև զամենայն նորոգեալ կատարեցին և ի վերայ գագաթին եկեղեցւոյն կառուցին զնշան տէրունական խաչին»[46]:

Մի այլ վկայությամբ, Փիլիպպոս կաթողիկոսը «...տայ կառուցանել գաւիթ փոքրիկ ի վերայ արևմտեան դրանն չորս սեամբք՝ որոց երկուքն կից յորմն՝ աստի և անտի դրանն, և երկուքն նոցին»: Նշված շինարարական աշխատանքների հիշատակությունը նա արձանագրել է տալիս քառաթև խաչի պատվանդանի վրա հետևյալ բովանդակությամբ. «'Ի թուիս ՌՃԲ (1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն հայոց վերըստին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսանացն Հռիփսիմեայ և Գայիանեայ»[47]:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գահակա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից և 1984 թվականի № № Ա—Բ-ից:

[43] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 141:

[44] Առաքել Դաւրիժեցի, նույնը, էջ 290:

[45] Նույնը, էջ 303—307, 326—329, 346—353:

[46] Նույնը, էջ 328:

[47] Յովհաննէս եպիսկոպոս Շանխաթունեանց, նույն տեղը, էջ 264:

լության տարիներին ս. Հռիփսիմեի վանքապատկան քառանկյունի հողամասը պարըսպապատվում է հողաշեն պարիսպներով՝ «հանդերձ բրգամբքն և քարաշէն կամարաւն մեծի դրանն հիւսիսային շինեցաւ ի հիմանց յամի 1776, արդեամբք Մկրտիչ եպիսկոպոսի, միաբանի սրբոյ Էջմիածնի»[48]:

Ավելի ուշ, 1790 թ. Ղուկաս կաթողիկոս Կարնեցին «...տայ կառուցանել վանգակատուն վայելուչ ի վերայ այնր յիշատակեալ փոքր գաւթին եղելոյ ի վերայ արևմտեան դրան տաճարիս, արդեամբք Խաչիկ աղայի Զնթլումեան, որոյ արձան յիշատակագրութեանն կայ ի ներքնայարկի վանգակատանս յորմն հիւսիսակողմն դրանն...»[49]:

Զանգակատան կառուցմամբ էլ ընթերցելու համար դժվար մատչելի է դարձել արևմտյան ս·ատի վերնամասում (աջ կողմից) փորագրված տաճարի շինարարական երկրորդ (առաջինը գտնվում է ներսում, արևելյան աբսիդի պատին) արձանագրությունը, որտեղ ասվում է. «Ես Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ յԱթոռ սրբոյն Գրիգորի, և շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի»[50]:

Շինարարական որոշ աշխատանքներ իրականացվել են ավելի ուշ, 19-րդ դարի վերջերին: 1894 թ. Խրիմյան Հայրիկի օրոք վանքի հողամասի հարավ-արևելյան անկյունում կառուցվել է երկհարկանի մի շենք միաբանության համար, ու հողաշեն պարիսպների արևելյան և հարավային հատվածները փոխարինվել են քարաշեն պարիսպներով:

Ս. Հռիփսիմեի տաճարը հոգատարության առարկա է հանդիսացել նաև սովետական ժամանակաշրջանում: 1936 թ. Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեն ամրացնել է տվել տաճարի հիմքերը: Այդ շրջանում նորոգվում են տաճարի տանիքը, գմբեթը, գետնախարիսխները, բակը, պարիսպները, հարակից շենքերը:

Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեն բարեկարգման աշխատանքներ է կատարել նաև հետագա տարիներին: 1945 թ. գարնանը ծառատնկվել է բակի հարավային մասը:

Այսպիսին է ս. Հռիփսիմեի տաճարի վերաշինությունների համառոտ պատմությունը: Երբ Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության առաջին իսկ տարվանից ս. Էջմիածնի Մայր Աթոռը վերստին ձեռնարկեց վաղուց ընդհատված իր վերաշինական գործունեությունը, որոշ աշխատանքներ սկսվեցին նաև ս. Հռիփսիմեի վանքում: Սկզբնապես դրանք բարեկարգման բնույթ էին կրում: Տուֆ քարերով սալարկվեց տաճարի շրջապատը, նորոգվեց ներքին բակից դեպի վերին բակը տանող քարաշեն սանդուղքը, մի աղբյուր կառուցվեց ներքին բակում (նախագծի հեղինակ՝ ճարտարապետ Ռ. Իսրայելյան), շրջապատը կանաչապարդվեց և այլն:

Այնուհետև Վազգեն Ա Հայրապետը նպատակ ունենալով վերականգնելու ս. Հռիփսիմեի տաճարի հնամենի ներքին տեսքը, մաքրել տվեց ծեփը՝ «նկարապարդված» նմանակեղծ մարմարե քարերով, քանի որ, ինչպես իրավացիորեն նշում է ճարտարապետ Հր. Հակոբյանը՝ այդ ծեփերի մաքրման աշխատանքների ղեկավարը, «Բոլոր այցելուներն ափսոսանք էին հայտնում, որ հնամյա, սըրբատաշ երեսպատումը ծածկված է այդ անճաշակ և հայ ճարտարապետությանը միանգամայն խորթ, մարմար պատկերող ծեփով»: Ստանալով մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ճարտարապետության պետական մարմինների հավանությունը՝ ծեփի մաքրման աշխատանքների կատարումը պատվիրվեց հատուկ գիտա-վերանորոգման արվեստանոցին:

Վերջինս, հանձն առնելով պատվերը, աշխատանքների ղեկավար կարգեց վերանորոգման գործում բավականաչափ փորձառու ճարտարապետ Հրանտ Հակոբյանին: 1958 թ. հունվարի 20-ին Հուշարձանների պահպանության վարչության գիտական խորհուրդը տեղում գումարեց իր արտահերթ նիստը՝ քննարկելու համար ծեփի հեռացման հետ կապված գիտաս-մեթոդական և նախապատրաստական հարցերը: Աշխատանքներն ըսկըսվեցին նույն թվականի մայիսի 15-ից:

Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովը, ընդունելի համարելով ծեփի հեռացման համար կատարված աշխատանքները, հավանություն տվեցին կրաջրի հետքերը ավազաջիթ մեքենայով մաքրելու և քայքայված մասերը վերանորոգելու գիտական մեթոդին:

Քանի որ առաջարկվող միջոցառումները պահանջում էին լրացուցիչ ծախսեր, ուստի կազմվում է մի նոր նախահաշիվ 43720 ռ. առումարով, որը հաստատվում է 1958 թ. նոյեմբերի 10-ին:

Ավազաջիթ ապարատի կիրառությունը իրեն լիովին արդարացրեց. հարթություններից ու մակերևույթներից վերացան կրաջրի բոլոր հետքերը ու վերականգնվեց տաճարի ներքին տեսքը գորշավուն տուֆի իր բնական երանգներով: Նորոգվեցին պատերի բոլոր խարխլված մասերը. ջարդված քարերը փոխա-

[48] Նույնը, էջ 264:
[49] Նույնը, էջ 265:
[50] Նույնը, էջ 264:

ռինվեցին նորերով: Առանձին կգուշավորությամբ վերականգնվեցին հյուսիսային կողմի խախտված հովհարաձև կույգ տրոմպները՝ ճշտորեն վերարտադրելով հանդիպակաց կողմի լավ պահպանված տրոմպների ձևերը: Գմբեթի հիմքում օղակաձև միջանցքի փայտյա բպրիքները փոխարինվեցին երկաթյա բպրիքներով:

Երբ այդ բոլորն ավարտվեց, տաճարի ներքին տարածությունը դարձավ ընկալելի, և այն ժամանակ միայն ակներև դարձավ կատարվածի բացառիկ նպատակահարմարությունը: Տաճարի ներքին մասը հնչեց իր անեղծ տեսքի հմայիչ ուժով:

Այս բոլորից հետո կատարվեցին նոր աշխատանքներ տաճարի ներքին բարեկարգումների ուղղությամբ: Վեմ քարի փոխարեն տեղադրվեց նոր սեղան Ավագ (արևելյան) խորանում և հատուկ նախագծով պատրաստվեց մետաղական նոր ջահ: Երկու նախագծերն էլ պատրաստեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և խորհրդով, վերեղվեց Աստվածամոր նկարը (գործ՝ վաղամեռիկ նկարիչ Հովհաննես Մինասյանի):

Այժմ անդրադառնանք գիտական այն հայտնագործություններին, որոնք անմիջական արդյունքը հանդիսացան սկզբնապես կուտ գեղագիտական նպատակներ հետապնդող ծեփի վերացման աշխատանքների:

Դրանցից առաջինը վերաբերում է գմբեթին: Նրա ներքին սֆերիկ մակերևույթի վրայից ծեփը հեռացվելուց հետո, բացվեցին վարպետների բազմաթիվ նշաններ: Այս նշանների համեմատությունը տաճարի արտաքին ու ծեփից մաքրված ներքին պատերի քարերի վրա եղած նշանների հետ, միանգամայն համոզում է, որ դրանք հիմնականում նման են միմյանց:

Այս վերին աստիճանի ուշագրավ հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ գմբեթի ներքին սֆերայի շարվածքը նախնական է, անեղծ, այսինքն վերանորոգման չի ենթարկվել: Մյուս հետևությունը, ինչպես կարելի է կռահել Առաքել Դավրիժեցու վկայությունից, այն է, որ գմբեթը վերանորոգվել է միայն արտաքուստ, և այդ կապակցությամբ էլ առաջացել են 7-րդ դարի հայ ճարտարապետության անհարիր ձևերը:

Ծեփի մաքրման հետևանքով կատարված գիտական մի այլ կարևոր հայտնագործություն պետք է համարել գմբեթատակ 4 անկյուններում եղած 3/4 խորշերը պսակող հովհարաձև տրոմպների բացումը: Սրանց ձևերը աննախադեպ են և որպես գմբեթային փոխանցման կոնստրուկտիվ միջոց 7-րդ դարի եկեղեցիներում մինչ այդ չեն հանդիպել[51]:

Մի ուշագրավ հայտնագործություն ևս կատարվեց տաճարի հատակը վերանորոգելիս: Նախապես հայտնի էր, որ ժամանակակից հատակի նիշը, հավանաբար Փիլիպպոս կաթողիկոսի օրոք կատարված վերանորոգումների ժամանակ, մեկ մետրաչափ բարձրացվել է: Նախնական հատակի նիշը պարզելու ու գուցե վերականգնելու նպատակով, պեղումներ կատարվեցին հյուսիս-արևելյան 3/4-ից խորշի առջև ու երևան եկավ հոնիական ոճի քանդակազարդ, սև գույնի մի մեծ տուֆաքար, որը շրջված վիճակում դրված էր հիմքում: Եզրակացությունը պարզ էր. ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցման ժամանակ հիմքերում օգտագործվել էին հին Վաղարշապատի անտիկ կառուցվածքներին (ենթադրաբար՝ հեթանոսական տաճարի) պատկանող քարեր:

Այս ուշագրավ փաստը թելադրեց պեղումներ կատարել նաև տաճարի հատակի այլ մասերում: Այդ նպատակով հրավիրվեց ճարտարապետ Ա. Սահինյանը: Նրա ղեկավարությամբ կատարված պեղումների ժամանակ նույնանման մի քար էլ երևան եկավ հարավարևմտյան որմնամույթի տակ[52]: Բացի այդ, նա պեղումներ կատարեց բեմի առաջամասի հատակում՝ պարզելու համար դեպի նահատակված կույսի դամբարանը տանող տաճարի այս մասից անցյալում գոյություն ունեցող մուտքի հետ կապված որոշ հարցեր:

Ճարտարապետ Ա. Սահինյանի հայտնագործումը գիտական մեծ հետաքրքրություն էր ներկայացնում, ուստի անհրաժեշտ նկատվեց տաճարի ներսում մույթերի հիմքում բացված անտիկ ձևերի քանդակազարդ քարերը պահպանել ապակյա ծածկերի տակ՝ ցուցադրման նպատակով: Անհրաժեշտ նկատվեց նաև նույն կերպ ծածկել տալ դեպի ս. Հռիփսիմեի դամբարանը իջնող բացված մուտքը:

Այսպիսին է ս. Հռիփսիմե տաճարում իրականացված վերաշինական աշխատանքների ու նրանց շնորհիվ կատարված գիտական

---

[51] Տարիներ հետո, 1967 թ. Հռոմի համալսարանի գիտական արշավախումբը պատմական Վասպուրականի շրջանում հայտնաբերեց Սորադիրի ս. Էջմիածին եկեղեցին, որի տրոմպները նույնն են, ինչ որ ս. Հռիփսիմեում բացվածները (տես Tommaso Breccia Fratadocchi, La Chiesa s. Ejmiacin a Soradir, Roma, 1971.

[52] Բացված քարերի մասին հաղորդումներ է կատարել Ա. Սահինյանը. տես «Հեթանոսական տաճարի նորահայտ բեկորներ», «Հայրենիքի ձայն», 1965, 24 հոկտեմբերի, և «Էջմիածին», 1959, էջ 20—21:

հայտնագործությունների հակիրճ նկարագրությունն ու գնահատականը:

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ՈՒ ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄ

Հայ ժողովրդի մեծագույն երախտավոր, հայկական գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի անունն է կրում Օշականի եկեղեցին: Պատմական վկայությունների համաձայն, երբ 440 թ. վախճանվում է սուրբ Մեսրոպը, իր աշակերտներից մեկի՝ հայրապետ Վահան Ամատունու (որ ծնունդով օշականցի էր) խնդրանքով նրա աճյունը հողին է հանձնվում Օշականում[53]:

Արդեն համաժողովրդական ուխտավայր դարձած գերեզմանի վրա, ինչպես տեղեկացնում է Կորյունը, «երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց քրիստոսասեր ջանքերով սքանչելի տաճար կանգնեցնել տաջած, քանդակավարդ քարերով և տաճարի ներսում շինեց Սուրբ գերեզման»:

Ի՞նչ հորինվածքի էր եկեղեցին, ինչպե՞ս հասկանալ պատմիչի հիշատակությունը եկեղեցու շատ խորաններ ունենալու մասին:

Այդ հարցերին փորձել է անդրադառնալ Թորոս Թորամանյանը. «Այս եկեղեցին ալ,—գրում է նա,—5-րդ դարու եկեղեցիներուն նման, ունեցել է արևելյան կողմից դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևեր. սրանց հիմերը մինչև այժմ կերևին հողին երեսին: ...Այս տիպին եկեղեցիներ են՝ Տեկոր, Երեռույք, Օձուն, Արթիկ»[54]: Այսպիսով, Թ. Թորամանյանի կարծիքով, Օշականի եկեղեցու նախնական շենքը բազիլիկատիպ է եղել: Դա միանգամայն հավանական է, սակայն չբացահայտված է մնում եկեղեցու շատ խորաններ ունենալու հարցը: Շուրջ 1200 տարի իր գոյությունը պահպանած եկեղեցին, Առաքել Դավրիժեցու վկայությամբ, այնչափ քանդված ու խախտված էր, որ Փիլիպպոս Ա. Աղբակեցի կաթողիկոսի օրոք այն նորոգվում է 1639—1645 թթ. ընթացքում: Ըստ Դավրիժեցու, եկեղեցու տանիքն ամբողջովին քանդված էր և միայն Ավագ խորանի ծածկն էր պահպանվել: «Եւ ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ,—հայտնում է պատմիչը,—սուրբ հայրապետն Փիլիպպոս սկսաւ կայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատասիրութեամբ, խարտեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց կբովանդակն ի թուականիս մերոյ ՌՂԴ, ի փառս Աստուծոյ»[55]:

Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ վերաշինված եկեղեցու մասին գաղափար ենք կազմում Հովհաննես Շահխաթունյանցի տեղեկություններից: Ըստ նրա, եկեղեցին անույն էր, ինչպես այժմ, իսկ արևելյան կողմից այն ավարտվում էր ավագ խորանով և երկու կողմերի ավանդատներով[56]:

Վերաշինված եկեղեցին ևս 200 տարվա չափ գոյատևել է, սակայն անցած դարի 40-ական թվականներին դարձյալ հիմնական վերանորոգման կարիք է զգացվել, քանի որ, ինչպես հայտնում է Շահխաթունյանցը, եկեղեցու կամարակապ ծածկը խոնարհված էր ու այդ ժամանակ փայտով էր ծածկված:

Չնայած 1840 թ. և հետո կատարված մասնակի (հավանաբար միայն կտուրին վերաբերող) նորոգումներին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնական վերանորոգումը համարվել է անհետաձգելի հարց, որի մասին, ինչպես վկայում է 1850 թ. իր կոնդակը, մտահոգվել է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը, սակայն չի կարողացել այն իրականացնել:

Այդ է պատճառը, որ ժամանակակիցները ցավով են արտահայտվել եկեղեցու անմխիթար վիճակի մասին: Միքայել Նալբանդյանը, որ անցյալ դարի 60-ական թվականներին դեպի Հայաստան կատարած ճանապարհորդությունների ժամանակ այցելել է նաև Օշական, թողել է հետևյալ տողերը.

«Որ ավգին գիր պարգևեց, կյանք տվեց հայոց լեզվին,
Ավգը նորա պլացավ գիր ընծայել անշուք շիրմին»[57]:

Եկեղեցու հիմնական վերաշինման ուղղությամբ գործնական միջոցառումներ իրականացվում են Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի գահակալության օրոք (1863—1880):

Հիմնական վերաշինությունը կատարվում է Այեքսանդրապոլից հրավիրված վարպետների միջոցով ու ավարտվում 1879 թ.: Այդ առթիվ եկեղեցու արևմտյան դռան վերևում ամրացված մի մարմարե տախտակի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը.

---

[53] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 349: **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 128, 129:

[54] **Թ. Թորամանյան**, նյութեր, հտ. 1, Երևան, 1942, էջ 243;

[55] **Առաքել Դաւրիժեցի**, նույնը, էջ 351—352:

[56] **Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց**, նույն տեղը, էջ 77:

[57] **Միքայել Նալբանդյան**, երկեր, 1953, էջ 32;

«Ողորմութեամբն Աստուծոյ սրբազնակատար հայրապետ Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ կաթուղիկոս վերակառոյց ի հիմանց զայս եկեղեցի Օշական գեղջս եւ զդամբարան սրբոյն Մեսրոպայ թարգմանչի, որ մերոյ ի սմայ. տրօք հայոց Ռուսաստանի Յամի 1879 և հայոց ՌՅԻԹ»:

Ավելի ուշ, 1884 թ. ավարտվում է ավագ խորանի վրա բարձրացող աշտարակաձև զանգակատան շինարարությունը: Նույն թվականին Մաշտոցի գերեզմանի վրա (դամբարանը, ինչպես հնում, շարունակում է մնալ Ավագ խորանի տակ) դրվում է մարմարյա գերեզմանաքար՝ համապատասխան մակագրությամբ[58]:

Գևորգ Դ կաթողիկոսի օրով կատարված վերաշինության հետևանքով Փիլիպպոսի ժամանակ վերակառուցված եկեղեցուց շատ քիչ բան է պահպանվել, թերևս միայն արևելյան կողմի Ավագ խորանն իր հարակից մասերով ու ստորգետնյա դամբարանով:

1879 թ. կատարված վերակառուցումից հետո Օշականի ս. Մեսրոպ-Մաշտոց եկեղեցին միանավ բազիլիկ կառուցվածք էր՝ երեք արտաքին մուտքով (հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից); Ավագ խորանով՝ արևելյան կողմից ու նրա երկու կողմերին հարող ավանդատներով (որոնց մուտքերը եկեղեցու ներսից են), Ավագ խորանի տակ գտնվող և Մաշտոցի շիրմաքարն ամփոփող գետնահարկ դամբարանով (որի մուտքը հարավ-արևելյան ավանդատնից է): Եկեղեցին անգամբեթ է՝ երկլանջ կտուրով, Ավագ խորանի վրա բարձրացող աշտարակաձև զանգակատնով:

Օշականի եկեղեցու մասնակի վերանորոգման, բարեզարդման ու շրջապատի բարեկարգման նոր աշխատանքներ ձեռնարկվեցին Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության օրոք, երբ 1961 թ. պիտի նշվեր հայ ժողովրդի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Դրանք իրականացան ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցով և ճարտարապետ Ա. Գալիկյանի ղեկավարությամբ, շնորհալի մասնագետ-ճարտարապետների ու նկարիչ-արվեստագետների մասնակցությամբ:

Ըստ 1957 թ. փետրվարին կազմված շինարարական նախագծերի, պիտի ցանկապատվեր եկեղեցու հողամասը, բարեզարդվեր Մեսրոպ Մաշտոցի դամբարանն ու շիրմաքարը՝ պահպանելով գոյություն ունեցող մուտքը և բացելով դամբարանից մի լուսամուտ դեպի եկեղեցի: Որոշ նախապատրաստական աշխատանքից հետո, գործնական քայլերը եկեղեցու տանիքի և ներսի վերանորոգման ու բարեզարդման ուղղությամբ սկսվեցին 1960 թ. և հիմնականում ավարտվեցին 1966-ին: Ըստ որում մինչև 1964 թ. իրականացվեց զուտ շինարարական մասը: Որոշ աշխատանքներ կատարվեցին նաև հետագա տարիներին: Իսկ 1964—1966 թթ. ներսի պատերը ծածկվեցին որմնանկարներով:

Շինարարական աշխատանքները եկեղեցում նախապես տարվեցին հարավ-արևելյան ավանդատան և դամբարանի մեջ: Այդ առթիվ բոլոր պատերը մաքրվեցին ծեփից ու առանձին տեղերում քայքայված քարերը փոխարինվեցին նորերով, հատակները սալարկվեցին բազալտե քարերով, վերակառուցվեցին եկեղեցուց ավանդատուն և այստեղից դամբարան իջնող աստիճանները:

Մեսրոպ Մաշտոցի հին գերեզմանաքարը 1960 թ. հանվեց և փոխարենը դրվեց նոր գերեզմանաքար: Այն պատրաստված էր միակտուր բազալտե քարից ու փորագրված ճարտարապետ Լիպարիտ Սադոյանի էսքիզով: Նկատի ունենալով գերեզմանաքարի մուգ երանգը, որով այն չէր տարբերվում իր հիմնաքարից և աննշմարելի էր կիսամութ դամբարանի հատակին, հարմար նկատվեց այն փոխարինել (1962 թ.) իտալական հղկված ու բաց երանգի օնիքս քարից պատրաստված մի նոր գերեզմանաքարով՝ հետևյալ արձանագրությամբ. «Մեսրոպ Մաշտոց, 361—440» (հեղինակ՝ ճարտարապետ Բաղդասար Արզումանյան)[59]:

Դամբարանում կատարված բարեզարդման աշխատանքների թվին են պատկանում արևելյան խորշի մեջ նոր խաչքարի կանգնեցումը (հեղինակ՝ ճարտարապետ Բաղդասար Արզումանյան): Նույն հեղինակի էսքիզներով են իրականացված Մաշտոցի գերեզմանի գլխամասում պատից կախված բրոնզյա

[58] Հայր Ղ. Ալիշան, «Արարատ», էջ 491:

[59] Օշականի եկեղեցու վերանորոգման վերաբերյալ հաղորդումների մեջ սխալմամբ այս նոր գերեզմանաքարի մակագրության հեղինակը ևս ճարտարապետ Լ. Սադոյանն է նշված: Իրականում նա միայն փոխարինվածի հեղինակն է: Մեսրոպ եպիսկոպոս Սրմբատյանցի նախաձեռնությամբ և Ղարաբաղի թեմի առաջնորդ Անդրեաս եպիսկոպոսի ծախքերով 1884 թ. տեղադրված մարմարյա գերեզմանաքարը նպատակահարմար համարվեց պահպանել ու կանգնեցվեց դամբարանի արևելյան պատին կից:

կանթեղը և դամբարանի հյուսիս-արևելյան կողմը բացվող լուսամուտի լատունյա ցանցաճաղը: Դեպի եկեղեցին բացված լուսամուտի բրոնզյա ցանցաճաղը իրականացվել է ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի էսքիզով:

Նշված ավանդատան ներսում, արևելյան պատից դեպի առաջ, եկեղեցուց բացվող մուտքի դիմաց տեղադրված բազալտե պատվանդանի վրա կանգնեցվեց հղկված բազալտից պատրաստված մի կոթող՝ մեսրոպյան այբուբենի երկաթագիր տառերով (հեղինակ՝ ճարտարապետ Բաղդասար Արզումանյան):

Վերը թվարկվածներով ավարտվում են վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները դամբարանում և հարավ-արևելյան ավանդատնում: Այնուհետև աշխատանքները շարունակվում են եկեղեցուց ներս:

Եկեղեցու բարեկարգման մյուս կարևոր առաջադրանքը՝ Ավագ խորանում նոր սեղանի կառուցումն էր, որի նախագիծը վերջնական հավանության արժանացավ 1966 թ.: Այն իրականացվեց իտալական մարմարով: Այնուհետև սեղանի կենտրոնական հարթությունը ծածկվեց Աստվածամոր որմնանկարով (հեղինակ՝ նկարիչ Հովհաննես Մինասյան):

Զուգահեռաբար աշխատանքներ էին տարվում եկեղեցում պատշաճ բարեփոխումներ մտցնելու ուղղությամբ: Ներքին տարածության միասնականությունը վերականգնելու նպատակով քանդվեց-վերացվեց ուշ ժամանակներում ներսից արևմտյան դռան վերևում կառուցված փայտաշեն, բավականաչափ հնացած ու տգեղ վերնատունը: Աղոթասրահի ողջ հատակը սալարկվեց տուֆաքարով, որմնամույթերի ու թաղակիր կամարների վրայից մաքրվեց ծեփը ու տակից բացվեց տուֆաքարի շարվածքը: Ծեփից մաքրվեցին նաև հարավային և հյուսիսային երկայնական պատերի ու արևմտյան պատի ստորին մասերը, ներառյալ նաև նրանց վերնամասի գոտիները, Ավագ խորանի վերնամասի ճակատային հարթությունը և գմբեթարդի հիմքի գոտին: Տաշելու միջոցով թարմացվեց Ավագ խորանում ամփոփված բեմի ճակատային պատը, ապա խորանի պատի ծեփը նորոգվեց ու ներկվեց: Գմբեթարդի հիմքի գոտու տակ փորագրվեց մի մակագրություն Մաշտոցի հայտնի խոսքերով. «Ճանաչել վիմաստութիւն և վխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Կաղնու փայտից պատրաստված նոր դռներով փոխարինվեցին եկեղեցու հարավային, արևմտյան ու հյուսիսային, ինչպես նաև 2 ավանդատների հին դռները, ըստ որում, արևմտյան դռան գլուխը դրսից պատվեց պղնձյա դրվագված թերթով:

Առաստաղից կախվեց Ավագ խորանի մոտ, հարավ-հյուսիս դռների առանցքով, երկաթակուռ նոր ջահը՝ պատրաստված Իտալիայում, ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի էսքիզով:

Դրսի բարեկարգման աշխատանքների թվում հիշատակելի է դեռևս 1960 թ. ճարտարապետ Մ. Մակմանյանի նախագծով տուֆի սրբատաշ քարերից կառուցված և 300 մետրից ավելի երկարություն ունեցող պարըսպապատը (փողոցի կողմից ցանցկեն, երկաթե ցանցաճաղով), եկեղեցու շրջապատի (բացի արևելյան կողմից) տուֆակերտ մայթի պատրաստումն ու շրջափակի կանաչապատումը: Բարեկարգման աշխատանքների վերջում եկեղեցու հարավ-արևմտյան անկյան մոտ բազալտե սրբատաշ քարերից կառուցվում է մի աղբյուր (հեղինակ՝ ճարտարապետ Արեգ Իսրայելյան):

Սրանցով ավարտվում է Օշականի սուրբ Մեսրոպ-Մաշտոց եկեղեցու վերանորոգումների ու բարեկարգումների կուտ շինարարական մասի իրականացումը: Այս մասին մարմարյա մի տախտակի վրա՝ փակցված եկեղեցու ներսի պատին, արևմտյան դռան ձախ կողմում, կա հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի
Առաջնոյ
Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,
յամի Տեառն 1960—1964 վերանորոգեցաւ
սուրբ եկեղեցիս ի ներքոյ և յարտաքնոյ
և ի հիմանէ կառուցան Ավագ սեղանն, դամ
բարանն եւ շիրիմն ս. Մեսրոպայ
Վարդապետի,
պարիսպքն եւ շրջափակն,
նուիրատուութեամբ
և արդեամբ երկնկացի Հայկ և Թորգոմ
Ղազարոսեան եղբարց, որք ի Միլանոյ
քաղաքի,
ի յիշատակ ծնողացն իւրեանց Գաբրիելի եւ
Անուշի ի վայելումն ազգիս Հայոց:
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Այնուհետև եկեղեցու բարեկարգման աշխատանքները թևակոխեցին երկրորդ և վերջնական փուլը: Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի առաջադրանքով որոշվեց եկեղեցու ներսի պատերը ծածկել որմնանկարներով, որպեսզի ներքին տարածության պարզ ու անարտահայտիչ պատկերը փոխվի ու մեսրոպյան դարաշրջանի շնչով ու մեծագործությունների գեղարվեստական մարմնավորմամբ այն հագենա, պատմի տառերի գյուտի մեծ խորհրդի ու նրա նշանակության մասին՝ ժողովրդի կյանքում:

Առաջադրանքը իրականացնելու համար հրավիրվեցին նկարիչներ Հովի. Մինասյանը և Հենրիկ Մամյանը: Ստանձնելով այդ պատվավոր և ստեղծագործական մեծ ներդրում պահանջող պատվերը՝ նրանք ջանասիրաբար գործի անցան, մշակեցին ու քննարկման ներկայացրին էսքիզները:

Հեղինակները, ձգտելով օգտագործել նաև ճարտարապետական հնարավորությունները, որմնանկարն ամբողջապես մտահղացել են եռապատկեր հորինվածքով: Ավագ սեղանի դիմաց, արևմտյան կողմում, ամբողջ պատով մեկ տեղավորել են գլխավոր հորինվածքը, իսկ աջ ու ձախ կողմերում, հարավային ու հյուսիսային երկայնական պատերի արևմտյան հատվածների վրա՝ երկրորդական բաղադրիչները: Դրանով հաջողվել է ներդաշնակել ողջ հորինվածքը, հասնել միասնականության:

Եռապատկերի կենտրոնական մասում տեղավորված հորինվածքը մեջտեղում գտնվող ուղղաձիգ կամարակապ լուսամուտով բաժանվում է երկու մասի: Ձախ կողմում, ամբողջ հասակով մեկ, կանգնած է ս. Մեսրոպ Մաշտոցն՝ իր շուրջը համախմբված աշակերտներով: Աջ կողմում հայրապետական գահին բազմած է ս. Սահակ Պարթևը, կողքին՝ Վռամշապուհ թագավորը՝ շրջապատված նախարարներով ու այլ մարդկանցով: Որպես ընդհանուր ֆոն ծառայում են հայոց լեռնաշխարհը, Արարատի ձյունապատ կատարներն ու մի եկեղեցի: Դրանք կոչված են խորհրդանշելու հայրենիքի ու հավատքի գաղափարները:

Կենտրոնական մասի հորինվածքում հնարամտորեն օգտագործված է հիշյալ լուսամուտը: Նրա կաթնագույն ապակու վրա նկարված են հայկական այբուբենի տառերը, որոնք պարզորոշ կերպով գծագրվում են դրսից թափանցող լույսի շնորհիվ: Մեծ խորհուրդ կա այն բանում, որ լուսամուտի տակ նկարված են ծնրադիր մի պատանի և մի աղջնակ՝ ձեռքներում պահած Աստվածաշունչ մատյանը, որի երկու երեսին գրված է աստվածաշնչական հետևյալ խոսքը. «Եղիցի լոյս և եղև լոյս»: Հայ մատենագիրների երկերից քաղված իմաստալից ասույթներ կան նաև կենտրոնական որմնանկարի աջ և ձախ, նկարներից ապատ տեղերում:

Արևմտյան պատի կենտրոնական ողջ բազմաֆիգուր հորինվածքը հնչում է վեհ հանդիսավորությամբ՝ արտահայտելով ազգային արժանապատվության և հայրենասիրության զգացում:

Եռապատկեր որմնանկարի երկու թևերի հորինվածքները համահնչուն են կենտրոնականին ու նրա հետ միասին կազմում են գաղափարական, ոճական և երանգային ամբողջություն: Ձախակողմյանի վրա (հարավային պատին) ներկայացված են կանգուն և ծնրադիր վիճակում հայոց աշխարհի պահապան մարտիկները՝ պրկված նետաղեղները իրենց ձեռքներին ու հպորության և սրատեսության խորհրդանիշ թևատարած արծիվը իրենց գլխավերևում: Իսկ աջակողմյանի վրա (հյուսիսային պատին) ներկայացված են հայոց աշխարհի գարունը, հայոց գրով ու բերքով երջանիկ աղջիկները:

Նույն հատկանիշներով են բնորոշ Ավագ խորանի աջ և ձախ կողմերում, դեպի ավանդատները տանող մուտքերի վերնամասերի հարթությունների վրա պատկերված որմնանկարները: Դրանց ապատ մնացած տեղերը ևս խտորեն ծածկված են մեսրոպատառ արձանագրություններով: Ձախակողմյան եռաֆիգուր հորինվածքի գլխավերևում խրոխտ հնչում են մեծ պատմահայր Մովսես Խորենացու խոսքերը. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոց յիշատակի»:

Մի հիշատակ էլ թողնվեց որմնապարդման աշխատանքներն ավարտվելուց հետո: Արևմտյան դռան աջակողմյան ներսի պատին փակցվեց մի նոր մարմարյա տախտակ՝ հետևյալ արձանագրությամբ.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի
Առաջնոյ
Սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն
Հայոց,
յամի Տեառն 1964—1966 որմք եկեղեցւոյս
նկարազարդեցան որմնանկարօք
յանմոռացն յիշատակի Գիւտի
նշանագրոց եւ թարգմանութեան Աստուածաշունչ մատենի
նուիրատուութեամբ եւ
արդեամբ Նոր-Ջուղայեցի Պետրոս
Ալեքսեան
որ ի Կալկաթա քաղաքի
ի յիշատակ հանգուցեալ ծնողացն Տ. Բարսեղ քահանայի
եւ Եղիսաբեթի ի վայելումն ազգիս Հայոց.
Յիշատակն արդարոց օրհնութեամբ
եղիցի»:

Օշականի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վերանորոգումն ու բարեզարդումը հանդիսացավ մեծ լուսավորչի անմար հիշատակը համաժողովրդական չափանիշով հարգելու միջոցառումներից մեկը:

(շարունակելի)



ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ

ԵՂԻՇԵԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Եղիշեի աստվածաբանական բոլոր գործերի և առավելապես «Հայր մեր»-ի մեկնության մեջ ամենացայտուն կողմը կարմիր թելի պես անցնող նրա բարոյագիտությունն է:

Մեծացած և դաստիարակված լինելով Սահակ-Մեսրոպյան ոգով և, ինչպես երևում է նրա բոլոր գործերից, քրիստոնեական բարձր մշակույթի ու առաքինության մեջ, Եղիշեն մի եվակի երևույթ է դառնում հայ իրականության համար որպես պատմիչ, դաստիարակ, աստվածաբան:

«Հայր մեր»-ի մեկնության հեղինակն առաջին հերթին քրիստոնյա է՝ լցված անսահման սիրով դեպի իր նմանները: Նա հայր է իր ընթերցողների համար, ուսուցիչ ու եղբայր: Հուսիչ են նրա շատ տողեր, երբ նա, թողնելով գրական ոճի «ջրջանակները», ուղղակիորեն, կենդանի կերպով դիմում է իր ընթերցողներին այս կամ այն խրատով: Ինչպիսի՞ գրելու շնորհ պետք է ունենա մարդ՝ ոչպատ կերպով խոսելու համար ընթերցողի հետ այն ժամանակ, երբ իր աշխատանքը լուրջ աստվածաբանական մի գործ է:

«Ո՛վ մարդ, զգոյշ կաց յանձին քում. յորպիսի պատիւ մեծարեցար՝ մինչև Հայր քեզ կԱստուած իշխեցեր անուանել. եւ զայս ևս ած զմտաւ քով, ըստ Հօրն պատուի և զքեզ ձևացո, զի ծանիցեն վերինք և ներքինք՝ թէ արդարև Աստուծոյ որդի ես»[1],—գրում է նա և ապա գործնականորեն խրատում. «Յորժամ յաղօթս կայցէք՝ մի տղայաբար շատախօսք լինիջիք»[2]:

Սակայն Եղիշեն նաև հմուտ աստվածաբան է, քրիստոնյա բարոյագետ: Նրա գլխավոր նպատակն է մարդուն ցույց տալ դեպի Աստված տանող ճանապարհը, բացատրել նրան նախամարդու սխալները, ցույց տալ ադամական մեղքի հետևանքները:

Աստծուն ճանաչելու միակ ճանապարհը սերն է. «Մի՛ փութացուք մարմնաւոր աչօք տեսանել զԱստուած, զի մի ծախիցիմք տարաժամ: Սէրն ի մէնջ լիցի առ նա պատգամաւոր, և ի սիրոյ նորա կատարեսցին կամք նորա ի մեզ»[3]:

Նրանք, ովքեր չճանաչեցին Աստուծուն, չկարողացան սիրել նրան, ընկան մեղքի մեջ: Այդ մեղքի կնիքը դրոշմի նման շարունակվեց նրանց հաջորդող սերունդների վրա. «Զերկրաւոր հարս ախտք ցանկութեան մարմնոյ շարժեցին յորդէծնութիւն, ըստ ախտաւոր յղութեանն՝ ախտաւոր որդիս ծնանել»[4]: Ուրիշ էլ ի՞նչ անուն կարելի է տալ այդ մեղսավոր մարդկանց, եթե ոչ՝ «կաթնածուծք և ջամբակերք, թաթաւեալ և թաղեալ գարշելի աղտովք»[5], որոնցից երես թեքեց ոչ միայն Աստված, այլ նաև «դայեակք և սնուցիչք»,

[1] Եղիշէ, Մատենագրութիւնք, «Հայր մեր»-ի մեկնությունը, Վենետիկ, 1859, էջ 200:

[2] Նույնը, էջ 200:

[3] Նույնը, էջ 203:

[4] Նույնը, էջ 199:

[5] Նույնը, էջ 199:

«մարք և ստնտուք»[6], որ են՝ մեծ մարգարեներն ու նահապետները:

Այնքան շատ էր ադամական մեղքի ծանրությունը, որ ոչինչ աշխարհում ի վիճակի չեղավ սրբելու այն: Եվ ինչպես այլաբանորեն գեղեցիկ կերպով նկարագրում է Եղիշեն՝ «Ի ծով լուացին և ոչ կարացին սրբել. ընդ գետս անցուցին և ոչ ողողեցան. յաճախեցին յօճառս և լուացան բարակաւ, և ոչ սրբեցան»[7]:

Ոչինչ չէր փրկի առաջին Ադամին, եթե ոչ՝ Քրիստոս: Նա, որ «անփշրելի էր՝ վասն սիրդ քո (մարդու — Ան. եպս.) փշրեցաւ»[8], փրկելու համար մահվան դատապարտվածին:

Պետք է ասել, որ Եղիշեի ուսմունքի քրիստոսաբանության մեջ բավականին ճկուն վիճակում է նաև Քրիստոսի բնության հարցը: Մենք գիտենք, որ Հայ Եկեղեցում Քրիստոսի **միավորյալ բնության** դավանությունը իր լայն ուեկնաբանմանը հասավ Հայ Եկեղեցու մեծագույն աստվածաբաններից մեկի՝ ս. Ներսես Շնորհալու ժամանակ: Արդարև, նրա «Դաւանութիւն Հաւատոյ»-ում կարդում ենք. «Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ և մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն. մարմինն եդեալ ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն ... Այլ և գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել վկենդանիս և վմեռեալս. որ և յարութիւն ամենայն մայդկան»[9]:

Սակայն այսօր, հանգիստ խղճով և վստահաբար մենք կարող ենք հենվել նաև ... 5-րդ դարի մեր աստվածաբանության վրա, քանի որ Եղիշեի կողմից Քրիստոսի երկրավոր տնօրինությունների և աստվածության երկրորդ անձի վերաբերյալ տրված են ամենաճշգրիտ և մեր Եկեղեցու դավանության կանոններին համապատասխանող բացատրություններ: Համեմատենք: Եղիշեի մոտ կարդում ենք. «Յուրբաթու խաչեցաւ՝ ի փշրումն մահու. ի միաշաբաթոջ վփշրեալ ոսկերսն Ադամայ ժողովեաց և յարեաց յանմահութիւն, և երևեցոյց բավմաց ճշմարտութեամբ և ոչ առ աչօք[10]: Մի օր հացացաւ ի վերնատանն, և հանապալ հացանայ յեկեղեցիս ի վերայ սուրբ սեղանոյն. նախ ինքն յինքեանէ ճաշակեաց, և ապա վմեզ վամենեսեան ճաշակիցս արար նմին չարչարանաց: Նաև ոչ այսուհետև ի չարչարանս է, այլ ի հայրենի փառան փառատրի ի հրեշտակաց և ի մարդկանէ, և վմեր ամենեցուն վչարչարանս եբարձ յիւր անչարչարելի աստուածութիւնն: Զայս յոյս հաւատոց մերոց իբրև վխարիսխ հաստատուն պահեսցուք յոգիս և ի մարմինս մեր»[11]:

Վստահաբար, առանց նսեմացնելու ս. Ներսես Շնորհալու «Դավանութեան» արժեքը, հանգիստ խղճով կարելի է ասել, որ Եղիշեի «խոստովանութիւնը» չի վիջում առաջինին ոչ իր դավանաբանական արժեքով և ոչ էլ բանաստեղծական նկարագրության գեղեցկությամբ:

Ինչ վերաբերում է Եղիշեի բարոյական խրատներին, ապա նրանց մեջ ցայտուն կերպով երևում է Եղիշեի մեծ սերը, գորովը մարդ արարածի նկատմամբ:

Մեծ է Աստված, անհնար է նրան ճանաչել մարդկային տկար մտքով:

Սակայն այդ բոլորովին չի նշանակում, թե պետք է հուսախաբ լինել ու հրաժարվել պայքարից, ինքնակատարելության հասնելու մտքից: Ի՞նչ անել: Աղոթե՛լ, սովորեցնում է մեծ աստվածաբանը: Աղոթքով է, որ մարդ կարժանանա Աստուծո տեսությանը, կամ ինչպես ինքն է գրում՝ «պարգևին». «Որչափ և վքեզ կարասցես.... ի մասունս արքայութեան վերաբերել, ըղձական են աղօթքն, և ի վեր քան վբնութիւնս մեր պարգևս խոստանայ»[12]:

Շատ են Աստուծո կողմից մարդուն տրված պարգևները: Առաջին, ամենամեծ պարգևը Աստուծո՝ մարդկանց Հայր լինելն է. «Մեծ է այս պարգևս քան վամենայն»[13]:

Երկրորդ պարգևը հանապազօրյա հացն է, որ տրվել է մեզ: Սակայն հաց «ոչ յերկրէ, այլ՝ ի Տեառնէ», որով պարզ, կենսական հացի պահանջը ավելի է մեծանում, առնում տիեզերական իմաստ:

Երրորդ պարգևը մարդու կողմից Աստուծո կամքը կատարելն է, որովհետև «Կամք Աստուծոյ է սրբութիւն մարդոյն, վի բաժանա-

[6] Նույնը, էջ 199:

[7] Նույնը, էջ 199:

[8] Նույնը, էջ 204:

[9] «Դաւանութիւն Հաւատոյ» ս. Ներսես Շնորհալու, Ժամագիրք, Վաղարշապատ, 1903 թ., էջ 5:

[10] «Ոչ առ աչօք» բառերը ենթադրել են տալիս, որ այդ ժամանակներում (5-րդ դար), ինչպես Ընդհանրական Եկեղեցու ծոցում, այնպես էլ Հայաստանում տարածված են եղել «երևութականները», որոնք սերում էին Քրիստոսի խաչվելու և մահվան մատնվելու իրական լինելը՝ ասելով, թե Աստուծո Որդուն վայել չէր մահանալ կամ անարգվել ու թե՝ Քրիստոս «առ ս.չօք», երևութապես է ձևացրել իրեն մեռած: Դրա դեմ ժամանակին պայքարել են Տիեզերական Եկեղեցու այնպիսի հայրեր, ինչպիսիք են՝ ս. Հովհան Ոսկեբերանը, Կյուրեղ Ալեքսանդրացին և ուրիշներ: Ուստի, սույն տողերով նույնպես, Եղիշեն հակահարված է տալիս հիշյալ ուսմունքի հետևորդներին:

[11] Եղիշե, «Հայր մեր»-ի մեկնություն, էջ 204:

[12] Նույնը, էջ 202:

[13] Նույնը, էջ 200:

կից արար արքայութեան իւրում»[14]: Ու քանի որ մարդն իր բնությամբ տկար է և չի կարող իր թույլ կամքը համեմատության մեջ դնել Աստուծո երկայնամտության ու կամքի հետ, ուստի համբերությունն է մնում մեր՝ կատարելության հասնելու միակ միջոցը, մանավանդ որ մեր առջև ունենք ուսուցանող օրինակը նրանց «որոց վաղոթսն ուսոյց»[15], այսինքն՝ սուրբ առաքյալների: Ուրեմն չպետք է ընկճվել, այլ վինված քրիստոնեական երեք առաքինություններով (հավատք, հույս, սեր)՝ համբերությամբ հասնել ցանկացածին, հետևություն է անում Եղիշեն, մանավանդ որ եթե մարդը անկարող լիներ այդքան, Աստված «ոչ վայնպիսի վաղոթսն ուսուցանէր մեզ»[16]:

Եվ եթե Աստված Հայր է բոլորին, բոլորը պարտավոր են լինել նրա որդիները, քանզի «մի է ժառանգութիւն վոր բաշխեաց ամենեցուն»[17]:

Պետք է պատրաստ լինել ամեն ինչի, նույնիսկ նահատակության: Ուժեղ հոգի ունեցող քրիստոնյային ոչինչ չի կարող հաղթել այս աշխարհում: Ըստ Եղիշեի՝ կատարյալ քրիստոնյան նա է, ով կարողանում է արհամարհել արծաթն ու ոսկին, ով աշխարհի մեծությունը ցավ է համարում, ով լի է երկնավոր հացի՝ Քրիստոսի խորհրդով:

Այդպիսին, եթե տղա է՝ կերևա իբրև հասուն մարդ, եթե տկարանա՝ Աստուծո վորությունը նրա մեջ կբնակվի ու եթե անգամ մահանա՝ կժառանգի անմահություն:

Նորից Եղիշեն իր խրատներում անդրադառնում է կռապաշտությանը: Հերքելով սուտ աստվածներին՝ նա մատնանշում է միաժամանակ այն խելամիտ հեթանոսներին, որոնք կարողացան սրբել իրենց միտքը անառակ կռապաշտությունից, ետ կանգնել սուտ աստվածներից ու դառնալ դեպի ճշմարիտն Աստված, որով «բանայ դուռն ամենեցուն»[18]:

Եվ ապա, թողնելով այլաբանություններն ու կրոնական օրինակները, Եղիշեն անցնում է ավելի գործնական խրատների:

Քանի որ դու մարդ ես, բնության կարգը ու շատ հեռու չես հրեշտակներից, պարտավոր ես քո վարքով հասնել նրանց, միաբանել նրանց, «երգակից» լինել նրանց հետ: Դրա համար անհրաժեշտ է կտրել և հեռու նետել իրենից ավելորդ ցանկությունները, կերակուրների մեջ լինել ժուժկալ, չլինել օրինապանց և շվայտ: Հակառակ դեպքում այդպիսի մարդը չի կարող կոչվել Աստուծո որդի:

Անհրաժեշտ է նաև լինել ընկերասեր, կարողանալ ներել ընկերոջ վանցանքները: Որպես օրինակ, Եղիշեն մեջ է բերում Քրիստոսի այն խոսքը, թե պարտ է ներել ընկերոջը «վեցթն եօթանասուն անգամ»[19]:

Որպես մարդ, մենք ամեն ժամ մեղանչում ենք Տիրոջ առջև թե՛ խոսքով և թե՛ գործով, սակայն Աստված տեսնում և անպատիժ է թողնում այդ բոլորը: Եթե մարդ չմեղանչի, գրում է Եղիշեն, դա լավ է: Սակայն եթե մեղանչեց՝ «փութասցի ապաշխարութիւն»[20]: Այս դեպքում, Եղիշեն վստահ է, կբացվեն Աստուծո ողորմության դռները, մանավանդ նրանց առջև, ովքեր կարողանում են հավատքով խնդրել: Այդպիսիները, որ իսկական քրիստոնյաներ են, ոչ միայն կարողանում են ներել ընկերների սխալները, այլ նաև բաժանում են իրենց ունեցվածքը ուրիշների: Այդպիսիներին մղող ուժը Աստուծո վորությունն է, ինչպես պատահեց Քրիստոսի սուրբ աշակերտների քարոզությունների ժամանակ:

Եվ վերջապես, սրանք են Եղիշեի առաջարկած քրիստոնեական հիմնական առաքինությունները. «Վասն երանութեանն հեկաբան լինել... մի՛ բնաւ զգիշերն քնոյ տացուք զանձինս, զի մի՛ բնաւ մոռացկոտ լիցուք ի սաղմոսս և յօրհնութիւնս: Եթէ զկարօտութիւն աղքատաց ոչ կարեմք լցուցանել, մի՛ պատուառաւ և բաժակաւ կարօտացուցցուք զնոսա: Մի՛ գտցի յափշտակութիւն որբոց և այրեաց ի ստացուածս մեր. ամենայն զինչ և իցէ մեր՝ նուիրեալ լիցի Աստուծոյ. յայնժամ և անձինք մեր լիցին նմա պատարագ հաճոյ և ընդունելի»[21]:

Քրիստոնեական վարքի համար անհրաժեշտ այս պատվիրանները պարտադրվում են բոլորին՝ «արանց և կանանց, ծառայից և ապատաց, զի Տէր մեր վասն ամենեցուն թողութեան եկն»[22]:

---

[14] Նույնը, էջ 202:
[15] Նույնը, էջ 202:
[16] Նույնը, էջ 202:
[17] Նույնը, էջ 202:
[18] Նույնը, էջ 200:
[19] Նույնը, էջ 205:
[20] Նույնը, էջ 205:
[21] Նույնը. էջ 206:
[22] Նույնը, էջ 206:

ԴՈԿՏ. ԶԱՎԵՆ Ծ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ*

ՄՈՒՏՔ

Արևագալի ժամերգությունը Հայաստանյայց Եկեղեցվո յոթը ժամերգություններեն մին է.—**Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու ժամ, Երեկոյան, Խաղաղական** և **Հանգըստյան:** Վերջին երկուքը առ հասարակ Մեծ Պահոց շրջանի հատուկ են, իսկ Արևագալի ժամն ալ հարմար նկատված է երգել Մեծ Պահոց չորեքշաբթի և ուրբաթ առավոտները, վեց շաբաթ շարունակաբար: Ամերիկայի մեջ, պայմաններու բերումով, կայն կերգենք կիրակի առավոտները, գոց պատարագի մատուցումեն ետք: Արևագալի գլխավոր պատգամն է՝ Հիսուս Քրիստոս աշխարհի Լույսը, ընդդեմ մեղսալից և խավարային աշխարհի, և ուղղված է Սուրբ Հոգիին և ի դեմս Հարությանն Քրիստոսի:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ը դարու մեր Հայոց Հայրապետը՝ Հովհաննես Օձնեցի, առաջին անգամ ըլլալով կհիշատակե Արևագալի ժամը ու անոր հաստատումը կկապե իր նախորդներեն Եպր Փառաժնակերտցի կաթողիկոսի անվան հետ, որ է դարուն Հայոց Հայրապետն էր: Այսուհանդերձ, Արևագալի ժամը իր ներկա ձևին մեջ անտարակույս գործն է մեր բազմաշնորհ Հայրապետին՝ Ներսես Շնորհալիի, որ հայոց կաթողիկոսական գահը բարձրացավ ԺԲ դարուն ու Հայց. Եկեղեցվո Շարակնոցն ու Ժամագիրքը հիմնովին բարեկարդեց՝ գրելով աղոթքներ ու շարականներ, տալով նաև հատուկ եղանակ և երաժշտություն:

Արևագալի ժամերգության ծագումն ու զարգացումը, իմ կարծիքով, կապ ունենալու է նաև Ս. Ներսես Շնորհալիի ժամանակակից Արևորդիք անունով հայ աղանդավորներուն հետ: Արևորդիները, թեև անունով քրիստոնյա, արևի պաշտամունքը կշեշտեին, կմերժեին Եկեղեցվո սրբական խորհուրդները, քահանայական կարգն ու առաքելական հաջորդականությունը: Անոնք մնացորդներն էին Պավղիկյան և Թոնդրակյան աղանդներուն, որոնք Զ—Ը դարերուն տարածված էին Բյուզանդիոնի և Հայաստանի մեջ:

Շնորհալի Հայրապետ իր «ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ»-ին մեջ կակնարկե Արևորդիներուն և անոնց դարձի մասին պայմաններ ու կարելիություններ կառաջարկե: Նույնիսկ խնդրանք եղած է աղանդավորներուն կողմե, որ Հայրապետը կիրենք ետ ընդունի

---

* Հաճույքով տեղեկացանք, որ 1983 թվականի դեկտեմբերի 15-ին Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի պատմագիտական կաճառը «Դոկտոր փիլիսոփայության» գիտական աստիճան է շնորհել Պենսիլվանիայի Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զավեն ծայրագույն վարդապետ Արզումանյանին:

Նույն օրը հայր սուրբը, յոթ պրոֆեսորների ներկայությամբ և նախագահությամբ պրոֆ. Նինա Կարտոյանի, հաջողությամբ պաշտպանել է իր ավարտաճառը՝ Ղևոնդի Պատմության իր կատարած անգլերեն թարգմանությունն ու հրատարակությունը՝ հանդերձ ներածականով և ծանոթագրությամբ (այս մասին տես «Էջմիածին» ամսագրի 1983 թ. Դ համարում դոկտ. Արամ Տեր Ղևոնդյանի գրախոսականը):

Դոկտ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանը, որ ներկայումս պաշտոնավարում է Ֆիլադելֆիայի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցում որպես հոգևոր հովիվ, հեղինակ է հայ մատենագրությանը վերաբերող մի շարք արժեքավոր աշխատությունների:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է հոգեշնորհ հայր սուրբին և ցանկանում հետագա հաջողություններ իր եկեղեցական և մատենագրական գործունեության ճանապարհին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայց. Եկեղեցվո գիրկը: Պատմական այս տվյալները կրնան հիմ ծառայել ըսելու, որ Ս. Ներսես Արևագալի ժամը կարգավորեց նաև որպես դրական հակազդեցություն՝ շահելու և դարձի բերելու համար Արևորդիները, անոնց տալով ճշտված հարաբերությունը արեգակին և Աստուծո Որդվույն, ճշմարիտ Լույսին:

ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏԳԱՄԸ

Արևագալի կեդրոնական պատգամը անշուշտ ԼՈՒՅՍն է: Բառը 32 անգամ գործածված է. 17 անգամ միայն «Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս» գեղահյուս երգին մեջ:

Որպես մուտք արևածագն է, որ կշեշտվի և որ ստեղծագործությունն է Արարչին: Սույն շրջագծին մեջ, ֆիզիկական և տեսանելի արեգակնային լույսին տակ, որ կծագի հավասարապես արդարներու և մեղավորներու վրա, և ուր նաև կհայտնվին մեր բարի ու չար գործերը, պայծառ կերևի և տիրապետող կդառնա «Իմանալի լոյս»-ը, որ աստվածային Լույսն է՝ արտահայտված Ս. Երրորդության երեք դեմքերուն—Հայր, Որդի և Ս. Հոգի—միջոցավ:

Ս. Շնորհալիի բառերով՝ այս Իմանալի Լույն է, որ առավել ևս կպայծառանա սուրբերու բարեխոսությամբ: Թեև Արևագալի միջանկյալ թեման սրբոց բարեխոսությունն է, անոր եզրափակիչ պատգամն ալ ճանապարհն է, ճշմարտությունը և կյանքը, որոնք հատկանիշներն են մեր Տիրոջ: Արևագալը կտարբերի մյուս ժամերգություններեն անով, որ հոս չարի և բարիի, խավարի և լույսի հակադրությունը չէ շեշտված, չկա: «Խավար» և «մեղք» բառերը միայն մեկ անգամ գործածված են՝ այս ձևով ժամերգության տալով ավելի դրական, հաճելի և ուրախարիթ մթնոլորտ մը:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արևագալը հատուկ կարգ մը ունի երգերու, քարոզներու և աղոթքներու ընթացքով մը, չորս հաջորդական կպմերով: Սուրբգրական ընթերցումը կբաղկանա Սաղմոսաց Գրքի այլապան համարներե, որոնք ընդելուզված են հետևյալ չորս մասերուն մեջ.

ա) Առաջին մասը տիեզերական բնույթ ունի: «Ամենայն ապգ եւ ապինք... յարեւելից մինչեւ յարեւմուտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ... Օրհնեցէք զԱրարիչն արարածոց»:

բ) Երկրորդ մասը միջնորդական է, բարեխոսական: Կհիշատակվին ճգնավորները, կամավորները, նահատակները, որոնց բարեխոսությունը կհայցվի:

գ) Երրորդ մասը կեդրոնացած է բուն թեմային վրա. Լույսը իբրև արտահայտությունը Ս. Երրորդության երեք անձերուն: Լույսին ստորոգելիներն են՝ արդարություն, իմաստություն, բարեգթություն և խաղաղություն:

դ) Չորրորդ մասով կեզրափակվի Արևագալի ժամերգությունը, երբ ճանապարհը, Քրիստոս, կգտնվի և ապա կճանչցվի նաև որպես ճշմարտություն և կյանք:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևագալի ժամը հիմնավորված է աստվածաբանական որոշ գիտելիքներու վրա, գլխավորաբար Ս. Երրորդության և սրբոց բարեխոսության, որոնցմե կստանա իր վավերականությունը: Անկասկած, այս երկուքն ալ իրենց կարգին ծնունդ կառնեն Սուրբ Գրքին տվյալներեն:

ա) Ս. Երրորդության վարդապետությունը Աստուծոյ հայտնության կվերաբերի երեք Անձերու միջոցավ—Հայր, Որդի և Ս. Հոգի: Երեքը միասին և միաժամանակ հայտնվեցան, երբ Հիսուս, Որդին Աստուծո, կմկրտվեր Հորդանան գետին մեջ: Արևագալի ժամերգությունը երեք Անձերու միացյալ պաշտամունքով կբացատրե Ս. Երրորդությունը, որպես աղբյուր «իմանալի լոյս»-ին:

ՀԱՅՐ Աստված կպաշտվի որպես ստեղծիչ լույսի և առաջին Լույս: ՈՐԴԻՆ՝ որպես արեգակ արդար, որուն անունը արեգակեն առաջ փառաբանված է Հոր անունին հետ: Հոս արդեն Քրիստոսի նախագոյությունը կհաստատվի ժամանակներեն առաջ: Ս. ՀՈԳԻՆ բխումն ի Հորե:

բ) Մարդեղության վարդապետությունը, այսինքն՝ Աստուծո որպես մարդ ծնանիլը հարևանցի կերպով հիշված է Արևագալի առաջին աղոթքին մեջ, ուր անչափելին Աստված ի չափավորություն եկած է, այսինքն՝ ժամանակի և միջոցի մեջ հայտնված է մեր փրկության համար:

գ) Ավելի կարևոր շեշտը դրված է սրբոց բարեխոսության վրա: Սուրբերու ներկայությունը հին Եկեղեցիներու մեջ կարևոր տեղ կգրավե: Արևագալի ժամը ճգնավորներ, մարտիրոսներ, նահատակներ ու կամավորներ կդասակարգե որպես ախոյաններ հավատքի, որոնք արյամբ մկրտվեցան «ի մահ խաչի», հանուն Քրիստոսի և Անոր հետ:

Բնականաբար սուրբերու դերը հիմնվեցավ Աստվածաշունչի ուսուցումներուն վրա: Հարկ է գիտնալ, թե սուրբերը չեն պաշտվիր, այլ միայն կպատվվին, վասնզի պաշտամունքը միայն Աստուծո հատուկ է: Սուրբերը եկեղեցվո ծոցեն ծնած են և Աստուծո ու Քրիստոսի շնորհքով միայն դարձած են վկաներ իրենց կյանքի օրինակով:



ԴՈԿՏ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
(Ուրվագիծ)

Քրիստոնեական բավմահարուստ գրականության մեջ իրենց որոշակի տեղն ունեն Պողոս առաքյալի Թղթերը՝ աստվածաբանական և պատմական առումով, առանց որի թերի կլիներ մեր պատկերացումը նախնական քրիստոնեության մասին: Պողոս առաքյալի Թղթերը քրիստոնեական հավատքի ամենահին գրավոր հուշարձաններն են: Այս հոդվածի նպատակն է եկեղեցական-կրոնական կեղևի մեջ լուսաբանել և արժեքավորել Պողոս առաքյալի մի շարք թելադրանքները և դիտանքները, և բացահայտել իր քարոզչության ակունքներն ու նախահիմքերը:

Թեև Թղթերի կենսագրական տվյալները Հիսուսի անձի վերաբերյալ պատկառելի նյութ չեն կազմում համեմատած Ավետարանների, այնուամենայնիվ Պողոսի վկայությունները, Հիսուսի մասին հաստատում են ավետարանիչների տեղեկությունները[1]: Պողոս առաքյալը հետևյալ էական նշանակություն ունեցող կենսագրական տեղեկություններն է հաղորդում Հիսուսի մասին:

Հիսուս, համաձայն առաքյալի, «Աբրահամի և Դավթի սերնդից է» (Հռովմ. Ա 3): Հիսուս ապրեց այս երկրի վրա միջտ «հնապանդ օրենքին» (Գաղ. Դ 4). հակառակ դրան, նրան պատժեցին որպես մի մարդու, որ խախտել էր Օրենքը: Իր մահվան նախօրյակին նա հաստատեց «Վերջին ընթրիքի» խորհուրդը՝ հացի և գինիի (Ա Կորնթ. ԺԱ 23—25): Նա ճաշակեց մահվան դառնությունը «ի խաչ ելեալ» (Գաղ. Գ 1), ըստ հռովմեական օրենքի (Ա Թեսաղ. Բ 15): Նրան թաղեցին. երրորդ օրը նա հարություն առավ և շատ անգամներ երևաց իր աշակերտներին, «յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին» (Ա Կորնթ. ԺԵ 4—8):

Պողոս առաքյալը ծանոթ է նաև Հիսուսի աշակերտների գործունեությանը, որոնց միջից նա հիշում է Պետրոս և Հովհաննես առաքյալներին որպես «կարծեալ սիւնքն» Երուսաղեմի համայնքի (Գաղ. Բ 9): Պողոսը նաև հաստատում է, որ առաքյալներից շատերը ամուսնացած էին՝ մասնավորապես հիշելով Կեփասին [Պետրոսին] (Ա Կորնթ. Թ 5). մի պատմական տեղեկություն, որ, ի միջի այլոց, նաև հաստատում է Սիմոն-Պետրոսի կոքանչի բժշկվելու մասին Մարկոս ավետարանչի հաղորդած պատմության հավաստիությունը (Մարկոս Ա 30): Ուրիշ առիթներով Պողոսը նաև վկայակոչում է Հիսուսի մի շարք ասույթները, որոնցից մի քանիսին անդրադառնալու ենք ավելի հանգամանորեն: Նույնիսկ այն պարագաներում, երբ Պողոսի վկայակոչումները բառացիորեն նույնական չեն Հիսուսի խոսքերին, ընթերցողը առաջին հայացքից իսկ կարող է տեսնել, թե Պողոսը ինչ չափով ծանոթ է Հիսուսի քարոզչությանը: Այս առումով առանձնապես հետաքրքիր են Հռովմեացիս ԺԲ 1—ԺԵ 7

[1] *J. M. Robinson*, A new quest of the historical Jesus (London, 1958).

գլուխների բարոյա-խրատական հատվածների աղերսները «Լեռան քարոզի» հետ: Սովորական վկայակոչումներից բացի, Պողոս առաքյալն իր ամբողջ բարոյախոսությունը հիմնում է Քրիստոսի կյանքի օրինակի վրա: Այն պատկերացումը, որ առաքյալն ունի Հիսուսի մասին, լիուլի համապատասխանում է այն պատկերացումին, որ ավետարանիչներն էն ներկայացնում մեզ իրենց գրություններում: Երբ Պողոսը բնութագրում է Քրիստոսին իր «հեզութեամբն և հանդարտութեամբն» (Բ Կորնթ. Ա 1), ընթերցողը չի կարող ակամայից չմտաբերել Մատթեոս ավետարանչի «հեզ եմ և խոնարհ սրտիւ» (ԺԱ 29) խոսքերը: Պողոսը Քրիստոսի անձնուրացությունն է շեշտում, երբ գրում է. «Քանզի և Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղև» (Հռովմ. ԺԵ 3), այլ՝ «Պարտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ»: Այս թելադրանքները հիշեցնում են Հիսուսի այն երկու խորհուրդները, որ նա փոխանցեց իր աշակերտներին վերնատան մեջ. «Ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր» (Ղուկ. ԻԲ 27) և «Պարտիմք զմիմեանց ոտս լուանալ» (Հովհ. ԺԳ 13—14):

Նշված այս մի շարք վկայությունները հաստատում են, որ Պողոսի տեղեկությունները Հիսուսի անձի պատմականության և նրա առաքելության վերաբերյալ ամենայն մանրամասնությամբ համընկնում են ավետարանիչների ավանդած տվյալներին: Պողոսը բավիցս ընդգծում է, որ ինքն իր քարոզչության բոլոր տվյալները քաղել է այն վավերական աղբյուրներից, որոնցից օգտվել են մյուս առաքյալները (Ա Կորնթ. ԺԵ 11): Պողոսի այս բացատրությունը շատ ուշագրավ է, որովհետև իր իսկ խոստովանությամբ, նա ո՛չ աշակերտել է Հիսուսին և ո՛չ էլ պատկանել նրա անմիջական հետևորդների խմբին, և այդ առումով միշտ գոհունակությամբ է շեշտում իր անկախությունը. «Քանզի և ոչ ես մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ» (Գաղ. Ա 11):

Քրիստոսի փրկագործ առաքելությունը մարդկային պատմության կարևորագույն դարագլուխներից մեկն է հանդիսանում: Համաձայն Մարկոս ավետարանչի վկայության, Հիսուս իր գալիլեական առաքելությունն ըսկըսեց հետևյալ դիպուկ հայտարարությամբ. «Կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւն Աստուծոյ» (Մարկ. Ա 15): Ըստ Պողոս առաքյալի՝ «Երբ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդին իւր... զի մեք զորդեգրութիւն ընկալցուք» (Գաղ. Դ 4): Այս երկու հայտարարությունների մեջ նշմարելի է հայեցողության տարբերություն: Պողոսի հայտարարության տեսադաշտը ընդգրկում է Քրիստոսի կյանքի և առաքելության ողջ էությունը, անցյալի փորձը, ժամանակի պահանջը, ապագայի հեռանկարը: Ավագ ուրբաթ օրվա և Զատկի դեպքերի եղելությունը որոշակիորեն փոխել է Քրիստոսի կյանքի ընկալումը: Նախկին «քարոզիչը» դարձել է արդեն «քարոզվողը»[2]: Մարկոս ավետարանչի համաձայն, երկնից արքայության առաջընթացքը ընդհատվեց Հիսուսի մահով: Պատմության զարգացման այս ընթացքը հենց Հիսուս ինքը կանխատեսել էր, երբ մի առիթով աշակերտներին հայտնում էր. «Մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ» (Մարկ. Ը 39): Պողոս առաքյալի համար Աստուծո արքայությունը արդեն իրականացված իրողություն էր: Հիսուս արդեն «սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան ի յարութենէ մեռելոց» (Հռովմ. Ա 4): Այսինքն՝ այն աստվածային զորությունը, որ Հիսուսին հարություն տվեց մեռելներից, այժմ ներկա է և ներգործում է իր հետևորդների մեջ և նրանց միջոցով՝ նաև համայն մարդկության մեջ: Այդ նույն Ս. Հոգին, որ հարություն տվեց Հիսուսին, նաև «խափանեսցէ զամենայն իշխանութիւնս և զամենայն պետութիւն» (Ա Կորնթ. ԺԵ 25): Հիսուս Քրիստոսի տարած հաղթանակը և նրանից բխող օրհնությունները արդեն վայելում են բոլոր նրանք, ովքեր «ի սոյն Աստուած է» (Բ Կորնթ. Ե 5): Հետևաբար առաքյալը եզրակացնում է. «Եթէ ոք ի Քրիստոս, նա նոր արարած իցէ զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն» (Բ Կորնթ. Ե 17): Պողոսի այս մեկնաբանումը կարելի է արդարացնել երկու տեսանկյունից: Նախ զուտ պատմա-ժամանակագրական առումով Քրիստոս մեռելներից հարություն առնելով՝ սկիզբն է դնում քրիստոնեական եկեղեցու: Եվ երկրորդ, երբ որևէ անհատ դառնում է այդ համայնքի անդամներից մեկը, նրա կյանքը նոր իմաստ է ստանում, որովհետև «այսուհետև մեք ոչ զոր գիտեմք մարմնով. զի թէպէտ և գիտէաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք» (Բ Կորնթ. Ե 16):

Ի՞նչ է իմաստը «զոր գիտեմք մարմնով» արտահայտության:

Ս. Գրքի մեկնիչներից շատ քչերն այսօր ընդունում են այն բացատրությունը, որ այս դարի սկզբին առաջարկվեց մի շարք գիտնականների կողմից: Ս. Գրքի մեկնիչ գերմանացի Զոհաննես Վիսը ենթադրում էր, որ Պողոսի այս միտքը զուտ պատմական հետա-

[2] *A Schweitzer*, **The Mysticism of Paul the Apostle** (London, 1931).

դարձ մի հայացք է, որով առաքյալը մարմնավոր Քրիստոսից ստացած իր տպավորությունները համեմատում է այն զգացողության հետ, որ նա հետագայում ունենում է շնորհիվ Ս. Հոգու միջնորդության[3]: Թե Պողոս առաքյալն անձնապես հանդիպել կամ լսել է Հիսուսին իր կենդանության օրոք, մեր կարծիքով հարցի էական կետը չպետք է համարել: Հարցի էական կետը վերաբերում է Բ Կորնթացիս Ե գլխի 16-րդ համարի մեկնությանը: Պողոսը նախ այս համարով նպատակ չունի թերագնահատել մյուս աշակերտների իմացությունը և ոչ էլ ցանկություն ունի գերագնահատել իր իմացությունը, որ միայն վերաբերում է հետ հարության շրջանին: Ինչպիսի տարակարծություններ էլ որ եղած լինեն իր և Քրիստոսի աշակերտների միջև, ինքն ընդունում է, որ դրանք այլևս ոչ մի արժեք չեն ներկայացնում, որովհետև բոլորը ներկայումս մեկ ամբողջություն են կազմում «ի Քրիստոս» և բոլորն էլ վայելում են հավասարապես Ս. Հոգու շնորհները: Իրակնում Պողոս առաքյալը համեմատություն է անցկացնում իր նախկին կեցվածքի և հետագա վերաբերմունքի միջև՝ հանդեպ Քրիստոսի: Սրան առնչվող մի ուշագրավ հարց ևս կա: Երբ Պողոսը խոսում է մինչ հարությունը Քրիստոսից իր ստացած տպավորության մասին, որը ըստ մարմնի էր, արդյո՞ք դա ակնարկություն չէ մեսիայի մասին իր ունեցած այն գաղափարին, որը Հիսուս իր կենդանության օրոք ժխտեց. և կամ պարզ հետադարձ մի հայացք չէ՞ իր կյանքի այն հանգրվանին, երբ ինքը Հիսուսի և նրա հետևորդների հալածիչն էր: Պողոսը իր դարձից հետո իր ունեցած հասկացողությունը մեսիայի մասին, որպես աշխարհիկ մի գործչի, համարեց սխալ: Նա մեսիայի կերպարը նույնացրեց «խաչեալ» և «յարուցեալ» Հիսուսի անձի հետ: Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած փորձառությունը այնքան էր տպավորել և ազդել Պողոսին, որ նա ժխտեց Քրիստոսի մասին մինչ այդ իր փայփայած բոլոր նախապաշարումներն ու վերապահումները և վերջնականապես համոզվեց, որ Հիսուս է «Տէր» և «Մեսիա»:

ա. «Ես ընկալայ ի Տեառնէ զոր և ձեզն աւանդեցի»:

Պողոս առաքյալի ուսուցումների առանցքը Դամասկոսի ճանապարհի վրա տեղի ունեցած տեսիլքն էր, որը, նրա բնութագրումով, «յայտնութիւն էր» (Գաղ. Ա 12): Սակայն այլ առնչությամբ, երբ նա ակնարկություններ է անում ավետարանների բարի լուրին, որպես ավանդույթ, որ ինքն ստացավ նրանցից, որոնք էին «ի Քրիստոս», նա նկատի ունի այն պատգամները, որոնց ակունքն էր հենց ինքը՝ պատմության Հիսուսը: Նման մի հետադարձ անդրադարձումի հանդիպում ենք Ա Կորնթացիս ԺԱ 23—25 համարներում: Այս հատվածում Պողոս առաքյալն ընդգծում է Պատարագի խորհրդի պատմականությունը՝ շեշտելով, որ՝ «Ես ընկալայ ի Տեառնէ զոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր, առ հաց, գոհացաւ, եբեկ և ասէ՝ Ա՛ռէք և կերայք...»: Պողոսի այս վերապատմումը «Վերջին ընթրիքի» արարքի, շատ նման է Մարկոս ավետարանչի ԺԴ 22—24 համարների նկարագրությանը, հակառակ, որ Պողոսի այս վկայությունը «Վերջին ընթրիքի» մասին գրվել է Մարկոսի ավետարանից տասը տարի առաջ: Այնուամենայնիվ, Մարկոսի շարադրանքը պահպանել է մի շարք ավելի նախնական տարրեր, ինչպիսին է Հիսուսի հետևյալ խոսքը. «Ոչ ես յաւելից ըմպել ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայութեան Աստուծոյ» (Մարկ. ԺԴ 25): Պողոս առաքյալը Մարկոսի այս զգուշացումը արտահայտել է իրեն հատուկ շատ ամփոփ ձևով. «Ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք, զկամ Տեառն պատմեցէք մինչև եկեսցէ նա» (Ա Կորնթ. ԺԱ 26): Պողոս առաքյալը եզրափակում է այս հատվածը հետևյալ խորհրդով. «Զայս արարէք առ իմոյ յիշատակի», որը համապատասխանում է Ղուկաս ավետարանչի «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի» պատգամին (Ղուկ. ԻԲ 17—20): Պողոս առաքյալի վկայությունը Պատարագի այս կարևոր հատվածի մասին ամենայն հավանականությամբ հարապատորեն նկարագրում է խորհրդի կատարման կերպը, որ գոյություն ուներ այն համայնքներում, որտեղ ինքը քարոզչական գործունեություն էր ունեցել: Պողոս առաքյալի շարադրանքը, հակառակ մի քանի մանր փոփոխությունների, հիմնականում վերարտադրում է այն ավանդույթը, որն արդեն իր հիմնական գծերով կայունացած ձև էր ստացել. «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք զկամ Տեառն պատմեցէք»: Համաձայն Պողոս առաքյալի ըմբռնողության, եթե սկզբից ևեթ ավետարանիչները վկայել են, որ «առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ի խաչ» (Գաղ. Գ 3), ապա հավասարապես ամեն անգամ, որ «Վերջին ընթրիքի» խորհուրդը կատարվում է Ս. Սեղանի վրա, «Քրիստոս քարոզի թէ ի մեռելոց յարուցեալ է» (Ա Կորնթ. ԺԵ 12):

Քրիստոնեական հավատքի և առաքյալների գործունեության գերագույն գրավականը

[3] *J. Weiss*, **Pual and Jesus** (London, 1909).

Քրիստոսի «ի մեռելոց յարուցեալ է» ճըշմարտությունն էր. և այդ, ըստ Պողոս առաքյալի, արդեն ընդունված փաստ էր և անխախտելի հիմքը այն սուրբ ավանդի, որ թողել են աշակերտները, և որից ինքն օգտվում է[4]: Ա Կորնթացիս ԺԵ 3—11 համարներում Պողոսն անհրաժեշտ է համարում այս կետը շեշտել իր ընթերցողներին՝ ասելով. «Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի զոր և եսն ընկալայ որ եթէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց, եւ զի թաղեցաւ, թէ և յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց եւ թէ երեւեցաւ Կեփայի... եւ ապա երեւեցաւ Յակոբայ...»: Այս համարներից երևում է. թե Պողոս առաքյալը որքա՞ն կարևորություն էր տալիս Քրիստոսի թողած սուրբ ավանդույթին: Նա իր Թղթերի միջոցով ձգտում է կամրջել Քրիստոսի պատմական կյանքը հարուցյալ Քրիստոսի իրականության հետ:

բ. **«Կնոջ յառնէ մի՛ մեկնել»:**

Պողոս առաքյալը Ա Կորնթացիս թղթի է 10—11 համարներում ամուսնության վերաբերյալ մի հարցի պատասխանի մեջ հիշատակում է Հիսուսի մեկ որոշումը՝ ավելացնելով. «Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնել: Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ կամ անդրէն ըստ առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր մի՛ թողուլ»: Քննարկվող հատվածը թեև բառացի վերարտադրությունը չէ Մարկոս ավետարանչի թելադրանքի (Ժ 2), սակայն երկու թելադրանքների աղերսը անկասկածելի է: Երբ Հիսուսին հարցնում են, թե թույլատրելի՞ է մի այր մարդու իր կնոջից բաժանվել, Հիսուս իր պատասխանի մեջ հակադրում է Հին Կտակարանում առկա երկու տեսություններ: Նախ՝ Հիսուս ժխտում է Բ Օրինաց գրքի մովսիսական հրահանգը. «Եթ գիր մեկնելոց գրել և արձակել» (ԻԴ 1—4)՝ հիշատակելով մի այլ վկայություն Ծննդոց գրքից (Ա 27, Բ 24) և եզրափակելով իր պատասխանը այսպես. «Եթէ այր արձակեսցէ զկին իւր և արասցէ այլ, շնա: Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ և եղիցէ առն այլում, շնա» (Մարկ. Ժ 10—11): Ավելացնենք նաև այն, որ Պողոս առաքյալն իր բացատրության մեջ անտեսում է Մատթեոս ավետարանչի հայտնի բացառական հոդվածը՝ «առանց բանի պոռնկութեան» (Մատթ. Ե 32), բայց դրա փոխարեն ինքն ավելացնում է մի նոր հոդված. «Եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զնա: Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն. զի սուրբ է այրն անհաւատ՝ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ՝ արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են, բայց այժմ սուրբ են» (Ա Կորնթ. Է 12—16): Սույն բացատրությունը պարզորոշ ցույց է տալիս Պողոս առաքյալի կեցվածքը հանդեպ Քրիստոսի պատգամների: Քննելով նյութը՝ նա շատ դեպքերում համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Հիսուսի խոսքը սոսկ տեսական բնույթ չէր կրում, այլ գալիս էր հասարակական ակունքներից: Պողոսն անկաշկանդ հայտարարում է իր ընթերցողներին, որ տվյալ միտքը իր անձնական տեսակետն է և Հիսուսին վերագրելի չէ. «Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր»: Կորնթացիների միջավայրում արծարծվող հարցերը արտացոլում են նորաստեղծ համայնքի մտահոգությունները: Նրանց հարցադրումները բոլորովին խորթ ու անհարապատ էին պաղեստինյան ավանդապաշտ միջավայրին, որին հասցեագրված էին Հիսուսի թելադրանքները: Պողոսն իրեն տրված հարցերի նկատմամբ եղել է աչալուրջ, միշտ սթափ և ուշադիր՝ ընթերցողին փոխանցելու Հիսուսի ասածի էականը, առանց որևէ ձևով շեղվելու Հիսուսի ընդհանուր կեցվածքից: Նկատվող տարբերությունները Պողոսի ասածների մեջ արդյունք են նոր պայմաններին:

գ. **«Մշակ արժան է իր վարձքին»:**

Կորնթոսի քրիստոնյաներին անհասկանալի էր, թե ինչու Պողոս առաքյալը մերժում էր իրենցից նյութական օժանդակություն ստանալ, մանավանդ երբ գիտեին, որ նա մյուս համայնքներից վարձատրություն ընդունել էր: Կորընթացիները Պողոսի մերժումը համարում էին մի հավելյալ փաստ, որ Պողոսն իրեն «առաքյալ» չէր համարում և հետևաբար իրավասություն չուներ վարձատրություն ակնկալելու այնպես, ինչպես Պետրոս առաքյալը և նրա հետևորդներն ունեին: Պողոսը դրան պատասխանում է հայտարարելով, որ ինքն «առաքյալ» է բառի լիարժեք իմաստով, բայց ինքն այս հարցում իր ապատությունն է գործադրում՝ նրանց վարձատրությունից հրաժարվելով: Պողոսն իր այս բացատրությանը կցում է Տիրոջ հետևյալ հայտարարությունը. «Նոյնպէս և Տէր հրաման ետ. որոց զաւետարանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ» (Ա Կորնթ. Թ 14): Այս հրահանգին հանդիպում ենք նաև Ավետարանում. «Զի արժանի է մշակն կերակրոյ իւրում» (Մատթ. Ժ 10). կամ՝ «Զի արժանի է մշակն վարձու իւրոյ» (Ղուկ. Ժ 7): Պողոսի թելադրանքը մոտ է այս երկու ասացվածքներից երկրորդին:

[4] *R. Bultmann,* **Theology of the New Testament** (London, 1952).

դ. **«Ուտիջիք վինչ առաջի դնիցեն ձեր»:**

Պողոս առաքյալին ուղղված թղթի մեջ կորնթացիներն առաքյալից ուզում են իմանալ, թե ինչ պետք է լինի իրենց վերաբերմունքը հանդեպ զոհաբերված մսի: Եթե քրիստոնեական միջավայրում նրանք կարող էին հրաժարվել զոհաբերված միս ուտելուց, սակայն հասարակական և ընկերական շրջանակներում այդ օրենքը գործադրելը բավական դժվար էր, եթե ոչ անհնարին: Բնականաբար, այս հարցին պատասխանելու համար Պողոս առաքյալը չէր կարող դիմել ավետարաններին՝ հենակետեր կամ ուղեցույցներ գտնելու Հիսուսի ուսուցումների մեջ: Քրիստոնյաները նման կացության ենթակա էին միայն հեթանոսական միջավայրում: Պողոսը պատասխանում է. «Եթէ ոք կոչէ զձեզ անհաւատից և կամիցիք երթալ, զամենայն ինչ որ առաջի ձեր դնիցի, կերայք և մի՛ խտրէք վասն խղճի մտաց» (Ա Կորնթ. Ժ 27): Պողոսը թելադրում է Կորնթոսի հավատացյալներին շարունակել իրենց ընկերական կյանքը՝ առանց իրենց կաշկանդված զգալու: Պողոսի այս գործնական վերաբերմունքի մեջ էլ նկատելի են արձագանքներ Հիսուսի մեկ հրահանգի՝ ուղղված իր աշակերտներին. «Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ՝ ուտիջիք վինչ առաջի դնիցեն ձեր» (Ղուկ. Ժ 8, համեմտ. Ժ 7)[5]: Հիսուսի այս թելադրանքը միայն հիշվում է յոթանասնից գործուեության և կոչման առնչությամբ: Նման խորհուրդի չենք հանդիպում տասներկու աշակերտների առաքման կապակցությամբ տրված հանձնարարականներում, որովհետև նրանց առաքելության սահմաններն ավելի նեղ էին, ինչպես վկայում են ավետարանիչները. «Երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և ասէ. ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք» (Մարկ. Է 7—11, Ղուկ. Թ 1—5, Մատթ. Ժ 5):

ե. **«Հատուցէք իւրաքանչիւր զպարտս»:**

Հիսուս իր վճիռը ամուսնալուծության հարցի շուրջ, որին անդրադարձել ենք, արտասանել էր հրապարակային մի հարցաքննության ժամանակ, որը, համաձայն Մարկոս ավետարանչի վկայության, դիտումնավոր հարցաքննություն էր. «Փորձելով հարցանէին զնա և ասէին» (Ժ 2): Նույն ավետարանիչը հիշատակում է մի երկրորդ դեպք ևս. «Առաքեն առ նա զումանս ի Փարիսեցւոց անտի և ի Հերովդիանոսաց, զի որսասցեն բանիւ: Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին. վարդապետ, արժա՞ն է հարկ տալ կայսեր, եթէ ոչ» (Մարկ. ԺԲ 13): Պողոս առաքյալն էլ հարկ վճարելու խնդրի կապակցությամբ մի քանի առիթներով արտահայտել է իր տեսակետները: Բայց այս պարագային նա Հիսուսի հեղինակությունը չի հայցում իր հայացքներին հեղինակություն տալու համար: Պետք է նկատի ունենալ քաղաքական, հասարակական, բարոյական այն ուրույն կյանքի միջավայրը, որի բովում ծնունդ է առել և կազմավորվել Պողոսի աշխարհայացքը: Հիսուս դրական վանապանություն էր տեսնում երկրային-երկնային իշխանությունների՝ կայսրի և Աստուծո միջև, և ըստ այնմ բանաձևում իր պատասխանը: Մինչդեռ Պողոս առաքյալը, իր ժամանակակից պայմանները նկատի ունենալով, նման վանապանություն չի տեսնում և կայսրին տրվելիք հարկը համարում է Աստծուն հնազանդվելու ցանկության մեկ երեսը, որովհետև, իր հասկացողությամբ, աշխարհիկ կառավարիչները Աստուծո կամքի ծառաներն են: Նրանց հանդեպ անհնազանդություն ցուցաբերելը հավասար է անհնազանդության հանդեպ Աստուծո: Հետևաբար, նա իր պատասխանը բանաձևում է այս հանգամանքը նկատի ունենալով. «Արդ՝ հատուցէք իւրաքանչիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն» (Հռովմ. ԺԳ 7): Եվ իրոք, թեև Պողոսի այս պատասխանի մեջ ոչ մի ակնարկություն չկա Հիսուսի խոսքերի վերաբերյալ, սակայն սրանից չպետք է հետևցնել, որ Պողոսն իր մտքի մեկ անկյունում ի պահ չուներ նրա խոսքերը: Պողոս առաքյալի խոսքը՝ «Հատուցէք իւրաքանչիւր զպարտս», ընդհանրացումն է Հիսուսի «Տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ» պատասխանի՝ հիշատակված Մարկոսի ավետարանում (ԺԲ 17): Եվս մի կարևոր խնդիր: Եթե Պողոսի հրահանգը ընդհանրացումն է Հիսուսի վերը հիշված պատգամի, ապա այս դեպքում այդ ընդհանրացումը շատ ավելի համարձակ է, քան մինչև այժմ քննված Հիսուսի խոսքերի մյուս ընդհանրացումները: Հարցադրումների շարժառիթների խոր իմացությունը անհրաժեշտ է Պողոս առաքյալի պատասխանը ըստ արժանվույն գնահատելու համար: Հռովմեացիս ԺԳ 1—7 համարների բովանդակությունը արտացոլում է նորադարձ քրիստոնյաների փոխհարաբերության հարցը հեթանոս իշխանության հանդեպ: Պողոսը մեկնում է այն եզակետից, որ կայսրը և նրա ներկայացուցիչները նշանակված են Աստուծո կողմից և հետևաբար ծառայում են Աստծուն՝ պաշտպանները հանդիսանալով կարգ ու կանոնի, ուստի քրիստոնյաները, որպես հնազանդ հպատակներ, պարտավոր են հարգել այդ կարգ ու կանոնը: Հիսուս իրեն տրված հար-

[5] *R. C. Leaney,* **A commentary on the Gospel according to St. Luke** (London, 1958).

ցին մոտեցավ բոլորովին տարբեր տեսանկյունից՝ դարձյալ ցուցաբերելով խոր իմացություն տիրող կացության: Նա նկատի ուներ Երուսաղեմում տիրող քաղաքական լարված վիճակը, որտեղ հրեա հեղափոխականները դավաճան և հանցագործ էին համարում բոլոր նրանց, ովքեր ամենադույսն չափով իսկ գործակցում կամ հնազանդվում էին հեթանոս իշխանության կարգ ու կանոնին՝ իրենց հարկերը վճարելով: Այդ կնճռոտ հարցումով հակառակորդները Հիսուսին մատնեցին մի վտանգավոր կացության: Հիսուս, այդ կռահելով, տվեց իր իմաստալից պատասխանը: Պողոս առաքյալի պարագային նման կացություն չկար: Պողոս առաքյալը, որպես Հռոմի քաղաքացի, իր կյանքի փորձառությունից գիտեր, որ հռովմեական կանոններին էր պարտական իր կյանքը և, բարձր գնահատելով այդ, թելադրում էր քրիստոնյաներին հարգել աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներին, որոնք, ըստ իրեն, ժամանակավոր են, որովհետև իր համոզումով, դեռ «գիշերը» չլուսացած, մի նոր կարգ ու կանոն է հաստատվելու, որի մեջ «սուրբք կաշխարհ դատին» (Հռովմ. ԺԳ 12, Ա Կորնթ. Զ 2):

Կ. «Զօրէնսն Քրիստոսի»:

Պողոս առաքյալն ստացել էր փարիսեցիական կրթություն և հրեական օրենքն ուսումնասիրել էր Գամաղիելի ձեռքի տակ, սակայն, իբրև հելլենական հրեա, շատ լավ ծանոթ էր նաև հունարեն լեզվին, հունական գրականությանն ու կյանքին: Ուստի, երբ նա ամենուրեք քարոզում էր «զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» (Գաղ. Զ 2), մենք կարող ենք իրավացիորեն հետևցնել, որ նա գիտեր, թե ինչ մեկնություն էր Հիսուս տվել Ղևտացոց ԺԹ 18 համարին. «Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»: Պողոս առաքյալի թելադրանքը՝ «զմիմեանց բեռն բարձէք», հըմտորեն ընդհանրացնում է անմիջապես դրան նախորդող համարների միտքը. «Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան» (Գաղ. Զ 1): Հարկ է նշել, որ առաքյալի այս հայացքները զուգորդվում են Հիսուսի այն մի շարք պատգամներին, որոնց հանդիպում ենք միայն Մատթեոսի ավետարանում. «Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա, յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո» (Մատթ. ԺԸ 15): Պողոս առաքյալն իր ուսուցումը օրենքի մասին շարունակում է Հռովմայեցիս ԺԲ 9—21 համարներում, որն իր բովանդակությամբ շատ է հիշեցնում Լեռան քարոզը: «Օրհնեցէք զհալածիչս ձեր, և մի՛ անիծանէք» (Հռովմ. ԺԲ 14). հիշեցնում է Ղուկասի ավետարանի «Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք ի վերայ նեղչաց ձերոց» պատգամը: Պողոսն իր վերաբերմունքը նկարագրում է այսպես. «Բամբասէին զմեզ, օրհնէաք, հալածէին, յանձն առնուաք, հայհոյէին, աղաչէաք» (Ա Կորնթ. Դ 12): «Մի՛ ումեք չարի չար հատուցանէք» (Հռովմ. ԺԲ 17). Պողոսի այս խոսքը նույն ոգին է ցուցաբերում, ինչ որ Մատթեոսի և Ղուկասի ասացվածքը՝ «Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց» (Ղուկ. Զ 27, Մատթ. Ե 44):

Պողոսը մի ընդարձակ մեջբերում է կատարում սկսած Առակաց Գրքի ԻԵ գլխի 21 համարից: «Եթէ քաղցեալ իցէ թշնամին քո», նա թելադրում է՝ «հաց տուր նմա և եթէ ծարաւի, ջուր տուր նմա», որովհետև այս վերաբերմունքով դու «կայծականս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա»՝ բաց թողնելով «եւ Տէր հատուսցէ քեզ բարութիւն» բառերը: Այս շատ հատկանշական է: Պողոսը համոզված է, որ եթե մենք մեր թշնամիների նկատմամբ բարյացակամ լինենք, այդ նրանց կամաչեցնի և կառաջնորդի մեղավոր լինելու գիտակցության: Այլ խոսքով՝ թշնամուն հաղթելու ամենավստահ ուղին նրան քո բարեկամը դարձնելն է. «Յաղթեա բարեաւն չարին» (Հռովմ. ԺԲ 21): Հասարակական գործիչների նկատմամբ իր կեցվածքը ճշտելուց հետո, «հատուցէք իւրաքանչիւր զպարտս. որում զիարկ՝ զիարկն, ... որում զպատիւ՝ զպատիւն», նա շարունակում է իր միտքը և ավելացնում. «Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցիք, բայց զմիմեանս սիրոյ. զի որ սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ»: Այս միտքը նա պաշտպանում է մի մեջբերում կատարելով Ղևտացոց ԺԹ 18 համարից. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո», որը թագն ու պսակն է բոլոր պատգամների, ոսկի կանոնը մարդկային հարաբերությանց: Հիսուս ևս այս պատգամը դնում է Երկրորդ Օրինաց Զ 5 համարի «եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ»-ի հետ և եզրափակում. «Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան» (Մատթ. ԻԲ 37—40, Մարկ. ԺԲ 28—34): Պողոսն այս դեպքում վկայակոչում է երկու պատվիրաններից երկրորդը, որովհետև իր նյութը վերաբերում է քրիստոնյայի պարտականության՝ հանդեպ իր հարևանի:

Հռովմայեցիս ԺԳ 9 համարում Պողոս առաքյալն անդրադառնում է տասը պատվիրաններին և, հաշվի առնելով բերված բոլոր տեսակետները, ընդլայնում է բոլոր օրենք-

ների կիրառության սահմանները՝ հայտարարելով. «Լրումն օրինաց սէր է» (Հռովմ. ԺԳ 10): Հաջորդ պարբերության մեջ (ԺԳ 11—14) Պողոս առաքյալը, ընդարձակելով խնդրո առարկա նյութը, այն առնչում է քրիստոնեական կյանքին: Այս կապակցությամբ հիշատակության արժանի են մանավանդ Քրիստոսի ուսուցումները «երկրորդ գալստյան» դավանանքի վերաբերյալ: Երբ Հիսուս աշակերտներին հայտնում է այն դեպքերի մասին, որոնք պետք է նախորդեին մարդու Որդու երկրորդ գալուն, նա ասում է. «Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր, զի մերձ է փրկութիւն ձեր» (Ղուկ. ԻԱ 28): Նրանք, ովքեր ցանկանում են «կալ առաջի Որդւոյ մարդոյ», պետք է արթուն լինեն (Ղուկ. ԻԱ 36): Պողոս առաքյալն էլ իր հերթին, երբ խոսում է այս հարցի շուրջ, հետևյալ կուգաղիր միտքը է արտահայտում. «Ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն քան յորժամ հաւատացաքն» (Հռովմ. ԺԳ 11): Մի այլ տեղ, նույն թեմայի շուրջ խոսելիս, Պողոս առաքյալը պնդում է, թե քանի որ քրիստոնյաներ ենք, երբ Տիրոջ օրը գա ինչպես «զգող գիշերի», հանկարծակիի չպետք է գալ: Այս պատգամը ևս ինչ-որ տեղ հուշում է Հիսուսի մի այլ խրատը. «Բայց զայն գիտասջիք եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ» (Ղուկ. ԺԲ 39—40):

Պողոս առաքյալը քրիստոնեության ողջ էությունը ամփոփում է «զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս» շատ հատկանշական բանաձևի մեջ, որը հենց իր բացատրությամբ նշանակում է՝ «զգենուլ զնոր մարդն» (Եփես. Դ 24 և Կողոս. Գ 10):

(Շարունակելի)

ՏԵՂԻՔ

Ծնունդք
Ա 27
Բ 24
Ղևտական
ԺԹ 18
Երկրորդ Օրէնք
ԻԴ 1—4
Առակք Սողոմոնի
ԻԵ 21
Նոր Կտակարան
Մատթէոս
Ե 32
Ե 44
Ժ 5
Ժ 10
ԺԱ 25
ԺԸ 15
ԻԲ 37—40
Մարկոս
Ա 15
Ա 30
Է 7—11
Ը 39
Ժ 2
Ժ 10—11
ԺԲ 13
ԺԲ 17
ԺԲ 28—34
Մատթէոս
ԺԴ 22—24
ԺԴ 25
Ղուկաս
Զ 27
Թ 1—5
Ժ 7—8
ԺԲ 39—40
ԻԱ 28
ԻԱ 36
ԻԲ 17—20
ԻԲ 27
Յովհաննէս
ԺԳ 13—14
Հռոմայեցիս
Ա 3
Ա 4
ԺԲ 1—ԺԵ 7
ԺԲ 9—21
ԺԲ 14
ԺԲ 17
ԺԲ 21
ԺԳ 1—7
ԺԳ 8—10
ԺԳ 9
ԺԳ 10
ԺԳ 11—14
ԺԳ 12
ԺԵ 3
Կորնթացիս Ա
Դ 12
Զ 2
Է 10—11
Է 12—16
Թ 10
Ժ 27
ԺԱ 23—25
ԺԱ 26
ԺԵ 3—11
ԺԵ 4—8
ԺԵ 11
ԺԵ 12
ԺԵ 25
Կորնթացիս Բ
Ա 1
Գաղատացիս
Ա 11
Ա 12
Բ 9
Գ 1
Գ 3
Դ 4
Զ 12
Եփեսացիս
Դ 24
Փիլիպպեցիս
Բ 5—7
Կողոսացիս
Գ 10
Թեսաղոնիկ. Ա
Բ 15
Ե 5
Ե 16
Ե 17



ՄԱՆԿԱԿԱՆ «ԶԱՐԹԻՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱՐԸ

Այժմ, երբ մեր ժողովրդի ստվար մեկ հատվածը, դժբախտ ճակատագրի բերումով, ցրված է ի սփյուռս աշխարհի, շատ կարևոր և այժմեական է, միգուցե ամենակարևորը սփյուռքի համար, հայ մանուկներին հայեցի և հայրենասիրական առողջ ոգով դաստիարակելու հարցը: Իսկ դրա համար նախապայման է և անհրաժեշտություն՝ հայերեն լեզվի ուսուցումը և իմացությունը: Այս տեսակետից, ինչպես մի առիթով նախկինում անդրադարձել է մեր ամսագիրը, արժեքավոր նվեր են ստացել ամերիկահայ մանուկներն ու դպրոցականները: Դա Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդարանի հովանավորությամբ Նյու Յորքում լույս տեսնող «Զարթիր» մանկական պարբերականն է[1]: Մանկական այս փոքրիկ ամսագիրը, ինչպես արդեն բնորոշվել է նախկինում, «իր առջև նպատակ է դրել ծառայել սփյուռքի հայ մանուկների առավել հայեցի դաստիարակման սրբական գործին»[2]:

Եվ հիրավի, մանկական այս պարբերականը իր առաջադրած նպատակին ծառայում է լիարժեք կերպով: Այդ հաստատ համոզմանը մենք հանգեցինք, երբ վերջերս թերթեցինք խմբագրությունում ստացված «Զարթիր» ամսագրի Դ համարը, որը լույս է տեսել 1983 թ. դեկտեմբեր ամսին: Այդ համարը ամբողջությամբ նվիրված է հայոց լեզվին և կոչված է հայ մանկանց մեջ սեր արթնացնելու իրենց մայրենի լեզվի և մշակույթի նկատմամբ:

Հենց առաջին էջում հայ մանուկները ունկընդիր են լինում Ս. Մեսրոպ Մաշտոցի ահապանգին.

«Սիրելի հայ մանուկներ.

404 թվականին հայերեն գիրերը հնարեցի:

Հայերեն գիրերու շնորհիվ Հայաստանի մեջ ծաղկեցավ ու պարգացավ գրականությունը, և լուսավորվեցան հայ ժողովուրդի միտքն ու հոգին:

Գիրերու գյուտին, Աստվածաշունչի թարգմանության,—որ օտար գիտնականներ պայն կոչած են «Թագուհի բոլոր թարգմանութեանց»,—և հայ գրականության ծաղկումին պատճառավ հայոց պատմության մեջ հինգերորդ դարը կոչվեցավ Ոսկեդար:

Այժմ ձեր ապրած դարը միայն ու միայն քսաներորդ դար կկոչվի:

Ի՞նչ կմտածեք...»:

Ս. Մեսրոպ Մաշտոցի հարցումին, անշուշտ, յուրաքանչյուր ոք պետք է աշխատի պատասխան գտնել: Բայց երբ հայ մանուկն ու պատանին մտորումների մեջ հաջորդ էջում կարդան հայոց մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի պատգամը՝ «Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնեմ, ձեր արևին ղուրպան, տասը լեզու սորվեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը

---

[1] Տես **Զատիկ աբեղա Ավետիքյան,** Մանկական նոր պարբերական, «Էջմիածին», 1982, № Է, էջ 19:

[2] Նույնը:

դայիմ (ամուր) բռնեցեք...» (էջ 2), արդեն իրենց մտքում կիստականա պատասխանը: Հարկավոր է նախ և առաջ սովորել մայրենի լեզուն և հավատարիմ մնալ հայրերի հավատին: Իսկ հետո՞...

«Պետք է բոլորս ալ հայ ընտանիք կազմենք.

— Ինչո՞ւ...

Որպեսզի հայ տուներեն ներս պահվին հայկական սովորությունները, և մանավանդ հնչե Հայոց Լեզուն...» (էջ 3).

«Պետք է հայ եկեղեցիներ կառուցանենք.

—Ինչո՞ւ...

Որպեսզի մենք հայերս կարենանք մեր եկեղեցիներուն մեջ մեր սքանչելի շարականները երգել, որպեսզի կարենանք հայերեն լեզվով աղոթել և որպեսզի կարենանք առանց բացառության հայկական կրոնական և ազգային տոները հիշատակել (հունվարի 6՝ Ս. Ծնունդ, փետրվար՝ Վարդանանք, ապրիլի 24՝ Նահատակաց օր, հոկտեմբեր՝ Տօն սրբոց թարգմանչացն)» (էջ 4).

«Պետք է ամեն տեղ հայ դպրոցներ բանանք և քաջալերենք հայ մանուկները... որ հայ դպրոց հաճախեն... ինչպես մենք...

Չէ՞ որ հայ դպրոցը հայ ընտանիքին շարունակությունն է...» (էջ 5).

«Պետք է հայկական մշակութային, կրթական, քաղաքական և մարզական կեդրոններ բանանք...» (էջ 8).

«Պետք է հայերեն գիրքեր գրենք, տպենք ու կարդանք...» (էջ 10).

«Պետք է բոլորս ալ մեր նայվածքը դարձնենք դեպի Հայաստան, ներշնչվինք անկե և հպարտ զգանք իր իրագործումներով...» (էջ 11):

Մանկական պարբերականի սույն համարը բաղկացած է 16 մեծադիր էջից: Պարբերականն ունի գեղեցիկ և ճաշակավոր նկարազարդումներ: Այնտեղ հայ մանուկները կարող են ընթերցել Ավետիք Իսահակյանի, Վահան Թեքեյանի, Վահան Տերյանի, Սարմենի, Համո Սահյանի և ուրիշների հայրենասիրական և հայոց լեզվին նվիրված բանաստեղծությունները, հաղորդակցվել հայոց լեզվի մասին նրանց արտահայտած մտքերին:

Սույն պարբերականը, կարծում եմ, թանկագին և անփոխարինելի նվեր է հայ մանուկներին՝ ի սփյուռս աշխարհի: Երանի ամեն մի հայ մանուկ կարդա այն և ապագայում երբեք չմոռանա այն սրբական խոստումները և պատասխանները, որ տվեց Ս. Մեսրոպի հարցումին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի և «Էջմիածին» ամսագրի խմբագրության շնորհավորում ենք «Զարթիր» պարբերականի խմբագրության անդամներին և ցանկանում նորանոր հաջողություններ իրենց առաքելության ճանապարհին:

ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Պէտք է բոլորս ալ մեր նայուածքը դարձնենք դէպի Հայաստան, ներշնչուինք անկէ եւ հպարտ զգանք իր իրագործումներով.

Որովհետեւ՝
Հայաստանը
մեր հայրենիքն է,
մեր հողն է, մեր յոյսն է
ու մեր ապագան:

Մենք մեզ ոչ
մէկից չենք գերադասում,
Բայց մե՛զ էլ գիտենք.
Մեզ հա՛յ են ասում:
Եւ ինչո՞ւ պիտի
չհպարտանանք. . .
Կա՛նք:
Պիտի լինե՛նք.
Ու դեռ . . .
շատանանք:

ՀԱՅԱՍՏԱՆ

Որովհետեւ՝
Մեր հաւատքի կեդրոն՝
Ս. Էջմիածինը
հոն կը գտնուի.

Որովհետեւ՝
Հոն կ՝ապրի ու կը ստեղծագործէ
հայ ժողովուրդը Արարատի շուքին տակ. . .
եւ Սարտարապատի շունչով. . .

Եկէ՛ք դուք ալ մեզի միացէք եւ բոլորս միասին ձեռք ձեռքի տալով աշխատինք, որպէս զի քսաներորդ դարը կոչուի.

Հայոց Յաղթանակի Դարը



. . . Խլեցէք ժողովուրդէ մը իր ամէն ինչը, ան կարող է ամէն բան վերադարձնել, սակայն խլեցէ՛ք լեզուն, եւ ան այլեւս չի ստեղծեր. ժողովուրդը կարող է նոյնիսկ ստեղծել նոր հայրենիք, բայց լեզու՝ երբեք. ժողովուրդի շուրթերուն մահացաւ լեզուն՝ մահացաւ ժողովուրդն ալ:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԳՐՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1983 թ. դեկտեմբերի սկզբներին, Ս. Գրոց հրատարակչության հիմնադրման հարյուրամյակի առթիվ, Եգիպտոսում տեղի են ունեցել վանական գիտական դասախոսություններ Աստվածաշնչի մասնագետների կողմից: Կահիրեում, քրիստոնեական տարբեր դավանությանց պատկանող եկեղեցիներում, շուրջ երկու շաբաթ ամեն երեկո տրվել են հմտալից դասախոսություններ Հին և Նոր Կտակարանների մասին:

Հոբելյանական հանդիսությունը մեծ շուքով կատարվել է Զամալեք թաղամասի անգլիկանների տաճարում: Այս առթիվ հատընտիր շարականների կատարումով հանդես են եկել հռոմեական կաթոլիկ, հույն օրթոդոքս, ավետարանական, դպտի ուղղափառ և քրիստոնեական տարբեր եկեղեցիների երգչախմբերը, այդ թվում նաև Հայ Առաքելական Եկեղեցու երգչախումբը: Շարականների մեներգի մասը խոր ապրումով և մեծ վարպետությամբ կատարել է Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախմբից տիկին Զաբել Ռշտունին:

Հանդիսության ընթացքում Հայաստանյայց Եկեղեցու շարականների մասին արաբերեն և անգլերեն լեզուներով շահեկան մի վեկուցում է կարդացել Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը: Նա նաև հանդիսականներին է ներկայացրել Հույն Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Տ. Մաքսիմոս Հաքիմ Պատրիարքին, որը ներկա է եղել այդ օրվա հոբելյանական հանդիսավոր տոնակատարությանը:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՂՊՏԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻԴԱՐՈՒՍԻ ԵՐԿՈՒ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻՆ

1983 թ. դեկտեմբերի 23-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Կահիրեում, Հելիոպոլսի Ղպտի Կաթողիկե Մայր եկեղեցում տեղի է ունեցել հանդիսավոր ս. պատարագ Նորին Ամենապատվություն Տ. Ստեփանոս Սիդարուս Պատրիարքի ծննդյան 80-ամյակի և կարդինալական աստիճան ստանալու 25-ամյակի առթիվ:

Պատարագի արարողությունից հետո եկեղեցուն կից հանդիսասրահում տեղի է ունե-

ցել ընդունելություն, որին ներկա են եղել պետական և եկեղեցական բարձրաստիճան անձնավորություններ, պաշտոնական հյուրեր և համայնքի ղեկավար անդամներ:

Նույն օրը, ժամը 13.30-ին, եկեղեցուն մոտ գտնվող համայնքային վարժարանի հանդիսասրահում Պատրիարքի հոբելյանի առթիվ հյուրերի պատվին տրվել է պաշտոնական ճաշկերույթ:

Թե՛ առավոտյան մատուցված ս. պատարագին և թե՛ պաշտոնական ճաշկերույթին ներկա է եղել նաև Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը: Ի թիվս այլ ճառախոսների Եգիպտոսի հայոց սրբազան առաջնորդը հրավիրվել է իր հարգանքի խոսքն ասելու: Նա հոբելյար Պատրիարքին ուղղված իր շնորհավորական ելույթում ասել է.

«Ձեր հոբելյանին բերկրալից առիթով Ձեզի կբերեմ եղբայրական ողջույնը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Վազգեն Ա Կաթողիկոսին, որ ի Հայաստան: Հոգևոր ուրախությունն ունեցած եմ Ձերդ Ամենապատվությունը վաղուց ճանչնալու: Դուք խոնարհության մեջ մեծ եք: Ձեր հմտությամբ, սըրբակյաց կյանքով բոլորին հանդեպ տածած խոր սիրով կնմանիք սկզբնական դարերու Աղեքսանդրիո Եկեղեցու աստվածաբան հայրերուն: Այսօր միայն Ձեր հոգևոր կավակները չէ որ ուրախ են, այլ նաև մենք Ձեզմով ուրախ ենք, որովհետև կես դար Աստուծո ծառայության գործին մեջ եղաք օրինակելի: Աստված կփառավորվի նաև ճշմարիտ հավատացյալներու կյանքով ու կենդանի քարոզությամբ: Կշնորհավորենք Ձեզ և կմաղթենք քաջառողջ երկար կյանք»:

Հոբելյար Պատրիարքը իր համալսարանական բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզում՝ մասնագիտանալով օրենսգիտության մեջ: Իր փայլուն ընդունակությունների և համառ աշխատասիրության շնորհիվ կարևոր վկայականներ ձեռք բերելուց հետո, երբ կարող էր աշխարհիկ կյանքում պատվավոր դիրքի և բարձր պաշտոնների տիրանալ, նա, անսալով իր կոչման ձայնին, նախընտրել է նվիրվել հոգևոր ասպարեզին: Որոշ տարիներ հետևելով աստվածաբանական դասընթացների և կրոնական կայուն գիտելիքներ ձեռք բերելով՝ ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական և նշանակվել դպրեվանքի ուսուցիչ, ապա՝ տեսուչ: Ցարդ ծառայում է Եգիպտոսում իբրև Պատրիարք-կարդինալ: Նա Եգիպտոսում կարդինալի աստիճան ստացող առաջին հոգևորականն է:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 584
ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ

Թերթերը՝ 96:— **Պրակները՝** 6:— **Մեծությունը՝** 20.3×16.8×1.2 սմ.:— **Նյութը՝** միջակ հաստությամբ թուղթ:— **Կազմը՝** կապույտ մոմլաթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կանաչավուն բարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն: —**Դատարկ թղթերը՝** 1ա—1բ և 14բ—96բ:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Արշակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):— **Ժամանակը՝** 1930-ական թթ.:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Գիրք Սաղմոսաց (Դաւթի):
Նօթեր:
Անուն:
Թ. 3բ.—Ա. Խօսողը:
Թ. 4ա.—Բ. Աստուծոյ ըմբռնումը սաղմոսներու մէջ:
Թ. 5ա.—Գ. Աստուածապետութիւնը երկրի վրայ:
Թ. 5բ.—Դ. Պաշտամունքը:
Թ. 7ա.—Ե. Աստուծոյ բարոյական պահանջները:
Թ. 7բ.—Զ. Իրենց վերաբերումը իրենց թշնամիներուն հանդէպ:
Թ. 9բ.—Է. Ըստ կարգ մը գրողներու, Հրեաները ուտար ազգերու նկատմամբ ունեն ուրիշ վերաբերում մը, որ կարելի է կոչել Քարոզչական վերաբերում:
Թ. 10բ.—Ը. Ուրիշ գրողներու համար, իսրայէլացիներու վերաբերումը այլազգի (նե)ռու նկատմամբ ուրիշ կողմ մըն ալ ունի...

№ 585
ԿԱՆՈՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 100:— **Պրակները՝** 4:— **Մեծությունը՝** 19.8×15.8×1.1 սմ.:— **Նյութը՝** բարակ թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական դեղնավուն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ և 49ա—10բ:— **Տողերը՝** 21:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1956 թ.:— **Վայրը՝** անհայտ (բայց հավանաբար Երուսաղեմ):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Ձեռնադրութեան կանոնը Սսոյ Մաշտոցին մէջ:
Թ. 9ա.—Օծումը ըստ Էջմիածնի Մաշտոցին: Տպագ. 1876=ՌՅԻԵ:
Թ. 11ա.—Կանոնագիտական դիտողութիւններ:
Թ. 14բ.—Աշխարհականութիւն:
Թ. 16բ.—Եկեղեցական իրաւունքներ:
Թ. 18բ.—Պատրաստութիւն:
Թ. 23ա.—Եկեղեցականի պատրաստությունը այսօր:
Թ. 27բ.—Եկեղեցական իրեր և իրաւունքներ:
Թ. 28բ.—Խորհուրդներ:
Թ. 32բ.—Մկրտութիւն:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից և 1984 թվականի № Բ-ից:

Թ. 34ա.—Ա. Մկրտութեան նիւթը:
Թ. 35ա.—Բ. Մկրտող պաշտօնեային կանոնական հանգամանքը:
Թ. 36ա.—Կանոնական հրահանգներ:
Թ. 38ա.—Գ. Մկրտութեան տեղը:
Թ. 39ա.—Դ. Մկրտութեան կերպերը:
Թ. 42ա.—Ե. Մկրտութեան կանոնական հանգամանքը:
Թ. 44ա.—Զ. Կնքահայրը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 48բ.—Վերջ-վերջ-վերջ:
12—9—(19) 56-ին սկսայ:
23—9—(19) 56-ին աւարտեցի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կապմի վրա առաջին երեսին գրված է)
(Շար.)
Կանոնագիտութեան:

№ 586
ՊԱՏԱՐԱԳ

Թերթերը՝ 46:— **Պրակները՝** 5:— **Մեծությունը՝** 31.7×24.6×1.1 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կապմը՝** սրճագույն մոմլաթով ծածկված ստվարաթուղթ, որի վրա ճնշումով պարդեր են նկարված:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 31ա, 38բ—46բ:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյան (1925—1980):— **Ժամանակը՝** 1952 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Խորհուրդ խորին:
Թ. 2ա.— Խորհուրդ խորին:
Թ. 4բ.— Շարական խնկարկության:
Թ. 6ա.— Ի խաղաղ գնացք:
Թ. 8ա.— Իսկ ի տօնս Ծննդեան, Զատկի և Յիսնանց:
Թ. 10ա.— Իսկ ի տօնս Վարդավառին, Հոգեգալստեան, Համբարձման և Աստուածածնի:
Թ. 32ա.— Օրհնութիւն երից մանկաց:
Ճաշու շարական ճրագալույցի Ծննդեան:
Թ. 32բ.— Ճաշու շարական Ծննդեան:
Թ. 33ա.— Ճաշու շարական Յարութեան և Յիսնանց:
Թ. 34ա.— Սրբասացութիւնք Յիսնանց և Խաչի:
Թ. 35բ.— Ծննդեան, Աւետեաց, Վարդավառի, Աստուածածնայ:
Թ. 36բ.— Շարական հանգստեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Կոմիտաս վարդապետ (Տեր-Ստեփանյան):
25—4—(19) 52:

№ 587
ՊԱՏԱՐԱԳ
(Tenore)

Թերթերը՝ 26:— **Պրակները՝** 2:— **Մեծությունը՝** 29.5×21.5×0.6 սմ.:— **Նյութը՝** միջակ հաստությամբ մաքուր թուղթ:— **Կապմը՝** սրճագույն մոմլաթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 15ա, 18բ և 26բ:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** շուրջ 1960-ական թթ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Tenore
Մ. Եկմալեան
Պատարագ:
Թ. 14բ.— Ճաշու շարականք (Զատկի):
Թ. 15բ.— Օրհնեցեք:
Թ. 16բ.— Տեր Կեցո:
Լռեց:
Թ. 17ա.— Hallelujah:
Թ. 19ա.— Tenore
Կոմիտաս
Պատարագ:
Թ. 20ա.— Բարեխոսությամբ:
Թ. 20բ.— Սուրբ Աստված:
Տեր ողորմյա:

№ 588
ՊԱՏԱՐԱԳ
(Soprano)

Թերթերը՝ 26:— **Պրակները՝** 2:— **Մեծությունը՝** 29.5×22×0.6 սմ.:— **Նյութը՝** միջակ հաստությամբ մաքուր թուղթ:— **Կապմը՝** սրճագույն մոմլաթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** չկան:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1960-ական թթ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Soprano
Մ. Եկմալեան
Պատարագ:
Թ. 14բ.— Ճաշու շարական (Զատկի):
Թ. 15բ.— Օրհնեցէք:
Թ. 16ա.— Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
մշ (ակումը) Օհան Դուրյանի:
Թ. 17ա.— Soprano
Կոմիտաս
Պատարագ:
Թ. 17բ.— Ի հասարակ ավուրս:
Թ. 18ա.— Բարեխոսությամբ:
Թ. 18բ.— Տեր ողորմյա:

№ 589
ՊԱՏԱՐԱԳ
(Alto)

Թերթերը՝ 26:— **Պրակները՝** 2:— **Մեծությունը՝** 29.3×21.5×0.6 սմ.:— **Նյութը՝** միջակ հաստությամբ մաքուր թուղթ:— **Կազմը՝** սրճագույն մոմլաթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակներ՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 26ա:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1960-ական թթ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Alto
Մ. Եկմալեան
Պատարագ:
Թ. 15բ.— Ճաշու շարական (Զատիկի):
Թ. 16ա.— Օրհնեցէք:
Թ. 17ա.— Alto
Կոմիտաս
Պատարագ:
Թ. 17բ.— Ի հասարակ ավուրս:
Թ. 18ա.— Բարեխոսությամբ:
Թ. 18բ.— Սուրբ Աստված:
Տեր ողորմյա:

№ 590
ՊԱՏԱՐԱԳ
(Basso)

Թերթերը՝ 28:— **Պրակները՝** 2:— **Մեծությունը՝** 29.6×22×0.6 սմ.:— **Նյութը՝** միջակ հաստությամբ մաքուր թուղթ:— **Կազմը՝** սրճագույն մոմլաթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 17բ—18բ:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1960-ական թթ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Basso
Մ. Եկմալեան
Պատարագ:
Թ. 15բ.— Ճաշու շարականք (Զատկի):
Թ. 16բ.— Էջմիածինն ի Հօրէ:
Թ. 17ա.— Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
Թ. 19ա.— Basso
Կոմիտաս
Պատարագ:
Թ. 19բ.— Ի հասարակ ավուրս:
Թ. 20ա.— Բարեխոսությամբ:
Թ. 20բ.— Սուրբ Աստուած:

№ 591
ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ 106:— **Պրակները՝** 6:— **Մեծությունը՝** 28.5×20.1×2.3 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:— **Կազմը՝** սև մոմլաթով ծածկված հաստ ստվարատուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 14բ, 26բ և 106բ:— **Տողերը՝** 15:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խաչեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 20-րդ դարի սկիզբ:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** 1955 թ. Հ. Քեոսեյանը ձեռագիրը նվիրել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցուն, որտեղից այն հետագայում փոխադրվել է Մայր Աթոռ: Ձեռագիրն այժմ ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ժամագիրք և տաղարան:
Թ. 2ա.— Հասարակ կիւրակէից:
Թ. 2բ.— Ծննդեան Աստծնի:
Կանոնագլուխք ըստ ութ ձայնից:
Թ. 5ա.— Կանոնագլուխ, բուն Բարեկենդանի և Նոր Կիւրակէին:
Թ. 5բ.— Երգ Տեառն Ներսեսի հայոց Կաթողիկոսի ասացեալ յաղագս մեծի ուրբաթու գիշ. Աւետարանացն:
Թ. 7ա.— Վասն Ծննդեան կենի Տաճարի Աւետարանին:
Թ. 7բ.— Քարով Ծննդեան:
Թ. 8բ.— Քարով Ծննդեան:
Թ. 9բ.— Քարով:
Թ. 10ա.—Ալէլուք Ծննդեան Տեառն:

Թ. 11ա.— Թագաւոր յաւիտեան:
Թ. 17բ.—Ալէլուք Զատկի:
Թ. 18ա.— Ալէլուք Խաչի:
Թ. 18բ.— Ալէլուք ի տօնի հրեշտակապետաց:
Թ. 19բ.— Երգ իւղաբերից Աւետարանին ի մեծահանդէս կիւրակէից:
Թ. 22ա.— Երգ իւղաբերից Աւետարանին հասարակ կիւրակէից:
Թ. 24բ.— Հանդէս դպրութեան:
Թ. 25բ.—Երգ նախքան վմեղեդին:
Թ. 26ա.— Մեղեդի ննջեցելոց:
Թ. 27ա.— Շարական խնկարկութեան:
Թ. 28բ.— Մեղեդի Ծննդեան Աւծծնի:
Թ. 29բ.— Տաղ և մեղեդի Ծննդեան:
Թ. 30բ.— Մեղեդի Ծննդեան Աստուածածնի:
Թ. 31ա.— Մեղեդի Յարութ(ան), Տէրութ(ան), Համբարձման:
Թ. 31բ.— Մեղեդի Յարութ(ան) և Ծաղկազարդի:
Թ. 32բ.— Տաղ և մեղեդի Համբարձման և Վարդավառի:
Թ. 33ա.— Մեղեդի Յարութեան (նաև 34բ, 35ա, 35բ, 39ա, 39բ, 40ա և 41ա):
Թ. 33բ.— Տաղ և մեղեդի Յարութեան (34ա):
Թ. 36բ.— Մեղեդի Ս. Խաչի:
Թ. 37ա.— Մեղեդի առաքելոց Պետրոսի և Պօղոսի:
Թ. 37բ.— Մեղեդի Ղևոնդեաց և Մարտիրոսաց:
Թ. 38ա.— Մեղեդի Վարդավառի:
Թ. 38բ.— Տաղ խաչի:
Թ. 39բ.— Մեղեդի եկեղեցւոյ:
Թ. 40ա.— Մեղեդի Հայրապետաց:
Թ. 41բ.— Մեղեդի Ծննդեան:
Թ. 42ա.— Տաղ և մեղեդի Ծննդեան Աւետեաց:
Թ. 42ա.— Մեղեդի Յարութեան:
Թ. 42բ.— Տաղ և մեղեդի խաչի:
Թ. 43բ.— Ի ծննդեան Ս. Կուսին:
Թ. 44ա.— Շարական Աւծծնի:
Շարական թափորի ծննդեան:
Թ. 44բ.— Շարականք թափորի Յարութեան:
Թ. 49ա.— Շարական թափորի խաչի (50ա):
Թ. 50բ.— Շարական թափորի:
Թ. 51բ.— Տաղ Յարութ(ան) թափորի:
Թ. 52ա.— Ս. Պատարագ (եռաձայն):
Թ. 64ա.— Սրբասացութիւն Ծննդեան, Աւետեաց, Աւծծնի և Վարդավառի:
Թ. 64բ.— Կիւրակէի, Ծաղկազարդի, Եկեղեցւոյ և Հրեշտակապետաց:
Պահոց և ննջեցելոց:
Թ. 65ա.— Մարտիրոսաց:
Թ. 65բ — Առաքելոց, Մարգարէից, Հայրապետաց:
Թ. 66ա.— Վասն Զատկի:
Թ. 66բ.— Ս. Զատկի:
Թ. 67ա.— Ամէն հայր Ս(ուրբ):
Թ. 75ա.— Երգեցողութիւն Սրբոյ Պատարագի:
Թ. 87բ.— Թաւորի շարական:
Տաղ Յարութեան:
Թ. 88ա.— Ս. Պատարագ:
Թ. 89բ.— Երգք Արևագալի:
Թ. 90ա.— Երգ կկնի աղաղակեցէի սաղմոսին:
Թ. 91ա.— Երգ կկնի Աւծ Աւծ իմ սաղմոսին:
Թ. 92բ.— Երգ կկնի «Տէր հովուեսցէ» սաղմոսին:
Թ. 94բ.— Երգ Կիւրակամտից:
Թ. 95բ.— Հասարակ Կիւրակամտից:
Թ. 96ա.— Վասն Կիւրակամտից հանդիսաւոր աւուրց:
Թ. 96բ.— Վերացման Ս. Խաչի:
Ս. Խաչի:
Թ. 97ա.— Մեծի ուրբաթի երեկոյին ի ծունր իջեալ:
Յերեկոյին վերացման Ս. Խաչին յելանելն ի թափոր:
Յարութ(ան) և Գալստեան:
Թ. 97բ.— Խաչի Աւագ ուր(բաթ) և ԼԲ գիշերին:
Թ. 98ա.— Համբարձի շաբաթ երեկոյեան:
Թ. 99ա.— Շարական մատնութեան:
Թ. 100ա.— Սաղմոս ողբաձայն Յովհաննու Աւետարանչին:
Թ. 100բ.— Սրբասացութիւն մեծ պահոց (Կիւրակէից):
Թ. 101ա.— Տաղ Խաչի:
Մեղեդի Հոգեգալստեան:
Թ. 101բ.— Տաղ Յարութեան:
Թ. 102բ.— Տաղ Ս. Աստուածածնայ:
Թ. 103բ.— Տաղ Խաչի:
Թ. 104ա.— Անբաժանելի:
Թթ. 105ա—105բ.— Ցանկ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ.1բ.— Ս(ուրբ) Սարգիս Եկեղեցւոյ
Նուիրուած է հանգուցեալ
Իսկէնտէր Տէր Արսենեանի վաւակի կողմէն:
Յ. Քէօսէյան

1955 Փետրվար 14
Երեվան:

№ 592
ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ 15:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 20.5×14.7×0.2 սմ:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 7բ—13բ, 15բ:— **Տողերը՝** 9:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խաչեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1932 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Թագաւոր յաւիտեան:
Թ. 14ա.— Ողբերգ ի բերանոյ Տեառն Յիսուսի:
Թ. 14բ.— Ողբ ի բերանոյ Տիրամօրն:

№ 593
ՊԱՏԱՐԱԳ

Թերթերը՝ 21:— **Պրակները՝** 3:— **Մեծությունը՝** 23.6×18×0.6 սմ.: **Նյութը՝** նոտայի դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** սրճագույն թղթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** չունի:— **Տողերը՝** 10:— **Գծումները՝** նոտայի թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց:
Թ. 1բ.— Սրբոյ Աւետարանի:
Թ. 2ա.— Աւետարան:
Թ. 5ա.— Սրբասացութիւն հրեշտակային:
Թ. 7ա.— Հանդիսաւոր օրերու մէջ:
Թ. 10ա.— Եւ ըստ բոյոյ ի քոյոց:

№ 594
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ

Թերթերը՝ 381:— **Պրակները՝** 41, անկանոն ծավալներով:— **Մեծությունը՝** 21.8×17.5×3.8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած միջակ հաստությամբ թուղթ:— **Կազմը՝** սև թղթով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կանաչավուն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 135ա—135բ, 162ա—163բ, 169ա, 170բ, 202բ—203բ, 216բ—217ա, 231բ—232ա, 245բ, 265ա—265բ, 279բ—280ա, 299բ, 324բ—325ա:— **Տողերը՝** անհամաչափ, 9—12:— **Գծումները՝** չունի:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր նոտաներ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչները՝** բազում մարդիկ են, այսպես՝ Անուշավան Տեր-Խորենյան (Թ. 11բ), Բյուլանդ Լուսյան (200ա), Խաչիկ Ս. Գավաձյան (202ա), Այնթապցի Հմայակ (217բ), Գ. Լ. (245ա), Վ. Գ. Կ. (299ա) և Ս. Մ. Հ. (381ա):— **Պատվիրատուն՝** Եղիշե Եպիսկոպոս Դուրյան:— **Ժամանակը՝** 1901 թ.:— **Վայրը՝** Արմաշի վանք (Թուրքիա):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը թեպետև խմորատիպով բազմացված մեկ օրինակն է, սակայն որպես պատմության գիրկն անցած Արմաշի նշանավոր դպրեվանքի բեղմնավոր գործունեության մեկ մասունքը և շատ արժեքավոր երաժշտական մի գործ, տալիս ենք Մայր Աթոռի ձեռագրաց ցուցակում:

Ձեռագիրը պարունակում է բազմաթիվ տաղերի և շարականների, ինչպես նաև ամբողջ Պատարագի ձայնագրությունները, որոնք հորինված են Համբարձում Չերչյանի, Նիկողայոս Թաշճյանի, Արիս աղայի, Չիլինկիրյանի, Լ. Խանճյանի, Գ. Մեհտերյանի, Գ. Անտառիկյանի, Պապայի և այլ երաժիշտների կողմից:

Այստեղ տրվում է ձայնագրությանց վերնագրերի մեկ մասը միայն.

Թ. 2ա.— Ծննդեան, Զատկի և տաղաւարաց:
Երգ Իղաբերից աւետումի:
Թ. 12ա.— Ալելուք Ծննդեան Տեառն:
Թ. 27ա.— Հանդէս դպրութեան:
Թ. 37ա.— Մեղեդի Յարութեան:
Թ. 43բ.— Տաղ և մեղեդի Վարդավառի:
Թ. 47ա.— Թափօրի շարական Խաչի:
Թ. 62ա.— Երգեցողութիւն Սրբոյ Պատարագի:
Թ. 88ա.— Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցի:
Թ. 136ա.— Կանոն բուն Բարեկենդանի:
Թ. 146ա.— Կանոն Երրորդ Կիւրակէի աղուհացից:
Թ. 214ա.— Կանոն Ս. Զատկի:
Թ. 256ա.— Հարց հինգերորդ Յարութ(եա)ն:
Թ. 300ա.— Ողորմեա:
Թ. 310ա.— Կանոն նախորդ երեկոյի Հոգեգալուստեան:
Թ. 317ա.— Մանկունք ստեղի, մանկանցն Բեթղեհմի:
Թ. 330ա.— Կանոն վերացման Ս. Խաչի:
Թ. 337բ.— Կանոն գիւտի Սրբոյ Խաչին:
Թ. 343բ.— Ստեղի մանկունք Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի:
Թ. 354ա.— Կանոն Ս. Յակոբայ:
Թ. 357բ.— Կանոն Սրբոյն Դաւթի մարգարէին:
Թ. 359ա.— Կանոն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի:
Թ. 364ա.— Կանոն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի:
Թթ. 2ա—373բ.— (Ձայնագրությունները):
Թթ. 374ա—381ա.— (Նյութերի ամբողջական ցանկը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Եկեղեցական երգեցմունք
(Շարական, Ժամագիրք, Տաղարան)
Բազմագրեալք
Ի պէտս աշակերտաց Դպրեվանուց
Հրամանաւ
Վերատեսչի իւրեանց
Տ. Եղիշէ Եպիսկ(ոպոս) Դուրեան
ըստ ձայնագրութեան
Համբարձումայ Չերչեան
Երաժշտապետի
1901—ՌՅԾ
Արմաշ:

Թ. 11բ.— Ընդօրինակեց Անուշաւան Տ(էր) Խորէնեան:
Թ. 200ա.— Ընդօրինակեաց Բիւլանդ Խտջեան:
Թ. 202ա.— Ընդօրինակեաց Խաչիկ Ս. Գաւալճեան:
Թ. 213բ.— 1 Յունուար 1901:
Թ. 217բ.— Ընդօրինակեց Այնթապցի Հմայեակ: 1900 Ապրիլ 4:
Թ. 245ա.— Գ. Լ.:
Թ. 299ա.—Ընդօրինակեաց Վ. Գ. Կ.:
Թ. 381ա.— Ս. Մ. Հ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա դրսից գրված է)
Շարական:
(Կազմի ներսի կողմը գրված է)
Ղ. և Զ.
Ղևոնդ և Զարեհ:
(Սկզբի պահպանակի վրա գրված է)
Յակոբ Թորոյեան:
1897 ....
Մկրտիչ Սալեան:
Հայկ Կառատպպեան:
Խաչիկ ...եան:
Թ. 1ա.— Վայր:
Թ. 94բ.— Դանիէլ մարգարէ:
Դանիէլ մարգարէն օրինեցէք գովեցէքն է:
Թ. 214ա.— Պահա .... Ժամկոչեան ..... Վ. Տ.:

№ 595
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Թերթերը՝ 25:— **Պրակները՝** 3, Ա՝ 11, Բ՝ 12 և Գ՝ 2:— **Մեծությունը՝** 30.4×21.5×0.6 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը՝** սըրճագույն կաշի, որի երկու երեսի վրա ճնշումով բազմաթիվ զարդեր են նկարված:— **Պահպանակները՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, 8-րդ թերթի մեկ մասը կտրատված է:— **Գրությունը՝** երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 25բ:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ձեռագրի ամբողջ տեքստը առնված է ուղղանկյուն շրջանակի մեջ և շրջապատված գունավոր սիրուն զարդերով: Կան մի շարք գեղեցիկ թռչնագրեր և մի հատ էլ մեծ կապույտ զարդագիր: Մատյանի սկզբում կա սիրուն մի խորան (2ա), իսկ հինգ էջերում (4բ, 12ա, 16բ, 18ա և 20բ) էլ կան Ս. Պատարագի վանական պահերը ցույց տվող գունավոր և գեղեցիկ հինգ տեսարաններ:— **Գրիչը՝** Մարկվանցի Եղիա սարկավագ:— **Պատվիրատուն՝** Աստապատցի Արզուման:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1714 թ.:— **Վայրը՝** Եվդոկիա (Թոքատ):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 25ա.— (Փ) առք Հօր համագոյ ս(ուր) բ Երրորդութե(ա)ն և անբաժանելի միա(ստուա) ծութե(ա)ն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ի ծագմանէ բանին Ա(ստուծո)յ լուսաւորեալք և ի շնորհաց բաշխի հոգոյն սրբոյ մաքրապարդեալք ի մերոց պետաց և հոգեկիրարանց ի Հայկազունեաց սեռից ուղղափառ Ա(ստուա) ծաբանաց ներհմտացե(ա)լ սահմանեալ ի հրճուանս եկեղեցական դասուց: Արդ շնորհիւ Տ(եառ)ըն կատարեցաւ ս(ուր)բ գրգուկս որ կոչի Խորհրդատուն ս(ուր)բ Պատարագիս ի թվին ՌՃԳԿ (1714) ամին օգոստոսի ԻԵ (25). ի քաղաքիս Եւդոկիոյ, որ վերաձանի Թոխաթ, ս(ուր)բ Պարսամայ եկեղեցին, ձեռամբ Մարկվանցի սարկաւագի և Եղիայ գրչի. ի խնդրոյ բարեմիտ Աստապատցի պարոն Արզումանին և ի հոգւոյ համայն նընջեց(ել)ոցն հոգոյն. ևս առաւել եղբօրն Նուրդուլին ևս յիշել աղաչեմ ով քահանայք. առաջի անմահ գառին Ա(ստուծո)յ: Եւ եդ յիշատակ վայս խորհուրդս ի Թռնովա քաղաքն Ս[ուր]բ Ա(ստուա) ծածնի տաճարին և անդ մնասցէ: Եւս կրկին աղաչեմ ս(ուր)բ հարցն մերոց խնամով պահեսջիք ի կրակէ, ի ջրային տեղւոջէ, և ի թքոտ ձեռօքն թուղթ մի շրջեսցէ և այնպիսիքն օրինեալ լինին Ա(ստուծո)յ և ամ(ենայն) սրբոց ամէն: Հոգոց հանգուցելոց Քրիստոս որդի Ա(ստուծո)յ. Հայր մեր որ ...:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.—Ես Տէ(ր) Ած ...:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАРТ 1984 г.)

1. Проповедь Верховного Патриарха и Католикоса Всех Армян Вазгена I по случаю смерти патриаршего посланника в Западной Европе и предстоятеля армянской епархии во Франции архиепископа Серовбе Манукяна, произнесенная в Кафедральном соборе 19 февраля 1984 г. (стр. 3—4).

2. Речь Его Святейшества Вазгена I, произнесенная по случаю смерти архиепископа Серовбе Манукяна (18 февраля 1984 г.) (стр. 5—6).

3. Телеграмма с соболезнованиями Его Святейшества Вазгена I по случаю смерти архиепископа Серовбе Манукяна (9 февраля 1984 г.) (стр. 7).

4. Телеграммы с соболезнованиями в адрес Верховного Патриарха и Католикоса Всех Армян по случаю смерти архиепископа Серовбе Манукяна. Ответное послание Его Святейшества (стр. 8—10).

5. Памяти архиепископа Серовбе Манукяна (Некролог) (стр. 11—13).

6. Последнее помазание и похороны архиепископа Серовбе Манукяна (стр. 14—15).

7. Ответы Святейшего Патриарха и Католикоса Всех Армян Вазгена I на вопросы главного редактора газеты «Арарат», выходящей в Бейруте (21 марта 1984 г.) (стр. 16—19).

8. **Диакон Вардкес Мкртчян**—Торжества в Первопрестольном Эчмиадзине по случаю дня св. Вартананц и тезоименитства Его Святейшества Вазгена I (1 марта 1984 г.) (стр. 20—23).

9. Посещение Его Святейшеством Вазгеном I церквей: св. Геворка в Норагавите (16 марта 1984 г.) и св. Зоравора в Ереване (30 марта 1984 г.) (стр. 24—26).

10. Визит священнослужителей Араратской епархии в г. Эчмиадзина Его Святейшеству Вазгену I по случаю праздника Гевондянц (стр. 27).

11. **Религиозная жизнь** (хроника): краткие сообщения о литургиях, проповедях и прочих событиях, имевших место в Первопрестольном Эчмиадзине в марте 1984 г. (стр. 28—29).

12. Смерть поэта Ованеса Шираза. Телеграмма с соболезнованиями от 16 марта 1984 г., адресованная Его Святейшеством Вазгеном I семье и родственникам покойного поэта (стр. 30—31).

13. **Проф. Вараздат Арутюнян**—История строительства, предпринятого Первопрестольным Эчмиадзином в 1956—1980 гг. в период правления Католикоса Всех Армян Вазгена I (исследование) (стр. 32—38).

14. **Епископ Анания Арабаджян**—Религиозная этика историка Егише (исследование) (стр. 39—41).

15. **Верховный архимандрит, докт. Завен Арзуманян**—Обряд «Аревагал» (исследование) (стр. 42—43).

16. **Священник, докт. Нерсес Нерсесян**—Основы религиозного учения апостола Павла (исследование) (стр. 44—50).

17. **Иеромонах Шнорк Багдасарян**—Очередной номер детского журнала «Зартир!» («Пробудись!»), выходящего в Нью-Йорке (рецензия) (стр. 51—52).

18. ЭКУМЕНИЧЕСКАЯ ЖИЗНЬ

а) Торжественное заседание и лекции по поводу 100-летнего юбилея издательства св. Писания в Египте (декабрь 1983 г.) (стр. 53).

б) Торжества, посвященные двойному юбилею патриарха Коптской церкви Стефаноса Сидаруса (23 декабря 1983 г., Каир) (стр. 53—54).

19. Список новых рукописей, поступивших в Первопрестольный Эчмиадзин (№№ 584—595) (стр. 55—60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(MARCH 1984)

1· The sermon of His Holiness given in the Holy Cathedral, on the occasion of the death of Archbishop Serovpe Manoukian, the Patriarchal delegate of Western Europe and primate of the Armenians of France, 19th February 1984 (pages 3—4).

2. The address given of His Holiness on the occasion of the funeral of Archbishop Serovpe Manoukian, 18th February 1984 (pages 5—6).

3. The cable of condolence of the Catholicos of all Armenians on the occasion of the death of Archbishop Serovpe Manoukian, 9th February 1984 (page 7).

4. Cables of condolence received by the Catholicos of all Armenians on the occasion of the death of Archbishop Serovpe Manoukian and the answer cables of thanks of His Holiness (pages 8—10).

5. Necrology of Archbishop Serovpe Manoukian (pages 11—13).

6. The extreme unction and the funeral procession of Archbishop Serovpe (pages 14—15).

7· The answers of Holiness to the questions of the editor of newspaper „Ararat", which is published in Beirut, 21st March 1984 (pages 16—19).

8. Deacon **Vardges Mkertchian**—Celebration of the day of Saint Vardan in the Holy See, 1st March 1984 (pages 20—23).

9. The visit of His Holiness to the churches of Yerevan: St. George (16th March 1984) and St. Zoravor (30th March 1984)—(pages 24—26).

10. The visit to His Holiness of the priests of the Ararat'ian diocese and the city of Etchmiadzin, on the occasion of the feast of Ghevondians, 28th February 1984 page 27).

11. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of March (pages 28—29).

12. Death of poet Hovhannes Shiraz and on this occasion the cable of condolence dated 16th March 1984 sent by His Holiness to the family of the deceased poet (pages 30—31).

13. **Varazdat Harutiunian**—The history of the architectural activity of the Holy See of St. Etchmiadzin, during the patriarchate of His Holiness Vasken I, the Catholicos of all Armenians (1956—1980) (study)—(pages 32—38).

14. **Bishop Ananya Arabadjian**—The ethics of Yeghishe's theology (study)—(pages 39—41).

15. **Reverend Dr. Zaven Arzumanian**—The divine service of „Arevagal" (study)—(pages 42—43).

16. **Father Dr. Nerses Nersessian**—The principles of Apostle Paul's theology (study)—(pages 44—50).

17. **Reverend Shnork Baghdassarian**—The new edition of „Zartir", a periodical which is published in New York (literary critical (pages 51—52)

18. **Ecumenical life**

a) Jubilary festivity and lectures in Egypt on the occasion of the 100-th anniversary of the foundation of the Bible Society December 1983 (page 53).

b) Jubilary festivity devoted to the two jubilees of His Grace Stephanos Sidaroos, the Patriarch of the Coptic Catholic Church, 23rd December 1983, Cairo (page 53).

19. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 584—595 (pges 55—60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MARS 1984)

1. Homélie de Sa Sainteté prononcée le 19 février 1984 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion du décès de l'archevêque Sérovpé Manoukian, délégué patriarcal pour l'Europe Occidentale et prélat des Arméniens de France (pages 3—4).

2. Adresse de Sa Sainteté prononcée le 18 février 1984 à l'occasion des funérailles de l'archevêque Sérovpé Manoukian (pages 5—6).

3. Télégramme de condoléances de Sa Sainteté à l'occasion du décès de l'archevêque Sérovpé Manoukian (page 7).

4. Télégrammes de condoléances adressés à Sa Sainteté à l'occasion du décès de l'archevêque Sérovpé Manoukian (pages 8—10).

5. Nécrologie de l'archevêque Sérovpé Manoukian (pages 11—13).

6. Extrême-onction et funérailles de l'archevêque Sérovpé Manoukian (pages 14—15).

7. Réponses de Sa Sainteté aux questions du rédacteur en chef du journal „Ararat", quotidien arménien publié à Beyrouth (21 mars 1984)—(pages 16—19).

8. **Diacre Vartguès Mekertchian**—Célébration de la Journée de saint Vardan au Saint-Siège d'Etchmiadzine (1er mars 1984)—(pages 20—23).

9. Visite de Sa Sainteté à l'église St. Guévorg (16 mars 1984) et à l'église St. Zoravor (21 mars 1984), à Erévan (pages 24—26).

10. Visite des prêtres du diocèse d'Ararat et de la ville d'Etchmiadzine à Sa Sainteté Vasken Ier à l'occasion de la fête de Ghévondiants (28 février 1984)—(page 27).

11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de mars (pages 28—29).

12. Décès du poète Hovhannès Chiraz. Télégramme de condoléances du 16 mars 1984 de Sa Sainteté adressé à la famille et aux proches parents du poète défunt (pages 30—31).

13. **Prof. Varazdat Haroutiunian**—Histoire des travaux de construction réalisés par le Saint-Siège d'Etchmiadzine dans les années 1956—1980 du patriarcat de Sa Sainteté Vasken Ier (suite)—(pages 32—38).

14. **Evêque Anania Arabadjian**—„L'éthique dans la théologie de l'historien Yéghiché" (étude)—(pages 39—41).

15. **Rév. Dr. Zaven Arzoumanian**—„L'office d'Arévagal" (étude)—pages 42—43).

16. **Rév.Dr. Nersès Nersessian**—„Les fondements de la théologie de l'apôtre Paul" (étude)—(pages 44—50).

17. **Père Chenorhk Baghdassariaa**—„Le nouveau numéro du périodique d'enfants „Zartir" publié à New York (compte rendu)—(pages 51—52).

18. **Vie oecuménique**

a) Festivités jubilaires et conférences organisées au mois de décembre 1983 en Egypte à l'occasion du centenaire de la fondation de l'Alliance Biblique Universelle.

b) Festivités qui ont eu lieu le 23 décembre 1983 au Caire et qui ont été consacrées au ubilé du cardinal Stéphanos Sidarus, patriarche jde l'Eglise catholique copte (page 53).

19. **Noubar Mikaélian**—Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 584—595 (pages 55—60).

ՀԱՅԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը արտասանված Մայր տաճարում Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի մահվան առթիվ 3
Ամենայն Հայոց կաթողիկոսի սրտի խոսքը Տ. Սերովբե արքեպիսկոպոսի թաղման առթիվ 5
Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցական հեռագիրը Տ. Սերովբե արքեպիսկոպոսի մահվան առթիվ 7
Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի մահվան առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված ցավակցական հեռագրեր 8
Հանգիստ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի 11
Տ. Սերովբե արքեպիսկոպոսի վերջին օծումն ու հուղարկավորությունը 14
Վեհափառ Հայրապետի պատասխանները Բեյրութում հրատարակվող «Արարատ» թերթի խմբագրի հարցերին 16
ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 20
Վեհափառ Հայրապետի այցը Նորագավթի Ս. Գևորգ և Երևանի Ս. Զորավոր եկեղեցիներ 24
Արարատյան թեմի և Էջմիածին քաղաքի քահանա հայրերի այցելությունը Հայոց Հայրապետին 27
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 28
Մահ բանաստեղծ Հովհաննես Շիրազի 30
ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956—1980) 32
ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Եղիշեի աստվածաբանության բարոյագիտությունը 39
ԴՈԿՏ. ԶԱՎԵՆ Ծ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ—Արևագալի ժամերգությունը 42
ԴՈԿՏ ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ—Պողոս առաքյալի աստվածաբանության հիմունքները 44
ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Մանկական «Զարթիր» պարբերականի նոր համարը 51
Հոբելյանական հանդիսություն և դասախոսություններ Ս. Գրոց հրատարակչության հիմնադրման հարյուրամյակի առթիվ 53
Հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Ղպտի Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Տ. Ստեֆանոս Սիդարուսի երկու հոբելյաններին 53
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 55
„Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 3.04.1984 թ.: Ստորագրված է տպագրության 26.04.1984 թ.:
Տպագիրական 4 մամուլ+5 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 275

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.